777
ن I.5

ԾԻԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՒՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Ե՞ յորժամ մարդիկոսք և խոսպովանողք և քապելք նովա՞ գիտանին, նովա՞ օրհնի ալիքարհն ամենայն, նովա՞ օրհնին և գովայ նոցա յաճա՞ն, նովա՞ գիտասցեն ե՞ բիրտասարդք նոցա ի սրբո՞ւթիւն, նովա՞ հասնեսցեն ձերք նոցա յիմաստո՞ւթիւն։ Նովա՞ սատանին եկեսցի նոցա զմարդասիրո՞ւթիւն, նովա՞ անվանի գո՞ն յԱստուծոյ ի սիրոյ ճոխո՞ւրին՝ լինել և խաղաղո՞ւթիւն տալ բոլոր աշխարհին։ Նովա՞ եկեղեցիքն պարծին էրբե՞ փաղ և խորհրդական գինուոր, նովա՞ վիայարանքն զարդարին, նովա՞ և վիայքն ցնծասցեալ բերիրին։ ՆՈՎԱՒ ԵՒ ԴԱՇՏՆ ԱՒԱՐԱՅՐԻ ՊԱՅԾԱՌԱՅԵԱԼ ԾԱՂԿԱԼԻՑ ԼԻՆԻ, ալ յանդրե՞ աբեր ամոյ այլ ի սո՞ւբ և յարբե՞նաբանա՞ վիայից ցանկալ և յրատեալ սպիտակո՞ւթիւնք սո՞ւբ սպիրացն։ Յորժամ խոսեսցեն ամենավարսակ սրբ խոսպովանողքն զլայնարարաց գեղք պարերազմն, յորժամ ճենդրանի մարդիրոս ընդ նա՞ զրքեսցի, ճենդրանի սա՞ ճենդրանիս երրեալ ամենայն ալիքարհն երրին լինի ճենդրանո՞ւթիւն։

ԵՂԻՇԵԻ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԱՅՆ ՀԱՅՈՑ· ԵՐԵՍ 302-303. ԸՍՏ ԱՆՁԵՒԱՑԵԱՅՆ ՕՐԻՆԱԿԻ։

Ա· ՀԱՏՈՐ ՏԱՐԻ Ա·

1866

Կ· ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ· ՔԻՒՐՔՃԵԱՆ
ՓԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ ԹԻՒ 19.

ՓԻԼՆ
ԱԻԱՐԱՅՐԻ

Ա· ՏԱՐԻ 1866 ԹԻՒ Ա·

ՅՈՒՆՈՒԱՐ

ՈՂՋՈՅՆ ՔԵԶ ՀԱՅՈ՛Ց ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ողջոյն քեզ Հայո՛ց ժողովուրդ, հանուր Արեւելցւոց մէջ աղնուականը՝ ազդայնութեամբ, նախնականը՝ պատմական կեանքով, բարոյականը՝ քրիստոնէութեամբ, ուսումնականը՝ հին և նոր դրականութեամբ, ազատականը՝ հողւոյ նահատակութեամբ, ընկերականը՝ բարուց և վարուց առաքինութեամբ և ճարտարը՝ խելքի ու մտքի ընդունակութեամբ։

Ողջո՛յն քեզ Հայո՛ց ժողովուրդ, որ ես 'ի Հայաստան, 'ի Թուրքաստան, 'ի Ռուսաստան, 'ի Պարսկաստան, 'ի Հընդկաստան, յԵգիպտոս, 'ի Մոլդովալաքիա և ուրիշ աշխարհքներ։

Ողջո՛յն Հայո՛ց ժողովուրդ, քո Եպիսկոպոսապետ Կաթուղիկոսին, Պատրիարք Աքքեպիսկոպոսներին, Եպիսկոպոս Առաջնորդներին, Քարոզիչ Վարդապետներին, Սրբազնագործ Քահանաներին և քո Ս· Եկեղեցւոյ բոլոր ուխտին։

Ողջո՛յն Հայո՛ց ժողովուրդ, քո ազդասէր երեսփոխաններին, բարեպաշտ ժողովականներին և ժողովրդականներին, քո դիտնական ուսումնականներին, հանդէս և լրագիր խմբագրողներին, դաստիարակ ուսուցիչներին և ամեն ուսանողներին։

Ողջո՛յն Հայո՛ց ժողովուրդ, քո՝ տերութենական պաշտօնաւոր, փաշա, Բէգ, Լիֆէնտի, Կոմս, Գենեռալ, նշանակիր

և աստիճանաւոր Ասպետ, Խան, Միրզա, Իշխան և Իշխանաւոր զաւակներին։

Ողջո՛յն Հայո՛ց ժողովուրդ, քո՝ վաճառական, Արհեստաւոր, Գործաւոր, Երկրագործ և ուրիշ ամեն աստիճանի և պաշտօնի զաւակներին։

Ողջո՛յն Հայո՛ց ժողովուրդ, քո՝ դերդաստան և ընտանիք պահող պահպանող ժրագլուխ տանտիկիններին, համեստ մայրացու կոյս աղջիկներին, առաքինի հայրացու երիտասարդներին, աշխոյժ պատանիներին ու մատղաշ տղաներին։

Մի խօսքով ողջոյն և կեանք քեզ ո՛վ իմ սիրելի Հայոց ժողովուրդ։

Եւ ի՞նչ է այս ողջոյն տալը, ի՞նչ է այս յաջողութիւն մաղթելը, ի՞նչ նոր բան կայ, ո՞ւր ենք գնալու, ո՞ր ժամանակին ենք հասել։

Հասել ենք մի այնպիսի դարու, Հայո՛ց ժողովուրդ, որ խիստ արագ արագ կ'շտապէ կ'երթայ մեր առջեւէն և մեզ իր քամակը կը թողու։ Այս դարն է Աղբոյին բարոյական և տպաւորչական դարը, որ իր ձեռքը մեզ է ձգել մերինէն բռնելու և դէպի յառաջ տանելու և մենք՝ ոչ ոչք ունինք այդ ձեռքը տեսնելու և ոչ ոտք նրա քամակէն ընթանալու։ Նա, ամեն երկրի, ամեն ազգի և ամեն ընկերականութեան ի՞նչ որ պակասն է նրամէ, ի՞նչ որ հարկն է նրան, այն ձեռք բերել կը յորդորէ, մի երկրի ծլի՞ր, ծաղկի՞ր կը քարոզէ. մի ազգի զարգացի՞ր, յառաջացի՞ր կը կարդայ. մի ընկերականութեան բարոյական և լուսաւոր եղի՞ր կը կանչէ. ապա թէ ո՛չ, կ'ասէ, իմ դարն էլ ունի իր թուրն ու սուրը, աւերն ու քանդումը, քե՛զ, թէ երկիր ես և անկարող իմ պահանջմունքը կատարելու, ուրիշ կարողին ձեռին կը տամ կ'ասէ. թէ ազգ ես և խուլ իմ դոռումս ու դոչումին, ուրիշ լսողին ձեռին կը յանձնեմ, կ'ասէ. թէ ընկերականութիւն ես անհոգ, թոյլ և անշարժուն, ոչ ու փուչ կ'անեմ քեզ և ուրիշին ձեռին ստրուկ և ստացուած.ք կ'անեմ, կ'ասէ։ Ահա՛ այս է այս դարուս լուսաւորութեան բուն հոգին։

Ուրեմն Հայոց ժողովուրդ, բա՛ց ականջներդ, լսի՛ր նրա ձայնին, քեզ էլ է մի բան ասում, քո հարազատ զաւակների բերնով, և այս բանը քեզ շատունց է որ կ'ասէ, հարիւր

հարիւրաւոր տարիները է որ ասել է, թէ Հայո՛ց Ժողովուրդ. Աղէ՛ էրէ՛, եկեղեցի՛ էրէ՛, ո՜սոո՜մ էրէ՛։

« Հայ էրէ՛, ժամ էրէ՛, գէր էրէ՛» (1)։

« Զեզ եմ ասո՜մ յեղ՝ Հայոց երէցասարդ՝ յեր անուանին ծառնիմ, յեր ա՜բէ՜ին ղո՜բէան, պասը լեղո՜ սովորեցէ՛, յեր լեղո՜ն, յեր հա՜ապը ղայիմ բառնէցէ՛» (2)։

Այո՛, Հայոց Ժողովուրդ, այս դարուս լուսաւորութիւնը շատ ղօրաւոր և հանճարաւոր ազգայնոց բերներով ասելուց յետոյ քեզ և մեր պատանեկան բերնովն էլ է ասել քեզ, սը՜բամէն տասնուհինգ տարի յառաջ Զմիւռնիոյ մի փոքրիկ վարժատան մէջ թէ,

« Պատուական Տեարք և Տիրուհիք, զանց չառնեն՝ այն ամենէն հարկաւորին և օգտակարին վրայ մոռածելը, որ է մեր որդւոցը լաւ կրթութիւնը. թէ որ մեր ներկայ վիճակէն դոհ չենք, փոխենք այն. բայց ինչպէս. ուրիշ կերպով չէ՛ հապա միայն մեր որդւոցը ազգային կրթութիւն տալով։ Միայն այս միջոցով կրնանք մեր վիճակին կերպարանքը փոխել և օտար երկիր բնակող մերազնէից մեր վրայ դրած յոյսը դերեւ չհանել։ Ծաղկեցնենք մեր դպրոցները, կը՜թենք մեր զաւակները ազգային կրթութեամբ և ոչ թէ օ՜տարի անուանդով։ Վասն զի ազգային կրթութեամբ միայն Ասիոյ ազգերու մէջ կը զատուի ու կը փայլի Հայոց Բրիտանեայ ազնուական ժողովուրդը...» (3)։

Կրկին անգամ Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանի մէջ 1857 թուի Դեկտ. և Մարտ ամիսներու երեքամսեայ քընն՜նութեան առթով, ուսումնասիրութեան և ազգասիրութեան վրայ ասուած յորդորական ճառերի մէջ։

« Ձեր այդ տարիքն ուսանելու և կրթուելու տարիք է. Ջանայէ՛ք ձեր դասական պարտքերը լաւ կատարելու.... ունկնդիր եղէ՛ք ձեր դասատուաց և հնազանդ ձեր ծնողաց, իրար հետ սիրով վարուեցէ՛ք և ձեռ՜ք ձեռ՜քի տալով դիմե՜

(1) Սայեան Նովայ. Հանդուցեալ Պարոն Ալվերդեանցի հրատարակածը։

(2) Աբովեան. Վէրք Հայաստանի։

(3) Ճառ տացեալ 'ի Պ. Մարկոսէ Ազարեդեան, 'ի հանդիսի պարգեւարաշխութեան աշակերտաց Ազարեդեան վարժատան 'ի 10 Օգոստոսի 1852։ Տես Արշալոյս Արարատեան լրագրի նոյն ամսոյ թուերի մէջ։

ցէ՛ք դէպի ուսման ասպարէզ, ուր ձեզ համար փառաց մըր-
ցանակներ կսպասեն. եղէ՛ք արժանաւոր որդիք, ձեր ար-
ժանաւոր ծնողաց և աղնուակիրթ անդամ Հայոց ազնիւ ժո-
ղովրդեան։ Աշխարհիս ստեղծմանէ հետէ Մասեաց լերան
վրայ աչք մը ձեզ կը դիտէ և մեր վշտին ու բաղդին ակա-
նատես է, տակաւին իր արտեւանները չփակուեցան, անդա-
դար կը դիտէ աշխարհիս չորս կողմ սփռուած զաւակներու
արտերու մէջ և կսպասէ այն լուսին, որով իր դագաթը պիտի
լուսաւորուի. քաղցր է ինձ յուսալ զաւակներ, որ ձեր սըր-
տերուն մէջ պիտի ծագի օր մը այս լոյսը, որ է «էր ապէ», «էր
եկեղեցի», «էր ուսման»։

«Մինչ՞ յուսով չլեցուիր սիրտս, մինչ՞ եւս առաւել չեմ
քաջալերեր զիս, մինչ՞ նոր հոգի, նոր զգացմունք չեմ զգար
ու նոյն հոգւով ու զգացմամբ անձնանուէր չեմ ըլլիր ձեզ,
ո՛վ սիրելի ցղայք, տեսնելով ձեր սրտերու մէջ այն նշոյլին
փայլիլերու յոյսը, որուն այսչափ տարիներէ 'ի վեր Մասեաց
դագաթը կ'սպասէ։ Այո՛ պատանեակք, դուք պիտի ըլլիք
մեր Ազգին պարծանքը և յոյսը, դուք, ինչպէս ձեր ծնո-
ղացը յոյսն ու դանձն էք, այնպէս էլ և մեր ազգին ապագայ
ճակատագիրն էք. ուրեմն աշխատեցէ՛ք հոգւով, սիրեցէ՛ք
ուսումը, սնդեցէ՛ք Ցիսուսի Քրիստոսի մեզ տուած սիրոյ
հանդոյցները, մեր թշնամիք քակտել պառակտել կ'ուզեն
այն տղայք, բայց քանի՛ որ ձեր սրտերը, Եկեղեցւոյ և Ազ-
գին վրայ սէր կզդան, քանի՛ որ ձեր հոգին ու սիրտը նոյն
սիրոյն զգացմամբ կը մնանին, Աստուած ձեզ մարմնոյ կորո-
վութիւն, մտաց լուսաւորութիւն և հոգւոյ շնորհք կուտայ
....։ Ցուէ՛ք ինձ միշտ սիրական որդիք, այն քաղցր յոյսը
թէ օր մը պիտի ծնի ձեր սրտերուն մէջ այս լոյսը, որ թէ ինձ
և թէ համբրէն Հայոց ժողովրդեան համար ցանկալի է»[1]։

Արիին անդամ։ «Խօսք յաղագս հրապարակական դաս-
տիարակութեան առ ժողովուրդն Հայոց որ Իզմիւռնիա»
գրուածքին մէջ։

«Այո՛ Տէրք իմ, մենք ենք այն Ազգին մնացորդքը, որ
առեն մը Հայաստանեաց գիրկը քաղաքակիրթ և մեծ Ազգ մը

[1] Տես 1857 Դեկտ. և 1858 Մարտ ամսու Արշալոյս Արարատեան լրագրերը։

կը կաղմէինք և հաղարաւոր տարիներ Մասիս լերան ծաղկաւէտ պսակին եղանք. ի՞նչ բարիք չբրին մեր նախնիքը հայրենասիրութեան հոգւով, որչափ երեւելի և մեծամեծ դրծեր չգործեցին Մեծն Տրդատ և Սուրբն Գրիգորիոս Քրիստոնէութեան սիրով. քանի՞ աղգօգուտ կայանքներ չհաստատեց Մեծն Ներսէս Պարթեւն։ Աւելի զարմանալին, միթէ մեր դրականութիւնն իսկ Սուրբ Աւետարանի լուսոյ սիրոյն պարտաւոր չենք. երկնային և անմահական սէր, որ մեր նախնիքը մոլեռանդութեան անհնարին հարուածներէ պահպանեց, շատ ու շատ անգամ օրինաւոր եղբայրսիրութեամբ միացուց Աղգը Սասանեայ, Արաբայոց և Թաթարաց թէ մոլեկան աղանդոց յարձակմանց դէմ դնելու և թէ անոնց անյագ աշխարհակալութեանց եւ ասպատակութեանց դէմ արիութեամբ դիմանալու։ Այո՛ Տեարք, մեր նախնեաց Քրիստոնէութեան վրայ ունեցած սիրոյ համար թափած արիւնին ենք պարտական այսօրուայ մեր դոյութիւնը և տակաւին կը վայելենք անոնց մեզ աւանդած եկեղեցին, լեզուն և յիշատակը և նոյն եկեղեցին նոյն լեզուն և նոյն յիշատակն է մեզ այսօր մի ազգ ձեւացնողը։

«Արդ Չանանք արթնցնել սրտերնուս մէջ այս երկնային աղդումը. թո՛ղ մեզ օրինակ ըլլին մեր նախնեաց դրոց մէջ յիշատակուած երեւելի իրերը. թո՛ղ մեր սրտերուն մէջ սրբազան ուխտ մը լուիկ մնչիկ բողբողչի, անձնատուր ըլլինք հոգւով և մտքով դաստիարակութեան մեզ համար բացած դրկաց մէջ, այն մինակ կրնայ երջանիկ ընել մեզ, այն մինակ մեր բնութիւնը կրնայ ուղղել և որպէս զի ամեն բանէ յառաջ ազգի և եկեղեցւոյ սէրը մեզ համար կիրք և հարկ ըլլի, ծծել տանք մեր որդւոցն իրենց մօրը կաթին հետ ազգի և եկեղեցւոյ սէրը. մեր որդիքը իրենց խելահաս եղած ատեն չունենան ուրիշ բան իրենց դաստիարակութեան սկզբունք, հապա միայն իրենց եկեղեցւոյ ուսումն ու իրենց ազգի լեզուն. այդ սէրն ու այդ սկզբունքն իրենց դոյութիւնը կազմեն, միայն անոնց համար ապրին և թէ որ ազգ և եկեղեցի չունենան սիրելու իրենք ալ չըլլին։ Քանի տարեկան Հայ մը ուրիշ մարդ չըլլի հապա բուն իսկ Հայ մարդ, կարդալ գրել սորվելով միայն իր ազգին բաները սորվի,

տասը տարեկան՝ միայն իր ազգին վիճակը ճանչնայ, տասն-երկու տարեկան՝ բոլոր այն երկիրները դիտնայ ուր տեղ Հայք կը գտնուին, տասնուհինգ տարեկան՝ իր ազգի պատմութիւնը, տասնուվեց տարեկան՝ իր եկեղեցին իմանայ։ Վերջապէս համայն աշխարհիս մէջ մեր ազգին և եկեղեցւոյն վերաբերող նշանաւոր բան մը կամ հռչակաւոր մարդ-մի չըլլի, որու պատմութեամբ սիրտը լեցուն և կարող չըլլի անմիջապէս տեղեկութիւն տալ անոր վրայ »[1]։

Թէ ուրիշ ինչեր ենք ասել քեզ, ո՛վ Հայոց պատուական ժողովուրդ, քո Հայրենի երկրին մէջ, Հայոց Աշխարհի Կաթ-ղիկեան ձայնով, այս տեղ մի ամբողջ յօդուած քո յառաջը կը հանենք նորէն։

« Մեր ազգի նման մի ազգի մէջ ազգայնութիւն և բարոյականութիւն զարթուցանելու կամ զարգացնելու համար, կամ թէ մեր ազգն ազգայնութեան և բարոյականութեան մէջ լուսաւորելու համար, երկու մեծ ու կարեւոր տարերք կան նրա ծանօթացնելու։ այս տարերքն են իր լեզուն և իր կրօնը, առանց որոնց մեր մէջ ազգային բարոյական լուսաւորութիւն չէ կարող լինել։ Մի ազգի մէջ ազգայնութեան զգացմունք զարթուցանել կամ զարգացնել կ'իմանանք, երբ նրան՝ իր ազգի պատմութիւնն ամեն հանգամանքովն ու կերպարանքովը ցոյց կը տուսի, նրան իր բարոյական, քաղաքական և մտաւորական կատարելութիւնքն ու պակասութիւնքը արեգական նման կը յայտնուին, նրա աչքին առջեւ կը բերուին իր նախնի երեւելի մարդկանց քաջագործութիւնքը, արիութիւնքը, դիւցազնութիւնքը, և ազգային զգացմունքով և բարոյական սկզբունքով սնուած և մեծացած երեւելի մարդկանց վարքն ու բարքը թէ իրանց ընդհանուր քաղաքային կեանքին մէջ և թէ իրանց մասնաւոր առանձին կեանքին մէջ՝ իրանց յաղթողութեամբն ու ձախորդութեամբը։ մի խօսքով, ազգային և բարոյական հրահանգ տալ կ'իմանանք մի ազգի կամ մի ժողովրդեան, երբ նոյն ազգին նոյն ժողովրդեան իր պատմութիւնը իր լեզուն իր կրօնը, իր օրէնքը, իր երկիրը, իրան կը ծանօթացնենք։

[1] Տես Յայտարարութիւն կանոնաց Ս. Մեսրոպեան վարժարանին Զմիւռնիոյ։ Տպագրութիւն Տէրտէրեանց 1858։

իր հոգին ու իր սիրտը, իր բարքն ու վարքը իր եկեղեցւոյ վարդապետութեամբ կը կրթենք և իր ընկերական կամ ազգային կեանքն իր եկեղեցւոյն կանոններովն կուղղենք։ Այս երկու հանգամանքներն՝ կարծենք լինին ազգային և բարոյական լուսաւորութեան կամ մի և նոյնն է մի ազգի կամ ժողովրդեան ընկերական և բարոյական դաստիարակութեան հիմունքը »։

« Հիմա մեր ազգի մէջ, այլևայլ սկզբունքով և այլևայլ դաղափարով հանդէսներ և լրագրեր ունինք, բայց գրեթէ ամենին պաշտօնը մեզ՝ մեծ մասով Եւրոպական լուսաւորութիւնը փոխանցնել է։ ունինք քաղաքական լրագրեր, դրականական հանդէսներ, ունինք ազգային և ժողովրդային անցքերու և դէպքերու վրայ խօսող, քննող թերթեր, բայց չունինք տակաւին մի բուն իսկ հայկական հանդէս, որոյ մէջ մի միայն մեր ազգի, մեր կրօնի, մեր լեզուի ընդհանուր և ընդարձակ նկարագիրն երեւան հանէ իր ամեն կերպ հանդամանքովն ու կերպարանքովը։

« Աստուել է և ասուումէ միշտ, թէ աստուածային դիտութենէ յետոյ, որ մեզ՝ Աստուծոյ և մեր հոգւոյ հետ եղած յարաբերութիւնքն են ուսուցանում, ազգային և բարոյական ուսմունքներն են հարկաւոր, այսինքն մեր ազգայնոյ հետ ունենալու յարաբերութեանց, կատարելու պարտականութեանց դիտակցութիւնը, որոնց գործադրութեամբ միայն կարող կը լինինք բարեբաստութիւն և խաղաղութիւն ունենալ մեր մէջ իրար հետ, մի ազգ, մի եկեղեցի, մի լեզու կազմելու համար, ամուր ազգայնութեամբ և պարզ բարոյականութեամբ։ Թէ որ այս սկզբունքը միանդամ մենք իբրեւ հիմնական և ճշմարիտ ճանաչենք, անպատճառ նրա մեզմէ պահանջած պարտականութիւնքն էլ 'ի գործ դնելու բնաւ չենք վարանիլ և որ և է ձեռնարկութեան սիրով ձեռք կը դնենք, որպէս զի այս ճշմարիտ և հիմնական սկզբունքը մեր ազգի ամեն մէկ անդամի սրտի և մտքի մէջ ծաւալի ու հիմնուի։

« Ա՛րդ՝ ո՞վ մեր մէջ պիտի յանձնառու լինի, այս ըստ մեր կարծեաց հիմնական և ճշմարիտ սկզբունքը դատաքննել և ծանօթացնել մեզ և նրա արդիւնքն էլ ճաշակել տալ։ կամ

թէ ո՞վ պիտի ցոյց տայ մեզ այսպիսի մի պաշտօն կատարելու եղանակը մեր ազգին մէջ։

« Հէնց այս խնդիրն է, որ մենք յանդգնում ենք լուծել կամենալ, մի քանի խօսքով և այս մասին մեր ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրել։

« Մի ազգի, մանաւանդ մեր ազգին, ազգ, կրօն և լեզու ծանօթացնելու համար, կամ ուրիշ կերպով, մի քանի բանադէտներու նման ասելով, մեր ազգը ոտքէն մինչեւ գլուխ վերանորոգելու համար, մենք՝ աղատ և համարձակ, հոգւոյ և մտքի ամուր համոզմամբ, կը պնդենք, թէ՝ ուրիշ ոչինչ հարկաւոր չէ, բայց միայն հռչակել, 'ի լոյս ածել, բոլոր իր փառաւորութեամբն ու թշուառութեամբը մեր ազգի աշխարհական և եկեղեցական նախնի և արդի պատմութիւնը, իր ընդհանուր և մասնաւոր իրողութեանց հանդամանքովը, որոնց խորհուրդքն ու հետեւանքը արեւու նման երեւան դուրս դան համօրէն ազգայնոց և ամեն մէկ ազգայնոց լուսաւորութեան համար, որպէս զի ճանաչեցնելով նրանց՝ իրանցմէ պահանջուած պարտականութիւնքը և իրանց ունենալու իրաւունքը, ամեն մէկ ազգի անդամ ապահով լինի իր անձնէն ազգի վրայ և ամբողջ ազգն էլ նրա վրայ։ Այսպէս է երեւում մեզ։ Երբ մեր ազգն իր ազգայնութեան դգայմունքը կը ճաշակէ, երբ իր դրականութեան փառքը կ'իմանայ, երբ իր տուրբ եկեղեցւոյն պարզ բարոյականութիւնը կը վայելէ և կը լինի ինքն իրան միասիրտ միահոգի և միաբարբառ ընկերականութիւն բարոյապէս և մարմնաւորապէս եղբայր, այն ժամանակ իր վերանորոգութեան առաջին յօդուածը կատարած կը լինի։ Այո՛, մեր ազգի մէջ դեռ մինչեւ հիմա մի այսպիսի գործ, ոչ թէ չի երեւում, այլ ծագումն անդամ շատ հեռու է. ի՞նչ է պատճառը չենք իմանում, կամ եթէ իմանում ենք՝ հասկանալ չենք կամենում։

« Այսպիսի մի ձեռնարկութեան հոգին գլխաւորապէս, ազգային, բարոյական և մտաւոր լուսաւորութեան տարերքը մեզ ծանօթացնել պէտք է լինի և ոչ թէ այսօրուայ մեր ընկարական վիճակին մէջ գտնուած մի քանի խախուտ ժամանակաւոր հանգամանքն տակն ու վրայ անելու գործի.

առանց նրանց տեղ մեղ ազգի համար իր սեպհական տա-
րերքը հաստատելու։ Ստոյգ և արժան է, որ պարտական
ենք ջնջել մեր՝ այլևայլ ազգերէ վեր առած չար սովորու-
թիւնքը թէ ընդհանուր ազգի մէջէն և թէ ազգի մի անդա-
մի վրայէն. և նա՝ միայն փառքի և յարգի արժանի է, որ
մեր մէջ մտած այլևայլ մոլութիւնքը հալածելով, նրանց
տեղ մեր բուն օրինաւոր յատկութիւնքը կը բնաւորեցնէ։
Ազգայնութեան և բարոյականութեան սերմը, ըստ մեղ, ինչ-
պէս ազգի ամեն մէկ անդամին սրտին մէջ, նոյնպէս և ամ-
բողջ ազգին սրտին մէջ պէտք է լինի։

«Ի՞նչպէս պէտք է անել այս բանը. նախ պէտք է ազգն
հրահանգել ազգային, բարոյական և մտաւոր դաստիարա-
կութեան տարերքով, այսինքն ցոյց տալ նրան թէ ի՞նչպէս
և ո՞ր չափ մեր հիմակուայ ընկերական վիճակը մեր նախնի
վիճակէն փոփոխուել է և հեռացել. մեկնել և ցոյց տալ
մեր վիճակին փոփոխուելուն պատճառները և նրանց ի՞նչ
հանգամանքներէ յառաջ գալը։ Օրինակի համար, ի՞նչ է
մնացել մեղ մեր տարրապաշտ նախնիքներէն. ի՞նչ է որ մեր
հայրենի աշխարհին և եկեղեցւոյն պարտական ենք. ի՞նչ է
անցկացել և մնացել մեղ մեր թագաւորութենէ և նախա-
բարութենէ. յետոյ թէ ի՞նչ են մտել մեր բարուց և վարուց
մէջ, Պարսիցմէ, Յունացմէ, Արաբացւոցմէ, Սկիւթացւոցմէ։
Մինչեւ մեր օրերն անդամ Թուրքերէ Ռուսներէ մեր մէջ
անդգալի կերպով մտած սովորութիւնքը պարտական ենք
քննել ճանաչել և նրանց մեր մէջ արմատանալով յառաջբե-
րած աղետալի հետեւանքներէն զգուշանալ։

«Այո՛, այս բանը պէտք է որ անենք. որոնենք մեր ազգն
իր պատուական և աղնուական ձիրքովը ու շնորհքովը իր
այժմեան ունեցած կէս բարբարոս խորթ յատկութեանցը
մէջ։ Թէ որ անհոգ ու անփոյթ լինելով՝ չենք շտապիլ այս
անելու, հաւատի լինենք, որ յետոյ աւելի դժուարին կը
լինի տալ նրան իր բուն սեպհական բարքն ու վարքը։

«Այս անելով, կիմանանք ազգն ոտքէն մինչև գլուխ վե-
րանորոգել։

«Ուշիմ ընթերցող, միթէ միմիայն մի լոկ Եւրոպական ուս-
մունք և դիտութիւնք բաւական կը լինին այս ձեռնարկու-

թեան համար, խնդրում եմ քեզ՝ դոհացրու իմ հարցումս։

«Մեր ազգը լուսաւորելու կամ նրան ոտնէն ցդլուխ վերանորոգելու համար միայն մի քանի տեսական դիտութեանց և հմտութեանց զօրութիւն բաւական չէ, այլ պէտք է քաջ ճանաչել այն ակն ուր տեղէ բղխել է մեր ազգային և բարոյական լուսաւորութիւնը, ընտանենալ այն երկրին հետորոյ ջրերը մեր բարքն ու վարքը ոռոգուել և պարարուել են, զգալ այն քամին, որ մեր աշխատանքը արդիւնաւոր են արել, այսինքն մեր այժմեան ընկերականութեան մէջ եղած չար սկզբունքներն և չար հետեւանքները ջնջելու, այլևայլ օտար տարերքներն, ազդակործան հետեւանքներն անհետացնելու ջանք և փորձ անելէն յառաջ, պէտք է, որ մեր աշխարհին և ազգին սկզբնաւորութեանը դիմենք ու նրանց ձեւացումն ու զարգացումը ճանաչենք. նոյնպէս և իմանանք մեր լեզուին ծագումն ու կազմութիւնը, սովորենք Քրիստոնէութեան մեր աշխարհին մէջ ի՞նչ կերպով եկեղեցի հաստատուելը և այնպէս հետզհետէ ջնջենք և քննենք նոյն գլխաւոր երերը, դէպքերն ու անցքերը, որոնց մէջէ անցկենալով մեր այժմեան վիճակին ենք հասել. օրինակի համար. պէտք է իմանալ թէ՝ Հայկազունք երանց ժամանակի՞նչ տարերք ունէին լուսաւորութեան. Ասորեստանցւոցմէ ի՞նչ քաղաքական և կրօնական ազդեցութիւն կրեցին. Պարսից այն ժամանակուայ քաղաքականութենէն ի՞նչ ներդործութիւն ունեցան. յետոյ Յունաց կամ Մեծին Աղէքսանդրի աշխարհակալութենէ ի՞նչ տպաւորութիւն ստացաւ Հայոց Աշխարհը, նոյնպէս Պարթեւք մեր աշխարհին տէր լինելուց յետոյ բարձր Ասիոյ հնդկական քաղաքակրթութիւնը բերելով և այն՝ Յունականին յետ խառնելով, բուն Հայկական տարերքին նկատմամբ ի՞նչ զանգուած դուրս եկաւ, ի՞նչ իրողութիւնք՝ կատարուեցան, ի՞նչ հետեւանք յառաջ բերին, ո՞րն է վերջապէս Քրիստոնէութենէ յառաջ մեր նախնեաց ազգային և բարոյական ճիշդ ու յայտնի կերպարանքը, միթէ՞ Քրիստոնէութիւնը՝ բոլորովին անհետացուց այդ կերպարանքին ուրուականը. նոյնպէս Զրատաշտական, Մահմետական, Բուղանդիոնական, Պապական, Ռուսական տարերքներն ո՛ր աստիճան ներդործեցին մեր

աշխարհին և ազգին վրայ, նորերումն էլ Եւրոպիոյ փիլիսոփայական կարծիքներն ու համոզումները մեր բարոյական և ազգային կեանքին վրայ ի՞նչ լաւ կամ վատ ազդեցութիւն արին և այլն և այլն։

«Այսպիսի մի գործ յառաջ բերել և ըստ հանել մեր մէջ ազգն իրան ծանօթ անելու համար, իր՝ այսպիսի խառնիխուռն տարերքներու մէջ դանուիլն իմաց անելու համար և յոյս և ուժ տալ նրան այսպիսի խառնաշփոթ վիճակէն դուրս գալու, անշուշտ մի ամենամեծ և ամենաբարի ձեռնարկութիւն անել կը լինի նրա համար, այսինքն նրան ոտնէն ցգը-լուխ վերանորոգել կը լինի. մեր Հայոց այսպէս, ազգային, բարոյական և մտաւոր լուսաւորութիւն տալը մենք կը համարինք վերանորոգութիւն, բայց այդ ձիրքն ու շնորհքը մեզ 'ի հարկէ միայն Եւրոպայէն պիտի չգայ, այլ մեր աշխարհէն, մեր եկեղեցիէն և մեր պատմութենէն։ Բանակնութիւնն անհուն մի արեդակ է, ինչպէս Եւրոպիոյ դաշտերն ու անտառները լուսաւորել է, նոյնպէս և մեր Հայոց աշխարհի ձորերն ու հովիտներն էլ կարող է լուսաւորել. վեր առ նրա լուսի դէմ դրուած թանձր պատանը, կը տեսնես, որ նրա լոյսը մեր ամենուն սրտին մէջ կը ցոլանայ. ո՞վ պիտի վեր առնէ այդ վարագոյրը, մենք ամենքս թէ եկեղեցականքս և թէ աշխարհականքս մեր եկեղեցւոյ մեզ տուած հոգւոյ և մտաց ազատականութեամբ։

«Մի կարեւոր հանգամանք, որ մեր ազգային պատմութեան մէջ յայտնի իրօրէն երեւում է, ըստ մեզ, ինչպէս յայտնել ենք շատ ու շատ անգամ, այն է, որ մենք մեր ազգային և բարոյական լուսաւորութիւնը բոլորովին մեր եկեղեցւոյն ենք պարտական. ոչ մի աշխարհի, ոչ մի ժողովրդեան մէջ, մենք այս հանգամանքը չենք կարող լինում տեսնել այնպէս կենդանի պարագայներով ինչպէս մերինին մէջ։ Պնդում ենք նորէն, ոչ մի ժողովուրդ, ոչ մի աշխարհ այնքան բարոյական բարիք, այնքան ազգային կեանք չէ վայելել իր քաղաքային օրէնքներէն և հայրենական սահմանադրութենէն, ինչպէս մեր աշխարհն ու ժողովուրդը վայելել է իր եկեղեցիէն քրիստոնէութեան նոր դարերէն սկսած մինչև այս վերջին ժամանակները։ Մեր օրերումն է, որ այս բա-

բոյական վիճակն ու ազգային կեանքը դղրդուել սարսել է և վիչելու, ջնջուելու է մօտեցել վերեւն առաջ բերած տարբերքներէն և մեր եկեղեցւոյ պաշտօնէից բարոյապէս անդործութենէն. Ի հարկէ այս երկու ընդհանուր ներդործութիւնքը մեզ համար մահաբեր պէտք էին լինել։

«Մի ազգ որ և է կերպով որ կամենայ յառաջ գնալ, լաւ գիտենք, որ իր յառաջ գնալուն առաջին պայմանքն են արդարութիւն, բարոյականութիւն և ազատականութիւն։ Կը հարցնեմ ձեզ խոհեմ ընթերցող, միթէ այս երեւելի յատկութիւնքը մեր մէջ շարունակ տիրապետութիւն ունեցել են կամ ունին հիմա։ Այս մի խնդիր է, որ ո՛չ ես և ո՛չ դու չենք կարող այս տեղ լուծել։

«Մի աննկարելի յանցանքով դատապարտելի անձինք նրանք են մեր մէջ, որոնք չանք են արել և անում են մեր ազգն մի մշանջենական մնայուն վիճակի մէջ պահել։ Իսկ նրանք որոնք կամենում են, որ մեր ազգի յառաջադիմութեան ընթացքը մի անհնարին մոլեգնութեամբ ընթանայ, ամենէն անվեհեր հոգւով մարդն անդամ մի ժամանակ շուարեցնում են և սարսափեցնում. սրանք, հաղիւ իրանց հետեւողք գտնելով՝ բարձրթողի են անում ազգային բարոյական յառաջադիմութեան հմար աշխատելը, մի միայն նրա համար, որ ամբողջ ազգն իրանց չէ լսում և չէ հետեւում. սրանք եթէ անհներելի յանցանքով դատապարտելի չեն առաջիններին նման, բայց շատ ներելի միջոց չէ իրանց բռնածը. մի անձի համար մի երեւակայական աշխարհի մէջ բնակել ցանկալը հնարաւոր բան է, բայց կամենալ, որ մի ամբողջ ազգ մի մոռացածին ազգայնութեան և բարոյականութեան մէջ դիմէ, առանց ճանաչելու այն, կարծենք շատ լաւ բան չէ, ո՛րչափ վառաւոր, ո՛րչափ հոյակապ երեւոյթով որ լինի այդ վիճակը, եթէ չէ կարելի նրա մէջ մեր ունեցած բուն տարերքը մոռծանել, Հայոց ազգայնութիւնն ու բարոյականութիւնը, այսինքն Հայաստանեայց եկեղեցին, մեր աշխարհի լեզուն, մեր ազգային պատմութիւնը և այլն և այլն։

«Միթէ օտար ազգերու մէջ եղած վարձը մեզ ցոյց չէ տալի, որ շատ վտանգաւոր է շտապելով մի ազգ ամենէն օրինաւոր լուսաւորութեան մէջն անդամ յանկարծ մոցընելը։

Ամեն՝ ազգ իր սովորութիւնքը, իր աւանդութիւնքը, իր մտութիւնքը և իր լաւ կամ վատ բարքն ու վարքն ունի. իրաւ է, որ մի խմաստուն գլուխ, այս սովորութեանց, այս աւանդութեանց և այս բարուց և վարուց մէջ շատ չար մոլութիւնք և հեռեւութիւնք կարող է տեսնել. կարող է այն ազգին հոգւոյն յուղմունքը անճոռնի և աննպատակ ուղղուած լինելը նկատել, նրա աւանդութիւնքն ու պատմութիւնքը սուտ ու հիւսուած լինելն իմանալ. սակայն մի ազգ դատապարակել կամ թէ մի ազգի մէջ լուսաւորութիւն ծաւալել ուզող մարդու առաջին և գլխաւոր արհեստն այս մոլորութեանց հետ վարուել գիտենալը պէտք է լինի, բաւական չէ որ ազգի մի միայն մի փոքրիկ մասը տեսնէ այդ չարիքը, այլ մեծ մասը պէտք է համոզուի ու լուսաւորուի, որպէս զի կարող լինի դատողութիւն և ընտրողութիւն անելով այդ վատ բաները ջնջէ և վանէ իսպառ իր մէջէն։ Նոյնպէս, ըստ մեզ, վտանգաւոր է, մի որ և է ազգի, բայց ամենէն աւելի մեր ազգի երեւակայութեան պահանջմունքն երկար ժամանակ յետ մղել դէմ առ դէմ պատերազմ բաց անելով նրա ազգային զգացմունքին որձանքը կանգնեցնելու. չար՝ և շատ չար է այս բռնաբարութիւնը, որն որ մեր մէջ գաւառանը ձեռին մեր գլխի վրայ է կանգնած, քաջ գիտենանք, որ այն ժամանակ կը մոլորինք և ցաւալին այն է, որ այնպիսի մոլորութեանց մէջ կ'ընկնինք, որ յետոյ ո՛չ խելք, ո՛չ դատողութիւն, ո՛չ զգացմունք, ո՛չ պարտք, ո՛չ ինչ բան մի խօսքով մեզ չեն կարող լինել այն մոլար ճանապարհէն դէպի ուղիղ ճանապարհի վրայ կանգնեցնել։ Մի ազգի լուսաւորութեան համար աշխատող մարդ, պէտք է, որ մի նուրբ և զգոյշ քննողութեամբ կշռէ և դատէ այն գաղափարներն ու զգացմունքները, որոնք իր անձին սեպհականելով, այն ազգին մէջ պիտի տարածէ, որոյ ազգային, բարոյական և մտաւոր զարգացողութեան համար աշխատում է։ Իր պարտականութիւնը միայն այս կամ այն վարդապետութիւնը սահմանել և ապացուցանել պիտի չլինի, այլ այն ազգի վրայ որ և է կերպով 'ի բարին ներգործել և նրա օգտին համար միայն գործ տեսնել, և ոչ թէ մի ազգ կամ ժողովուրդ ստեղծել, ինչպէս ոմն հեռադում է իրան համար։

«Ամեն ազգ իր օրէնքը, վարքը և բարքը ունեցել է և ունի, թէ որ չունենար. ո՛չ ազգ և ոչ ժողովուրդ եղած կը լինէր. մի օրէնսդիր կամ լուսաւորիչ իր ազգի օրէնքին և կանոնին պէտք է և կարող է միայն խարտոցով դպչել և ո՛չ տապարով, թէ որ նոյն օրէնքն ու կանոնքը պատուաստուելու և բողբոջելու մեծ պէտք ունին. իր անհրաժեշտ պարտքը պիտի լինի իր ազգը բուն իր օրէնքովն ու կանոնովը, բարոյական և մտաւոր կատարելութեան հասունացնելու պատրաստել, բայց մեծ և զգոյշ նախատեսութեամբ, վասն զի կարող է միեւնոյն ժամանակ նոյն ազգին, որու համար ինքն աշխատում է մի անել վիճակի մէջ դնորել, որոյ համար նա կարծում էր կենդանութիւն և գործունէութիւն տալ. խլէ և ջնջէ այն հաստատութեան և տեւականութեան արմատներն, որոնք նոյն ազգի վարուցը և բարուցը, սովորութեանց ու աւանդութեանցը մէջն են բռնել և որոնց համար ինքը մտքումն է դրել ուղղութիւն և պարզութիւն տալ։ Ամեն բանէ յառաջ և ամեն բանէ վեր պէտք է դասէ այն յարգանքն ու մեծարանքը, որ պարտական է տալ իր ազգային ընկերականութեան և նրա ճշմարիտ և հաւատարիմ անդամներուն, վասն զի իր պաշտօնը խանդարելով ստեղծել չէ այլ պահպանելով լուսաւորել, միայն իր առանձին պարտքը չէ կամենալ կամ չկամենալ թէ այն ազգի մէջ, որոյ անդամ է և ինքը, պէտք է եկեղեցականաց դասը տիրապետէ թէ ոչ աշխարհականացը, կամ թէ աշխարհական ժողովը եթէ ոչ եկեղեցականաց ժողովը, այլ՝ լաւ ճանաչելով և քաջ տեղեկանալով այն այլևայլ տարերքն որ նոյն ազգային ընկերականութիւնն են կազմում, նրանց թերակատարութեան կամ կատարելութեան վրայ մի ուղիղ և ճիշդ քննողութիւն կամ նկատողութիւն անել և զարգացողութեան ճանապարհին վրայ դնել. միշտ իր մտքումն ունենալով, որ նրանք այնպիսի հանդամանքներ են, որ ամեն ազգի մէջ գտնուում են և երեւում այլևայլ կերպարանքով և անշուշտ այն ազգի կեանքը, որոյ կենդանութեան համար ինքն էլ է ճիգ թափում, նոյն հանդամանքներէ ունի կախում։ Մենք կարծում ենք, որ մեր ազգային ընկերականութեան, թէ բարոյական և թէ մտաւոր լուսաւորութեանը վերաբերական դի-

տութեանց մէջ շատ յառաջ չենք գնացել, որպէս զի մի նուրբ հայեցուածքով կարող լինինք ըմբռնել թէ ի՞նչ կերպով կամ թէ ի՞նչ չափով մեր մէջ տիրապետող իշխանութիւնք ազդեցութիւն պէտք է ունենան. քաջ էլ գիտենք, որ աշխարհիս մէջ ոչ ինչ չկայ որ անփոփոխ լինի, որ և է իշխանութիւն և ազդեցութիւն կարող են չափաւորուիլ, սահմանուիլ և վերանորոգուիլ, ժամանակի պահանջմանը համաձայն։ Այս բանիս համար էլ միթէ՞ նախատեսութիւն և իմաստութիւն հարկաւոր չէ, մի որ և է ազդեցութիւն չէ կարելի կրծանել մի ազգի կամ ընկերականութեան մէջ, մինչև որ նոյն ազդի կամ նոյն ընկերականութեան ընդհանուր և ակներեւ օգուտը չդատապարտէ իբրեւ անպիտան և ճնասակար, վասն զի ընդհանուր ազգն իր օգուտովն, իր դատողութեամբն ու ազատութեամբը շատ և շատ յառաջ է այն ազդեցութենէն և որովհետեւ այդ ազդեցութիւնը նոյն ազգի ընդհանուր օգտին համար և նրա ազատ հաւանութեամբն է ունեցել իր գոյութիւնն ու տեւականութիւնը, ուստի երբ ազգն անպիտան և ճնասակար է դատում այդ ազդեցութիւնը և իրաւունք էլ է ստանում նրա կրծանմանն աշխատելու ընդդէմ նրա բռնաբարութեան։ Մենք ոչ թէ կարծում ենք, այլ հաւատում ենք, որ ո՛վ որ մեզմէ կամ 'ի կամաց կամ 'ի հարկէ կոչուում է մեր ազգային, բարոյական և մտաւոր լուսաւորութեան համար աշխատել, պարտական է մեր Հայաստանեայց եկեղեցւոյ կարգերն ու կանոնները յարգել և պաշտպանել և ամեն ժամանակ, այն կարգերն որոնք վատթար մարդկանց ձեռն ընկնելով, իրանց նման վատթարացել են, ինքը նրանք վատթարութենէ հանելու և զարգացողութեան վիճակի մէջ դնելու պարտական է։ Այո՛ ուշիմ ընթերցող, մեր ազգային, բարոյական և մտաւոր զարգացողութեան համար աշխատողներու առաջին և գլխաւոր նպատակն այս պէտք է լինի, որպէս զի իրանց օրինաւոր աշխատանքն օրինաւոր հետեւանք յառաջ բերէ։ Նախ իրանք ցոյց տալով իրանց յարգանքը հոգւոյ և մտքի ազատութեան, նոյնն ամեն ազգայնոցմէ պիտի պահանջեն առանց բռնութեան, որպէս զի նրանք էլ իրանց ազատ հոգւոյ և ազատ մտքի կամեցողութեամբ դէպի

մի նպատակ ուղղեն իրանց հայեցուածքը, աղդին մի խելք, մի կամք տալու համար։ Բայց այս կերպով ներդործելու ժամանակ, պէտք է նաեւ թէ իրանք ընտիր լինին և թէ նրանց ընտիր լինելը ցոյց տան, որոնք աղդային պաշտօններ պիտի վարեն աղդի ընդհանուր օգտին համար։ Իրանք ցոյց տալով իրանց աղդայնոց մի աղդային վարք և բարոյական բարք նոյնը պիտի պահանջեն և այն անձանցմէ, որոնք աղդային պաշտօնի են նշանակուել։ տաղանդաւոր, առաքինի, հանճարեղ, աղդասէր մարդիկ միայն կը ճանաչեն և կը յարդեն նոյն այս ձիրքն ու շնորհքն ունեցող մարդկանց։ Մենք կարծում ենք, որ մեր աղդն ու եկեղեցին տանէն մինչև դրուխ վերանորոգելու համար, նրա օրէնքին, կարգին, կանոնին, վարդապետութեանը, աւանդութեանը փոփոխութիւն տալ կամ օտարին նմանեցնել ամենեւին հարկ չէ, այլ նոյն օրէնքը, նոյն կանոնը վարող, նոյն վարդապետութիւնը և աւանդութիւնը մեկնող անձինքը փոխել, եթէ նրանց տեղ բռնող լուսաւոր անձինք կարելի է դտնել, ապա թէ ոչ պէտք է նրանց լուսաւորել և նրանց իրանց պաշտօնին վրայ սէր ունենալ սորվեցնել, հաստատ և եռանդուն նախանձաւորութիւն շնչելով նրանց սրտին մէջ։ Այսպէս այն ցանկալի վերանորոգութեան կարելի է հասնել, այսպէս մեր առաջն եղող վերտանդաւոր ճանապարհէն կարելի է անց կենալ, որոյ վրայքար և խութ են դիզել մեր յառաջադիմութեան դէմ պատնէշ լինելու համար։ Արդ այս նպատակին հասնելու համար մեծ հարկաւորութիւն ունինք մեղ համար այնպէս առաջնորդներ ճարել, որոնք մեծ տաղանդներու հետ միասին ուներան նաև բարձր առաքինութիւն, բայց ի՞նչ կերպով, ի՞նչպէս և ո՞ր տեղ կարող ենք դտնել մեր մէջ այս երկու կատարելութիւնքը միասին իր մէջ ամփոփող անձինք, մի՞թէ մեր առաջն ունինք մի ստոյգ ապացոյց, որ մենք ամենանուրբ լուսաւորութիւն ընդունելու պատրաստուած լինինք աղդովին, որ և է անձանցմէ։ Մի՞թէ մենք ունինք հէնց հիմա այն երկար համբերութիւնը, այն խոնարհ ակնածութիւնը, որ մի լուսաւոր առաջնորդի լուսաւոր առաջարկութիւնն ընդունինք։ Ո՞ւր է մեր մէջ այն իմաստուն մարդը, որ մեր խառնափնթորութիւնը կարգաւորէ, մեր ամբարտաւանութեան,

յանդգնութեան և լրբութեան դիմանալով։ Ո՞ւր է մեր մէջ այն առաքինի մարդը, որ իր բարքին և վարքին մէջ, իր գործքին և խօսքին մէջ, իր դիտաւորութեանցն ու կարգադրութեանց մէջ միակերպութիւն, օրինաւորութիւն, նախատեսութիւն, աղատասիրութիւն, երկայնամտութիւն և անշահասիրութիւն կարող լինի ցոյց տալ։ Այսպէս, սիրելի ընթերցող, առանց այս կարեւոր ձիրքերու և շնորհքներու անկարելի է վերանորոգութիւն և մեր ազգային, բարոյական և մտաւոր զարգացողութեան համար մի յանկարծական ձեռնարկութիւն. մի կողմն եմ թողում ազգի ելից և մեծ խմբաւորն մտաակարարութեան հարկ լինելը, դիտենալով՝ որ մեր ազգային իրողութեանց մէջ վարժ և փորձ եղող անձինք կարող են վկայել այս մասին՝ մեր մէջ եղած անհաստատութիւնքը, փոփոխամտութիւնքը, շռայլութիւնքը; ժլատութիւնքը և այլ մոլութիւնքը։ Մեր Եկեղեցւոյ սահմանադրութիւնը մի ընտիր յատկութիւն ունի զուգընթաց դնալու մեր ազգային, բարոյական և մտաւոր լուսաւորութեան հետ, իր ամեն կարգի և աստիճանի անդամոցը կամ ժողովրդեանը բարոյական հաւասարութեամբը. մեր մէջ այսօր ոչ աղնուականութիւն, ոչ իշխանաւորութիւն և ոչ վեհաղնութիւն կայ, և ոչ նաև դուեհկականութիւն. եկեղեցականք անդամ մեղմէ բաժանուած՝ մեր վրայ իշխող մարդկանց մի կաստ չեն, ինչպէս ոմանք կարծում են որ լինին մեր մէջ. մի մարդ կարող է ուրիշ ազգերու քաղաքական կարգին մէջ մի որոշ նշանակութիւն կամ մի բարձր աստիճան ունենալ, բայց այդ աստիճանը և նշանակութիւնը մեր Եկեղեցւոյ առջեւն ազդեցութիւն չունի. մի միայն ժողովուրդն է իր Եկեղեցւոյ ուխտին տէր և իշխող ևայլն, ամենքս էլ բարոյապէս իրար հետ եղբայր ենք ազգօրէն և բարոյապէս հաւասար իրաւունքով, հաւասար ազատութեամբ, հաւասար ազդեցութեամբ մեր Եկեղեցւոյն և ազգայնութեան առաջը. մեր մէջ մի ղօրութիւն երբէք մի ուրիշ ղօրութենէ չէ կարող գերազանց լինել, այլ այլևայլ ղօրութիւնք դէպի մի նպատակ պէտք է դիմեն՝ այն է Եկեղեցւոյ և Ազգի ամբողջութեան և դրութեան։ Միայն մի անձի կամ մի կարգ մարդկանց կամքը թէև օրինաւոր լինի, ընդհանուր կամքի վրայ բացարձակ իշխանութիւն չկա-

ղող վարել, բայց միայն ընդհանուր ազգի կամեցողութեամբ և հաւանութեամբ, այլեւայլ կարգի մարդկանց կամքն իրար հետ միաւորելով, այլեւայլ օգուտներն իրար հետ յարմար և պատշաճ անելով։ Այո՛ ամենամեծ առաքինական ազդասիրութիւնը մինչեւ որ մեր ազգի մէջ արեւու նման չփայլի, պէտք չէ որ կարող լինի իշխել տալ իր կամքն ու խօսքը։ Ապահով լինինք, ո՛վ ազգայինք, որ այն ժամանակ մեր Եկեղեցին ու ժողովուրդը բարեբաղդ, հաստատուն և տեւական կը լինի, երբ այսպէս ինքն իրամէն կառաջնորդուի ըստ աւորութեան ճանապարհին մէջ. ասոյդ է, որ մենք մարդիկ, որչափ խմաստուն, որչափ նախատես օրէնք և կանոն հաստատենք՝ մի վերջ անշուշտ պիտի ունենան մեզ նման, նրա համար, որ մի սիրդը ունեցել են, Աստուածային օրէնքն են միայն յաւիտենական. ուրեմն զգայշ կենանք նրանց մեր մարմնեղէն մասը դոյնելուց. քա՛ջ դիտենանք, որ որչափ մեր յարգանքը կը տանք այս սուրբ օրէնքին՝ մենք չենք կորնչիլ, մեր կործանումը, նրանք անտես առնելով կը լինի, մինչեւ որ մենք մեր բարոյական և մտաւոր լուսաւորութեան կատարին չենք հասել, երբէք չենք կարող մեր ազգայնութեան հանդոյցը անտղել առանց ճնասու, նրա համար՝ որ չենք կարող իմանալ նրա դաղանիքը. ո՞վ կը համարձակի այսօր մեր ազգայնոց առաքինութեան համար երաշխաւոր լինել, առանց նրանց բարոյական և մտաւոր կարողութեան վրայ մի ապահով տեղեկութիւն ունենալու. ի՞նչ հանոտ սերմանեցինք մեր ժողովրդեան արօտին մէջ, որպէս զի շատով և նրա պատուղը քաղելու իրաւունքն էլ ունենանք։ Այս խնդիրն ուշադրութեան է կարօտ. կարծենք երկրագործները նախ ծառը կը անկեն, կ'ոռոգեն նրա արմատը, կը պատուաստեն նրա ճիւղերը, կը պահպանեն օդի և քամու հարուածներէն, եթէ չորանալով պտուղ չտալ, այն ժամանակ կը կորեն և կ'այրեն. մի՞թէ մեր Եկեղեցին ու ազգն այն վիճակին են հասել, որ կորենք և թափենք առանց մի դարման անելու նրանց. ո՛չ, մենք շատ հեռու ենք այդ կարծելուց։

Խնդրենք Աստուծմէ, որ մեր ազգի ամեն կարգի ժողովրդեան մէջ, եկեղեցական է եղել, աշխարհական եղել, այսինքն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, վանա-

ռականաց, արհեստաւորաց դասուն մէջ, առաքինի, արդարադատ, աղդասէր, բարեպաշտ անձինք յառաջ բերէ և զարդացնէ, որոնց օրինակովը, խօսքովը և գործքովը մենք էլ մեր աղդին օրինաւոր անդամ և Եկեղեցւոյն հարազատ որդի լինինք. ամենեւին անկրաւութիւն չէ մի օրինաւոր մարդու համար ստոր կարդի մէջ ծնեընու ապրելը, նրա համար, որ նա այդ վիճակի մէջ նախախնամութեան դործին է մեր աղդային և բարոյական լուսաւորութեան շինութեան մէջ։ Ուրախ լինինք ուրեմն, որ այսօր մեր աղդի ամեն կարդ ժողովրդեան մէջ, կրօնաւորաց դասուն մէջ է եղել, քահանայից դասուն մէջ, կամ թէ քաղաք, դիւղ, դերդաստան և ընտանիք, մի քանի արժանաւոր անձինք գտնուում են աղդային և բարոյական լուսաւորութեան համար աշխատողք. բուն բանը սրանց աշխատութիւնը կանոնաւորելու և դէպի մի նպատակ ղուդընթաց դիմել տալու վրայ է. թէ որ այս բանը կատարենք՝ մի ամենամեծ վերանորոգութիւն արած կը լինինք արդէն մեր աղդի համար ոտնէն մինչեւ դլուխ և նոյնպէս մեր Եկեղեցին ու աղդն էլ Եւրոպիոյ այժմեան լուսաւորութեան հողւոյն համաձայն և ղուդընթաց յառաջ կը դիմէ անվտանդ, քաղաքակիրթ ժողովրդոյ կարդը դասուելով»[1]։

Ահա այս սկզբունքով և ուղղութեամբ կը խօսէինք Հայոց աշխարհի կռնական բերնով մեր հայրենի աշխարհի որդւոցը հետ. բայց աւա՛ղ, երկնային վարչութիւնը ուրիշ կերպ անօրինեց մեր դրութիւնը, դժբաղդ դէպք և դժբաղդ հանդամանք մեզ զրկեցին մեր աշխարհի ընկիկ ժողովրդեան հետ խօսելու մխիթարութենէն. մեր չարաբաղդ պատերի նման մեզ էլ վիճակ ընկաւ նոյն չարաբաղդութեան դասն բաժակէն ըմպել։ Դառնադառն յիշատակներով տարաղիր

[1] Տես 1860 թուի Կռունկ Հայոց աշխարհի ամսագրի Ծ.Ա. թիւը, «Հրահանգ ազգային և բարոյական լուսաւորութեան վրայ» յոդուածը, որնոր գրուած է այն ժամանակուայ երկու մեծ Ազգային խնդրի յուզմանը նկատմամբ։ Առաջինն է Ազգային Ընդհանուր Եկեղեցական ժողովոյ կազմուելուն ըստ խնդրոյ Պոլսոյ ժողովրդականաց։ Երկրորդն է, Պոլսոյ Իտիրնէ գափուի Հայոց Գերեզմանատան համար բարձրացած խնդրի մասին՝ գիտնական Պարոն Սահակիանոս Նազարեանցի Հայաստանեայց Եկեղեցւոյ համար ստից ցգլուխ վերանորոգութիւն է հարկաւոր հրատարակելուն։

եղանք մեր հայրենի բուսնէն և եկանք քո մէջ նորէն ծլելու և ծաղկելու, ո՞վ տարագիր Հայոց ժողովուրդ։

Արդ, Լէնկթէմուրի մրջիւնի նման, որոյ ահարկու մատներէն քանի անգամ, որ պատի վրայէն վար կընկնէր նորէն դէպ 'ի վեր դիմելու կը ստիպէր, մենք էլ երեք անգամ վեր կացանք քեզ համար աղդային, բարոյական և մտաւոր մնուանդ ճարելու, երեք անգամ էլ ճանապարհի վրայ կանգ առինք։ Ոչ թէ Լէնկթէմուրի նման աշխարհակալի մտաներին հանդիպելով[1]*, այլ դու, ո՛վ Հայոց ժողովուրդ, որ աշխարհիս վրայ ցիրուցան, կերպակերպ հանդամանքով և այլևայլ դրութեամբ ես, քեզ մնռեռնալու ճանապարհը դժուարին և մեր կարողութենէ վերին լինելուն համար։*

Այսօր կրկին նոյն մրջիւնի նման բերնեբերում Այարայրի դաշտէն մի ծիլ առած քո մնան ենք դալի, ո՛վ Հայոց ժողովուրդ, այդ ծիլն քո նախնեաց արիւնով ոռոգած դաշտի դեռածիլ բոյսն է, քո մշակութեան ենք յանձնում, դու պէտք է լինիս քո դաշտի ծիլը պարարողն ու ուռճացնողը, քոնը քեզ եմ տալի, բայց արա՛ քո սրտի դռները և ընդունիր քո ամենապատուական սուրբ վարդապետի խօսքերն։

[1] Կըսուի թէ՝ Լէնկթիմուր քանի մը անդամ զօրաւոր թշնամիի մը հետ զարնուելէ ետքը, կը յաղթուի։ Մեկէն անասելի վհատութիւն և յուսահատութիւն մը կու դայ իր վրայ, պատերազմի դաշտը կը թողու և իր տաղաւարին ներքեւ քաշուած կսկսի տրտում սիրտով խորհել մարդու ճակատագրին վրայ։ Իր միտքն այս տեսիլով յուզուելու ատեն, մրջիւն մը կը տեսնէ որ ոսկեթել տաղաւարին վրայէն կը քալէր դէպ 'ի վեր։ Ձեռքը կերկնցնէ և վար կը հրէ զան։ Մրջիւնը կը գլորի, վայրկեան մը կը շփոթի, բայց շուտով իր առջի շաւիղը դտնելով կը շարունակէ իր քայլը։ Լէնկթիմուր երկու երեք անդամ վար կը նետէ զան, այլ մրջիւնը վեր ելնելէ չը դադրիր, հետաքրքրութիւն կու դայ սէդ աշխարհակալին վրայ և կուզէ անոր յամառութիւնը փորձել։ Ութսուն անդամ թաւալդլոր կը նետէ զանիկա և ութսունեորդին՝ առջի պէս եռանդուն կը դտնէ տկար կենդանին։ Ալ չուզեր շարունակել փորձը, կդդայ որ իր թեւը յոգներ է. սիրտը կը շարժի միտքը կը յափշտակուի և հանդարտ կը թողու զանիկա։ Մրջիւնը նորէն վեր կելնէ և յաղթական քայլով աշխարհակալին առջեւէն կուդղի դէպ իր նպատակը։ « Տըկարին յամառութեանը տուաւ յաղթութիւն » կըսէ Լէնկթիմուր իւրովի և ոտքի կելնէ . . . ։ Բանակը շուտով կը յարդարուի, թշնամին կը յաղթուի, բոլոր Ասիա կը հնազանդի և Լէնկթիմուր աշխարհակալը պսակը կառնու ամենէն տկար կենդանիին տուած լուին խրատը ընդունելով։ Տես Արեւմուտք Ա. տարուան Դ թուին 2 երեսը 1859 թուի։

որք են։ «Եւ յորժամ Մարտիրոսք և խոստովանողք և կապեալք նովաւ տեսանին, նովաւ օրհնի աշխարհն ամենայն, նովաւ օրհնին և տղայք նոցա յաճուն, նովաւ զդաստանան երիտասարդք նոցա 'ի սրբութիւն, նովաւ համեստանան ծերք նոցա յիմաստութիւն, նովաւ ուսանին իշխանք նոցա զմարդասիրութիւն, նովաւ անկանի դուք յԱստուծոյ 'ի սիրոս թագաւորին՝ շինել և խաղաղութիւն առնել բոլոր աշխարհին։ Նովաւ եկեղեցիքն պարծին իբրեւ քաջ և կատարեալ զինուոր, նովաւ վկայարանքն զարդարին, նովաւ և վկայքն ցնծացեալ բերկրին։ Նովաւ և Դաշտն Ա-արայրէ պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրեւաբեր ամպոց, այլ 'ի սուրբ և յարիւնաբուղխ վկայից ցանեալ և ցրուեալք սպիտակութիւնք սուրբ ոսկերացն։ Յորժամ կոխեսցեն ամենավաստակ ոտք խոստովանողին զլայնատարած տեղիս պատերազմին, յորժամ կենդանի մարտիրոս ընդ նա շրջեսցի կենդանի առ կենդանիս երթեալ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւն»[1]։

Թէ ի՞նչ խորհուրդ ունին սուրբ վարդապետի այս խօսքերը, կը խնդրենք, որ Բանն Աստուծոյ վարդապետող քարոզիչները մեր եկեղեցեաց բեմին վրայ մեկնեն քեզ, ո՛վ Հայոց ժողովուրդ, մինչդեռ մենք մեր ազգային, բարոյական և մտաւոր լուսաւորութեան աղբիւր համարելով՝ սուրբ վարդապետի այդ խորհրդաւոր խօսքերը իբրեւ խորհրդանշան կը դրօշմենք մեր հանդիսի ճակատը։

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԻԴԵԱՆ

Կ. Պոլիս. 1866 Յունուար 2.

[1] Տես Եղիշէի պատմութիւն Վարդանանց, ըստ Անձեւացեացն օրինակի, Վասն խոստովանողացն Հայոց։ Երես 302—303։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՇԻԼԼԷՐԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԻՐ ԿՈՒԼԼԻԷԼՄ ՏԷԼԼԸ [1]

ՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

ԱՂԱՍԵԱՆ

ՅԱՐԳԵԼԻ ԱՆՏՕՆԻՆ ԵՒ ՆԱԶԵԼԻ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ

ԹԱՐԳՄԱՆՈՂԻ ԿՈՂՄԷՆ

ՇԻԼԼԷՐԻ ԿԵԱՆՔԸ

Յովհան Քրիստոֆ Ֆրէտերիկ Շիլլերը ծնած է 1759 թուի Նոյեմբեր 4ին 'ի Մարբախ, Վուրդէմբերգի սիրուն ու փոքրիկ քաղաքին մէջ, որոյ դիրքը՝ նէգքար գետին նայող մի բլրի վրայ է. մի աւանդութիւն, որ ժողովրդեան բերանն է միշտ, կ'ասէ թէ՝ այն բլրին վրայ, ուր կառուցուել է այսօր այս սիրուն փոքրիկ քաղաքը, յառաջ՝ մի մութ անտառ կայ եղել, որոյ մէջ մի հսկայ է բնակած, հեթանոսական կենդանի աստուած, Մարս (Արէս) կամ Բագդոս [2]։

«Շիլլերն էլ մի հսկայ էր» կ'ասէ, նրա կեանքը գրող մի Գերմանացի։ «Այո՛, բանաստեղծութեան մի հսկայ, որ ծնել

[1] Շիլլեր Գերմանացի քերթողի վրայ խօսած է Յարգոյ դիտնական Պ. Ստեփաննոս Նաղարեանց, երբ նրա թատերական գործերէն «Մեսինայի հարսը» անուն դուսանական քերթուածի թարգմանութիւնը հրատարակեց 1861 թուի Հիւսիսափայլ ամսագրի առաջին թուին մէջ։ Իսկ Կուլլիէլմ Տելլի կեանքը 'ղ ծանօթ են արել 1862 թուին Յարգոյ Պ. Ճանքմեանը՝ Ֆլօրեան Ֆրանսիացւոյ Զուիցերիոյ ազատութիւնն վրայ յօրինած վէպը թարգմանելով և Յարգոյ Պ. Մովսէս Զաքարեան Բուսաղեանց 1863 ին Պետրբուրգ, լոյս տալով Կուլլիէլմ Տելլի վրայ մի ընտիր գրուածք՝ ընտիր տպուած։ Մենք էլ մեր հանդիսի միջոցով կը հաղորդենք մեր ընթերցող ազգայնոց Շիլլերի կեանքի պատմութիւնը և իր Կուլլիէլմ Տելլ թատերական քերթուածը։

[2] Որմէ քաղքի անունն էլ դուրս է եկել Մարբախ, որ նշանակում է Արէսեան Աղբիւր։

էր ժողովրդեան մնապաշտութեամբ նուիրական եղած տեղը։ Բայց Շելլէրը մի խեղճ կայարանի մէջ լոյս տեսաւ, իր մայրենական պարզ տանը, Գէորդ Քոտուէյլի, որ Նէգ քար դեռի յորդութեան ժամանակ, իր ունեցած մի քիչ կայքէն ընտիր մասը կորցնելով, հայադործութիւն էր անում այն միջոցին։ Քերթողի առաջին շարժմունքը մի անյայտ վիճակի մարդու շարժմունքն եղաւ. այն էլ շատ անգամ չքաւորութեան նեղութենէ վրդովուած։

Իր հայրը, Յովհան Գասպար Շելլէր քսաներկու տարեկան ձիաւոր զօրքերու դունդն էր մտել իբրեւ վիրաբոյժ սափրիչ. երեք տարուայ մէջ երկրորդ պաշտօնաւոր եղաւ. 1748 թուին Լ.քս-լա Շապէլի խաղաղութիւնը լինելու ժամանակ արձակուեցաւ ու 1749 ին ամուսնացաւ։ Երբ եօթնամեայ պատերազմը բացուեցաւ Նորէն ծառայութեան մէջ մտնել խնդրեց և ընդունուեցաւ Վուրդեմբերգի Լուիզ իշխանի գնդին մէջ օդնական պաշտօնաւորի աստիճանով։ Այս գնդին մի տարափոխիկ հիւանդութիւն հասնելով, Բոհեմիոյ մէջ, Շելլէրի հայրը կրկին իր առաջին բժշկութեան պաշտօնը ձեռք առաւ։ Հիւանդներին դեղ ու դարման կ'անէր և քրիստոնէական եռանդով մի և նոյն ժամանակ նրանց մօտ քահանայական պարտքերն էլ կը կատարէր։ Հիւանդներին իրանց աղօթքն ասել կը տար և նրանց սիրտ կը տար իրանց յաւերին համբերել, յորդորելով նրանց և սաղմոս ասելով։ Բոհեմիաէն մի ուրիշ գնդի հետ Հէս ու Թուրինկ անցկացաւ. յետոյ՝ պատերազմի վերջին Լուիզբուրգ քաշուեցաւ և այն տեղ երկրագործութեան տուաւ իրան։ Մի փոքր ժամանակ յետոյ Վիւրդեմբերգի Քարլ իշխանը նրան յանձնեց իր Ստուտկարտի մօտ շինել տուած պարտէզների տեսչութիւնը այն չքեղ ապարանքին բոլորտիքը, որոյ նա իր անապատը կ'անուանէր։ Այս տեղն էր, որ Գասպար հաղարապետի իրաւունք և անուն ստացած, իշխանէն յարգ ու պատիւ գտած և բաղդաւոր՝ իր կատարելու պարտաւորութեանցը համար, քաղցր բարեկեցութեամբ մի կեանք վերջացուց, որն որ շատ անգամ ալեկոծուել էր և դառն նեղութեանց մէջէն անց կացել։ Գասպար Շելլէր հաստատ բարքով, թունդ ու դաժան մարդ էր, բայց ողջամիտ, ժիր և գործունեայ. ինքն էր իրան

տուել մեծ մասով իր դատարակութիւնը. ծառերի և պարտէզների վրայ գրուածներ ունի, որոնք արժանաւորութենէ զուրկ չեն։ Երբ իր որդին աշխարհ եկաւ, դիրքին առաւ և դէպ 'ի երկինք բարձրացնելով, «Աստուած ամենակարող, գոչեց, շնորհէ՛ այս երախային հոգւոյն և մտքին լոյս և քո շնորհովդ տո՛ւր սրան այն դատարակութիւնը որոնք ես կարող պիտի չլինիմ տալ նրան»։ Գասպար բաւական ժամանակ ողջ մնաց և իր որդւոյն գրականական փառքը վայելեց, որոյ ծննդեանն իր չքաւորութեան ժամանակ գորովալի անձկութեամբ խառն՝ ուրախութեամբ ողջունել էր։ Ծերունի հօր համար բարեբաղդ օր էր այն օրը երբ իմանում էր, որ իր սիրական Ֆրէտէրիկ որդւոյն մի նոր գրաւոր գործը Աղուտակարտի մէջ պէտք էր տպուիլ։ Ազնիւ մարդն այս լուրը իմանում էր թէ՝ չէ՝ նոյն ժամուն տպագրին մօտն էր գնում և դողալէն ձեռագիրը ձեռքն առնելով, սիրտն սաստիկ շարժելով կարդում էր։ Այն քերթողական գրուածների հոգին լաւ հասկնալու համար, երկրագործական դրքերէն ձեռը վեր առաւ գրականական, պատմաբանական և բանաքննական գրուածներ կարդալու. հայրական սէրը, իդէաների նոր աշխարհ էր բաց անում իր առաջը, որոյ մէջ յառաջուց իր պարզ հոգին երբէք չէր մտել։ Վիրաբուժութենէ պարտիզպան էր եղել, իր պարտիզպանական կենացը վերջերին էլ դրագէտ լինելու վրայ էր՝ երբ 1796 թուին վախճանեցաւ։ Այն նամակն որ Ֆրէտէրիկ գրած է իր մօրը երբ իմացել էր, որ իր հայրն էլ չկար, ամենէն գեղեցիկ մեծարանքն է նրա յիշատակին. «Եւ թէ մտածելու էլ չլինիմ, ասում է նա, ինչ որ հայրս եղել է ինձ և մեր ամենին համար, կարող պիտի չլինիմ երբէք առանց սրտիս մէջ ցաւ զգալու մտածել նրա ժիր կենացը վախճանին վրայ, որնոր այնքան արդար հոգւով և պատուով վերջացուց։ Ճշմարիտ, փոքր բան չէ մի մարդու համար մի երկարատեւ ու դժուարին կենաց մէջ ինքն իրան հաւատարիմ մնալը և աշխարհս եօթանասուներեք տարեկան թողելն, այնպէս սարդ ու յստակ սրտով։ Ա՛խ, ո՞ւր էր թէ ես էլ քաշէի նրա ցաւերին պէս ցաւեր և նրա պէս անմեղութեամբ վերջացունէի իմ կեանքը, որովհետեւ մարդուս կեանքը դժար բան է. Աս-

տաւծ ոչ ինձ տուած յաջողութիւնքը, ամենքն էլ վանդաւոր չնորհներ են մարդուս սրտին և նրա բուն հանդստութեան համար։ Մեր հայրն երջանիկ է հիմա, ամենքս էլ նրա քամակէն պէտք է գնանք, երբէք նրա դէմքը մեր սրտէն պիտի չջնջուի և մեր զգացած ցաւը նրա համար աւելի սերտ սիրով պէտք է կապէ մեր սրտերը»։

Շելլերի մայրը, Եղիսաբէթ Քոտուէյլ, քնքոյշ սրտանի մի կին էր. որ իր հեղ բնութեամբ և քաղցր վարքովը չափաւորում էր իր ամուսնոյն բնութեանը մէջ եղած մի փոքր դաժան ու բուռն կերպերը։ Այս կինը դէռ իր մատաղ հասակին մէջ բանաստեղծութեան և երաժշտութեան վրայ ոստիկ սէր էր ցոյց տալի. ծնողքն աղքատ լինելուն՝ կարող չեղան նրան, իրա ունեցած միտութեանց յարմարաւոր մի դաստիարակութիւն տալ։ Բայց նա՝ ինչ որ իր սրտին զգացմունքը, բանաստեղծութեան մասին, կարող էր սնուցանել, մեծ ցանկութեամբ այն բանին քամակէն էր ընկնում, այնպէս, որ իր բարեկամներն իրան իբրեւ մոլեկան սիրով վառուած մի աղջիկ էին համարում։ Այս կնոջմէ մի քանի քերթուած պահուած են, որոնք իր ամուսնոյն են ուղղուած իրանց ամուսնութեան ութերորդ տարեդարձին օրը։ Թէ որ այս ոտանաւորները մի ուրիշ լեզուի դառնան հասարակ մնքէ դուրս եկած պարզ զրուցուածք կը համարուին. բայց իր բուն լեզուին մէջ նշանաւոր են անների յօրինուածութեան և չափերի դաշնաւորութեան կողմանէ։ «Ա՛խ, ասում է, թէ որ ձորի մէջ վարդ ու մանիշակ ծաղիկներ դանէի, այն ծաղիկներով քեզ այս տարուայ համար մի շատ աւելի սիրուն պսակ կը հիւսէի, քան մեր ամուսնութեան պսակը»։

«Վիշտ է ինձ համար տեսնել հիւսիսի ցուրտ տիրապետութիւնը, բոլոր մատաղաշ ծաղիկներն սառած հողին մէջ սառչում են, բայց այն՝ որ չսառչիր, իմ սիրող սիրտն է, որն որ քեզ համար է և որնոր քեզ հետ թէ ուրախութեանց և թէ դժբաղդութեանց հաղորդ կը լինի»։

Տարակոյս չկայ, ասում է, Պ. Շուաբ, որ առաջինն է այս ոտանաւորները յիշատակողը, որ Շելլէր պարտական չլինի իր մօրը՝ բանաստեղծութեան զգացմունքը՝ և այն ընտիր դերքերին՝ որ նա իր սովորական ընթերցանութիւն էր անում

նրանցով։ Նոյնպէս, Շիլլէր իր մօրն էր պարտական այն բարեպաշտ հոգին, որ իր մատաղ հասակէն իրա մէջ երեւան եկաւ. մինչեւ չորս տարեկան լինելը, իր մօրը հետ Մարբախ մնաց, իր հայրն այն ժամանակ բանակումն էր մնացել եօթնամեայ պատերազմին համար և խեղճ մայրը սիրտը լիքը սիրով երեխային վրայ խնամք էր տանում, որ մի քընքոյշ կազմուածքով աշխարհ էր եկել և շատ անդամ հիւանդ էր լինում։ 1763 թուին. Գասպար Շիլլէր նորէն իր հայրենիքը դարձաւ, երկու տարի յետոյ Վիւրդէմբէրդի սահմանադրութիւն անելու։ Այն տեղ սկսաւ Ֆրէտերիկ իր ուսմունքը, մի արժանաւոր երէց նրան ցունարէն և լատինէրէն լեզուների սկզբունքը սորվեցուց։ Մայրն էլ, որ երկու տարի յառաջ կարդալ ու գրել սորվեցուցել էր նրան, միևնոյն ժամանակ իր դասերը սկսաւ տալ։ Երբեմն նրան՝ Աստուածաշնչէն մի պատմութիւն կը պատմէր, որուն երախայն բոլոր սրտանց մտիկ կ'անէր, երբեմն կը զուարճացնէր նրան, այն սիրուն և պարզ աւանդութեանցմէ պատմելով, որոնց յիշատակը դերմանացիք մինչեւ այսօր խիստ լաւ պահած ունին, երբեմն էլ՝ կարդալ կը տար նրան, իր սիրական վիպասանների դեղեցիկ հատուածները, Մէսիականի երեւելի ոտանաւորները[1], որուն առաջին երեք երգերը նոր էին լոյս ածուել։ Կէրարտի երգերն ու Կէլլէրտի առակները[2]. երբեմն էլ մայր և որդի միասին դէպի հին ժամանակներն էին դիմում։ Մի խօսքով նրան մի դրականական ուսմունք էր տալի, սորվեցնելով նրան՝ ճանաչել մի ուրիշ դպրոցի բանաստեղծներին, նրանց կատարելութիւնքն ու թերակատա-

(1) Մեսիական անուն քերթուածը, Կլոպսդրօք Գերմանացւոյն է, որ անցած դարումն է ծնած, այս քերթուածը դիւցազնական բանաստեղծութեան ձեւով շինուած, իր առարկայն Մեսիան է, քսան երգ է ամենը, Ալէքսանդրեան ասուած չափու նմանութեամբ, որն որ ինքը Կլոպսդրօքն է եղած Գերմանական բանաստեղծութեան մէջ մտցնողը։ Սա բացի Մեսիականէն ունի նաեւ այլ և այլ քերթողական գրուածքներ, ինչպէս աղդային երգեր, եղերերգութիւնք և ողբերգութիւնք։

(2) Կէրարդ և Կէլլէրտ անցած դարու քերթողներ են, առաջինն ունի օրհնութեան երգեր, իսկ երկրորդն առակներ ու շինծու վէպեր, որոնք իր անունն երեւելի են արած Գերմանիայում։

թաթիւնքը ցոյց տալով։ Դժուար չէ Գերմանիոյ մէջ գտնել այնպիսի աննշան վիճակով կանայք, որոնք մի ուսմունքի համեմատ հասարակ սկզբունքն առնելով, յետոյ իրանք իրանցմէ զարգացած չլինին իրանց խաղաղ ու քաշուած կենացն ընթացքումը և յաջողած ընթերցանութեամբ իրանց ճաշակը մշակելու և գրականական ընդարձակ տեղեկութիւնք ստանալու, որ՝ որքան որ քաղցր են պահպանելն, այնքան էլ գրեթէ միշտ միացած են այդ տեղեկութիւնքը մի մեծ պարկեշտութեան հետ առանց մեծաբանութեան և խմաստակութեան։ Շիլլերի մայրը, այս կանանցմէ մինն էր, ընտանեկան կենաց պահապան հրեշտակներն աւանդել էին նրան տօն օրերի հանդիստ ժամերուն և ձմեռուայ դիշերները, այն քաղցր գիտութիւնը, որ ուրիշ կանայք կ'երթան զուր տեղ դտնելու դպրոցների մէջ, մեծ անուն հանելով և փոքր աշխատելով։

Մինչդեռ քահանայի դպրոցական դասերն ու մայրական ուսմունքն այսպէս վաղ օրէն Ֆրէտերիկի մատղաշ միտքը կը կրթէին, բնութեան սէրը, այն վսեմ մտածմունքների և մարդուս հոգւոյն կեանք տուող յուզմունքների պաշտելի աղբիւրը զարթնումէր նրա սրտին մէջ։ Նէգքար գետի այս ուրախ ու կանանչ ձորերէ, որոնք Մարբախ քաղաքին շուրջը կը պատեն, Շիլլեր յանկարծ փոխադրուած էր զգումի իրան մի ահեղ տեսքով երկրումը։ Լորիս գիւղը շինուած է սոճի ծառերով պատած մի դաշտավի վրայ, ուր երբէք ձայն ձպտուն չլսուիր. նրա կշտին մի բլուր կայ մութ ծառաստանով, որու շորս դէնն են մի վանքի պարիսպները։ Այս բլրի քամակով տարերի մի շղթայ կը բարձրանայ, որ այս վիպական դաշտավայրին մի վեհ կերպարանք կը տայ, վանքի մէջն էլ Հօհէնստոֆենեանց տապանները կան [1]։ Վիպասանական և տապե-

[1] Հօհէնստոֆէն մեծ տուն և մեծ ցեղ Սուաբիոյ, որմէ շատ կայսրներ դուրս են եկել Գերմանիոյ համար։ Այս տանն ամենէն հին ծանօթ եղած ցեղապետներն են 1045 ին. Ֆրէտերիկ բիւրէնս. Ֆրէտերիկ նախնին 1050 ին. Ֆրէտերիկ միականին 1110 ին, որ Հէնրիկ Դ.ի մահէն յետոյ, յառաջ Հռովմայեցւոց թագաւոր ընտրուեցաւ և յետոյ Գոնդրադ Գ. անունով կայսր անուանեցաւ ընդհանուր ձայնով։ Սրա դահակալութեամբ սկսան Կելֆեանց և Կիբելեանց պատերազմները, որոնք Գերմանիան և Իտալիան այնքան ժամանակ արեան մէջ թաթաւեցին։ Հօհէնստոֆէնի տան կողմէն եղողներն ասում էին Կիբելեանք, որանց հակառակորդները Կելֆեանք։

տական աւանդութեամբ լիք մի ժամանակի, դիւցազն ու փառաւոր մի ցեղի պատմութիւնը, ինչպէս իր յաղթութեամբ նոյնպէս և ձախորդութեամբը հռչակաւոր, այս տեղ վայրի և նախնի բնութեան կշտին կանգնած էր։ Ի՞նչ ընդարձակ դաշտ մի նորածին երեւակայութեան համար՝ որ հէնց բացուելու վրայ էր։ Ֆրէտերիկ սիրում էր մանդալ այս անտառի տխուր շուաքին տակ, մոգելել դէպ 'ի վեր բլուրը և նստիլ վանքի պարսպին տակ՝ խորը մտածելով։ Նրա հոգին այն յուզմանց մէջն էր բացուում, որոնք անծանօթ են բոլոր այն մարդկանցմէ որ միայն քաղաքների մէջն են բնակուել, այն նկատողութեան և հիացողութեան երջանիկ ժամանակը, որով երեխան իր բնաձին կամեցողութեամբ աւելի լաւ կը հասկանայ քան թէ այն մարդն՝ որ իր մտածողական և քննողական խելքովը կիմանայ բոլոր այն ահեղ և ուրախ պատկերները, որ սիրուն օրերը սարերի վրայ կը նկարուին և ձորերի մէջ կը զուարթանան ինչպէս մի ծաղկէ փունջ, որ արեւու ճաճանչներէն կը բացուի և այն շուաքն ու լոյսը մէկ՝ քող կը ծածկէ, մէկ՝ լոյս կը ծագէ անտառների ամենէն խորը տեղերը։ Այն տնկերի խորհրդաւոր կեանքը, որ մինչև քարափների վրայ կը բարձրանան և այն բիւրաւոր էակներն որոնք օդին մէջ կը ճլուրլան, ջրի մէջ կը ծփծփան, ցօղ կաթլի մէջ լոյզ կը տան կամ թէ անեւրեւան կը լինին մի ծառի բունի տակին։

Շատ անդամ էլ Ֆրէտերիկի հայրը բանակ կը տանէր նրան, ուր պարտաւոր էր դնալ երբեմն զօրքերի կրթութեան ժամանակ դանուելու, կամ թէ այն կողմերը դանուած մի հին դղեակ, որու պատմութիւնը նրան կը պատմէր։ Այսպէս ամեն մի անդամ մանդալը տղուն համար յիշատակների առատ աղբիւր էր։ Ցղայոց հոգւոյ յուզմունքն անսահման հետեւանքներ ունին Զուիցերիոյ յատակ ակունքների նման, որոնք աներեւան՝ կանանչների և ծառերի ճիւղերի տակով կը վազեն, այս յուզմունքներն էլ յառաջ կը քշեն իրանց ընթացքը մեր հոգւոյ մէջ և թագուն կը մնան մեր մտքի զբաղմունքների տակ։ Բայց մի դիպուածական խօսք, մի յանկարծական ձայն և մի պատահական նայեցուածք այդ յուզմունքն իրանց թագուն եղած տեղէն դուրս կը հանեն և մեր աչքին առջև կենդանացնելով, մեզ իրանց ներքև կ'ածեն։ Ո՞վ

գիտէ թէ՝ Հօհէնստօֆէնեանց թատերական պատմութիւնը Շիլլէրին պատմուելով նոյն իսկ այս ասպետների և կայսրների դերեղմանների վրայ, ապաւորուած չլինի վաղիէկ առանց իրան իմանալուն, մի առանձին ձգտում նրա խելքին և թէ իր մատաղ հասակին մէջ զգացած ազդեցողութիւնը՝ իր ընութեան վրայ ունեցած վառուն սիրոյն համար յետոյ ներգործած չը լինի և նրա ճակատագրին վրայ։ «Օ՜հ, ի՞նչ լաւ է այս տեղ մարդս, դուշեց մի օր, երբ առանձինն էր դանուում իր ընկերների մէկին հետ Լորխու անտառի մէջ. բոլոր իմ ունեցածներէ ձեռս վեր կառնեմ (կը հրաժարուիմ) քան թէ այս ուրախութենէ, որ զգում եմ այս դալար ծառերի տակ»։ Միևնոյն ժամանակ, որպէս թէ իր դրած ուխտը հաստատում լինէր մի խեղճ երեխայ հեռուանց՝ հինումին զգեստներով և կուչ եկած մի ծանր խուրձի տակին, դէպ իրան յառաջ էր դալի։ Ֆրէտերիկ վաղեվաղ նրա մօտն է դնում և նրա երեսին՝ նայում է թէ չէ, սրտանց խղճում է դրա վրայ և դրպանում բոլոր ունեցածը հանում է ու նրա ձեռին է տալի. մինչեւ անդամ մի հին վոդ, որնոր հայրն իրան պարդեւ էր տուել իր ծննդեան տարեդարձի օրը։

Մի ուրիշ անդամ էլ, ամառուայ շոք օրին ու իրիկուայ դէմ Ֆրէտերիկ դուրս է լինում դնացած, բայց յանկարծ սեւ սեւ ամպեր երկնքի վրայ դիզուում են, փայլակները փրփրում ու մրրիկը տրաքում և դեռ Ֆրէտերիկ չերեւում։ Հայրը շըւարած՝ դէս ու դէն վազ է տալի նրան դանելու. մինչեւ որ դնում են ու տեսնում, որ հանդարտ նստած է բլրի ամենէն բարձր ծառի տակին։ Ի՞նչ ես անում այդ տեղ, դոչում է ծնողքը, թշուառ երեխայ։ Գիտենալ էի ուզում, պատասխանում է Ֆրէտերիկ թէ՝ ո՞ւր տեղէն է դալի երկնքի կրակը։

Այսպէս՝ դաշտերումը կամ հօրենական տանը մէջ անցուցած կենաց յուզմունքն ու իր մօր և Մօղէր երէցի ուղղութեամբ ստացած ուսմունքը միանում էին նրա միջում Աստուածպաշտութեան և բարեպաշտութեան զգացմունքի հետ։ Արդէն, երբ իրան հարցնում էին, թէ՝ ի՞նչ պիտի լինի ինքը մին օր, բայց ասում էր, թէ քահանայ է կամենում լինել. և իր երախայական եռանդով, քահանայական կոչման համար, շատ անդամ վեր էր կենում աթոռի վրայ մի դոդնոց էր

առնում իր վրայ, չապկի ձեւով (շուրջառի) և սուրբ դրքէն մի բնաբան դանելով սկսում էր քարոզ տալ, պահանջելով՝ որ իրան մոադիր լինին. և թէ որ պէտք է հաւատանք Գերմանացի վարքագրերին, ասում են թէ իր այն ժամանակուայ քարոզների մէջ բանականութիւնն արդէն երեւում էր։

Սակայն Շիլլերի ծնողքի վիճակը շատ նեղ էր, և օրէ օր աւելի էր անտանելի լինում. հայրն իբրեւ զօրաժողովի պաշտօնական՝ պէտք էր, որ ամէնը տասնուինն ֆիորին թոշակ ստանար, երեք տարի շարունակ այս չափաւոր թոշակի և ոչ մի ստակին էր դպել։ Ապրիլ կարող լինելու համար, իր հօրենական ժառանգութիւնը կտոր կտոր ծախեց ու իր աղգականներին ու բարեկամներին դիմեց օգնութիւն խնդրելու։ Բայց վերջն էլ անկարող լինելով այս դրութեամբ դիմանալ, ուղղակի մեծ իշխանին դիմեց, որ իր իրաւունքների վաւերականութիւնը ճանաչելով՝ հրամայեց հատուցանել նրան՝ յետ մնացած թոշակը և Լուիզբուրգի զօրադնդին մէջ էլ մի պաշտօն տուաւ նրան։ Լուիզբուրգի մէջ, Ֆրէտերիկ Լատիներէն լեզուի մի ուսուցչի յանձնուեցաւ, որուն անունն էր Ժահն, այս Ժահնը մի քարտուղարի մարդ լինելով՝ առաջինն եղաւ նրան՝ խիստ կանոնաւոր կենաց և սքոլաստիկեան պաշտպանին դառնութեան խստութիւնը զգացնողը։ Որչա՞փ ուրախ, որչա՞փ զուարթ որ էր Շիլլեր Լորխու կացարանումը, այս նոր վարպետի թաթի տակ սկարացաւ ու ճնշուեցաւ ու դառաւ վախկոտ և սմեղուկ, բայց սակայն բաւական յառաջ էր գնում և միշտ էլ ցանկանում քահանայ լինել և կանոնաւոր կերպով, այն անձանց վրայ տրուած քննութենէ էր անցկենում, որոնք վարժարանէն դուրս գալով, Աստուածաբանութեան համար մասնաւոր դպրոցները կը մտնէին։

(Պիտի շարունակուի)։

ԹԱՐԳՄԱՆՈՂ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ՆԵՐՍԷՍ Ե.Ի ՄԱՀԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԱՏԹԷՈՍ Ա.ՆՈՑՆ ՄԱՀԸ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
1857 — 1866

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱՅՍ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՅՈՒՆ

Մի գրուածք կարդալէն յառաջ կամ յետոյ, ընթերցողը պէտք է գիտենայ՝ թէ ինչ պատճառ եւ ինչ նպատակ ունեցել է իր կարդալու կամ կարդացած գրուածքը, որ լոյս է տեսել։ Ի հարկէ մեր ընթերցողն էլ ինքն իրան այս հարցումը պիտի անէ, թէ՝ ինչ պատճառով եւ ինչ նպատակով այս գրուածքն եղել ու լոյս է տեսել։ Մենք, ընթերցողին այդ ինքն իրան անելու հարցմանը, հէնց այժմէն կը փութանք պատասխանել։

Մի ազգ, մի ժողովուրդ, սիրելի ընթերցող, այն ժամանակ ամենէն թշուառ, ամենէն խեղճ, ամենէն տխուր եւ ամենէն վատթար վիճակի մէջ է, երբ իր ասածն ու լսածը չհասկանար, երբ իր արածն ու դրածը չգիտեր, երբ իր տեսածն ու իմացածը չըմբռներ, երբ ինչ լինելն ու ուր տեղ գտնուիլը չտեսներ եւ իր ուր տեղէն դալն ու ուր տեղ գնալը կը մոռնայ բոլորովին՝ եւ այնպէս մի բան կ'ասէ ու իրա պէս ասածն ու լսածը չհասկացողին կը պատահի. մի գործ կ'անէ առանց յետոյ ու առաջը նայել գիտենալու. ինքը՝ տեսնել ու իմանալ կը կարծէ, իր տեսածն ու իմացածը ուրիշին ցոյց տալ եւ իմաց անել կարող չլինիլ. ու, ես եմ եւ կամ կ'ասէ, առանց իր ինչ լինելն եւ ուր տեղ գտնուիլը ուրիշի ծանօթ անել կարող լինելու. իսկ իր ուր տեղէն դալուն եւ ուր տեղ գընալու մասին այնքան գիտէ, որ ծնել է եւ մի օր էլ 'ի հարկէ՝ պէտք է որ մեռնի։

Ազգերի ու ժողովրդների այս վիճակը, ամենէն ողորմելի, ա-

մենէն սարսափելի եւ ամենէն յուսահատական վիճակն է. ոչ հալածանքի ժամանակի կը նմանի, ոչ պատերազմի ճղնաժամի եւ ոչ հիւանդութեան եւ սովածութեան հարուածի։ Երեւակայիրմի բազմամարդ տնուոր, այնպիսի մի տան մէջ բնակուած՝ որ թէեւ այդ տունը ներսէն զարդարուած ու դրսէն էլ փառաւոր երեւայ, բայց իրօք խախուտ եւ խարխուլ հիմնուած լինի. ամենեւին չապահոված, ոչ մրրկի ու փոթորկի դէմ, ոչ կրակի եւ կայծակի դէմ, բայի սրանցմէ, իր չորս կողմերն էլ բնակուած լինին վարպետորդի դերող դերփող հարեւան տնեցիք եւ սրանց բաղդէն՝ այս բազմամարդ տնուորը իր բնակած, ներսէն դրսէն զարդարուն՝ բայց փլիլան տանց մէջ, ոչ խաղաղութիւն ունենայ, ոչ հանգստութիւն, այլ դիշեր ցորեկ բղաւոց, ճղաւոց, պօռպռալ կանչել լինի իր մէջ այն աստիճան, որ դող հարեւանները քանի տան դուռը, կամ լուսամուտը բաց դանեն, ներս մտնեն, ու մի բան առնեն տանէն ու ինք չիմանայ. իսկ մրրիկ վեր կենալու որ լինի, կամ թէ տունը կրակէ որ բռնկի կամ շարժէ կործանի. այդ տնուորն այնքան յիմարած, այնքան չչկլուած լինի, որ ոչ փոթորիկը լսէ, ոչ կրակը նշմարէ եւ ոչ շարժը զդայ, այլ կրքերով ու ախտերով մնուած ու փչացած իր գլուխն էլ պատէ պատ, քարէ քար, այնքան, այնքան տայ, որ մինչեւ փչանայ։

Այո՛, շատ ազգեր, շատ ժողովուրդներ աշխարհիս մէջ այս վիճակումն եղել են, այս վիճակէն անց են կացել ու պրծել. մի զարմանար, թէ որ ասեմ քեզ, թէ այսօրուայ քաղաքակիրթ եւ լուսաւոր Եւրոպացիք էլ եղել են երկար ժամանակ այդ դառնադառն վիճակումն ու դարերով են աշխատել նրա մէջէն դուրս դալու. իսկ թէ մեր նախնիք այսպիսի մի տխուր վիճակ ունեցել են թէ չէ, այս տեղ չէ, որ պիտի խօսինք. մեր նախորդ պապերու վիճակի մասին արդէն խօսել ենք [1]. կը մնար մեր օրերու, մեր այսօրուայ դրութեան վրայ խօսել, որն որ մեր աչքովն ենք տեսել ու ականջովն ենք իմացել։

Հէնց այս է այս գրուածքի լինելուն պատճառը. ցոյց տալ Հայոց ժողովրդեան՝ իր հոգեւոր գլխուն, իր հոգեկան կենացը զօրութեան, իր ազգային ու բարոյական ընկերականութեան ղեկավարին վիճակը, ինչպէս մի հայելոց մէջ այնպէս էլ այս գրուածքի մէջ։ Իսկ նպատակը այն է, որ տեսնելով Հայոց ժողովուրդն իր այսօրուայ վիճակի պատկերը, լաւ ճանաչէ նրան, քաջ գիտենայ

[1] Տես Կուռնկ Հայոց աշխարհի ամնագրի Ա. տարուայ Ե. Զ. Է. Ը. թուերի մէջ «Խօսք Հայոց ազգային և բարոյական ընտանեաց վրայ» գրուածքը։

նրա թշուառ ու վատթար դրութիւնը, որն որ մեծ մասով ու շատ կողմէն իր սառն անտարբերութենէ յառաջ է եկել. ողորմի նրա վրայ, ցաւ զգայ սրտում նրա համար եւ վեր կենայ ճար ու ճարակ անէ եւ պրծացնէ այդ վիճակէն, որն որ նկատմամբ ազգային հոգեկան ու մտաւոր լուսաւորութեան՝ վերեւը քո աչքի առաջ բերած պատկերէն շատ չտարբերիլ։

Ցոյց տանք այս տեղ, մեր Հայոց ժողովրդին այսօրուայ գըտնուած վիճակին մանրանկար պատկերը, մի քանի խօսքով իբրեւ պատրաստութիւն։

Մարդկային ազգի ընկերականութիւնը սկսուելիս, երկու տեսակ զօրութենական խառն իշխանութեամբ է սկսուել, որոնք ասուել են հին ժամանակներումը, Աստուածային եւ մարդկային, երկնաւոր եւ երկրաւոր եւայլն, եւ որոնց նոր օրերումն ասում են հոգեւոր եւ մարմնաւոր, նիւթական եւ բարոյական եւայլն. այս երկու տեսակ զօրութիւնքը, երբէք իրարմէ բաժնուած՝ միմեանց միւսին չէ եղել աշխարհիս որ եւ է տեսակ մարդկային ընկերականութեան մէջ։ Ո՛րն որ յառաջ է ծագել՝ միւսն իրան հետեւանք է ունեցել. թէ որ երկրաւոր զօրութիւնն է ծագել յառաջ՝ երկնաւոր զօրութիւնն է իրան թիկունք բռնել. թէ որ հոգեւորն է նախ յառաջ եկել, մարմնաւորէն է պէտք ունեցել։

Քրիստոնէութիւնը, Քրիստոսի Եկեղեցին, Քրիստոնէից ընկերականութիւնն է աշխարհիս վրայ Աստուածային, երկնային, հոգեկան եւ մտաւոր զօրութիւնը՝ մարդկային, երկրաւոր, մարմնական եւ նիւթական զօրութենէն բաժանողը։ Այս բանս Քրիստոնէութեան՝ մարդկային ազգի լուսաւորութեան համար արած ամենամեծ բարիքներէն մինն է։ Այս մի սկզբունք էր աշխարհիս վրայէն ջնջելու մարդկային կամ նիւթական կոպիտ զօրութիւնը եւ նրա տեղ բարոյական կամ հոգեկան զօրութիւնը հաստատելու, որն որ մի միայն վայել է այսօրուայ մարդկային ազգի ընկերականութեան։

Լուսաւորութեան այս ամենամեծ սկզբունքն իրօրէն կատարեց Քրիստոսի նախնական Եկեղեցին, ինչպէս մեր հայրենի աշխարհին մէջ՝ այնպէս էլ այն ամեն աշխարհներումն ուր հաստատուեցաւ։ Բայց արեւմտեան աշխարհներումը, Քրիստոսի Եկեղեցին ուրիշ կերպով տարաւ իր յաղթանակը. այսինքն, երբ հոգեկան աշխարհը նիւթական աշխարհէն բաժանեց՝ ինքը դժբաղդութեամբ մարմնաւոր եւ երկրաւոր իշխանութիւնն էլ իր աստուածպետական իշխողութեան տակ ճնշելու ցանկութեան մէջն ընկաւ։ «Ի՞նչպէս, ասաց ինքն իրան, ես իրաւունք ունենամ եւ բանս ու գործս մար-

դուս մէջն եղած ամենէն վսեմ, ամենէն ազատ բանին՝ այն է, նրա մտքին, նրա կամքին, նրա խղճին եւ նրա հոգւոյն հետ լինի եւ իրաւունք չունենամ ես՝ նրա արտաքին մարմնաւոր եւ երկրաւոր կարիքների վրայ տիրելու. ես՝ որ արդարութեան եւ ճշմարտութեան պատգամն ու թարգմանն եմ, կարող պիտի չլինիմ ուղղել եւ վարել մարդուս աշխարհային եւ քաղաքային յարաբերութիւնքն ըստ արդարութեան եւ ճշմարտութեան»։ Այս սկզբունքն ունենալով եւ իր մարմնաւոր եւ հոգեւոր զօրութիւնքը Արեւմտեան աշխարհներումը, Քրիստոսի Եկեղեցին կառավարողներն իրանք իրանց մէջ առանձնացուց եւ բոլորովին կառավարուողներէն բաժանուելով կատարեց այն նշանաւոր իրողութիւնը, կամ լաւ է ասել, այն մեծ մոլորութիւնը, այսինքն եկեղեցականաց ժողովրդականացմէն բոլորովին բաժանուիլը եւ անկախութեան դիմելով տիրապետութեան հակիլը, այնպէս, որ ԺԲ. դարուն Եւրոպիոյ մէջ Քրիստոսի Եկեղեցին մի ժամանակ կարծես, անհրեւոյթ եղաւ, վասն զի եկեղեցականք աշխարհն իրանց ձեռին առին՝ իրանք էլ Հռովմայ Պապերու ներքեւն ընկան, իսկ ամբողջ Եւրոպիան մի ընդարձակ եւ կանոնաւոր Աստուածպետական կայսրութեան տակ։ Այս բանս, ուշիմ ընթերցող, որն որ լուսաւորութեան պատմութեան մէջ երբէք թագուն պէտք չէ մնայ, շատ մեծ ու դառն չարեաց պատճառ եղաւ եւ խիստ էլ շատ թանգ նստաւ Քրիստոսի Եկեղեցւոյն։ Մի մտածիր, ինչ կը նշանակէ հոգեւոր եւ մարմնաւոր իշխանութիւնքը միասին ձեռին ունենալ աշխարհիս վրայ տիրելու, սրամէն դառն, սրամէն տխուր, սրամէն ցաւալի տիրապետութիւն չէ կարելի որ լինի աշխարհիս վրայ. մի մարդ իր բարոյական կեանքը, այսինքն իր խելքը, միտքը, խիղճը, հոգին այն մարդու ձեռին յանձնել կառավարելու, որուն յանձնել է իր նիւթական կեանքը, այսինքն իր արտաքին գործին, շահուն եւ բաղդին, ուղղութիւնը, կը նշանակէ կատարեալ եւ ճշմարիտ բարոյական անձնասպանութիւն, որն որ մարմնաւոր սարկութենէն, սիպիրական բանտարկութենէ հազար անգամ վատթար դերութիւն է։ Այս էր, Հռովմայ Պապերու Աստուածպետական միակերպութեան դրութեամբ Եւրոպիոյ եւ յետոյ բոլոր աշխարհիս վրայ տիրապետելու ջանքը, որու դէմ շատ այլեւայլ արդելք վեր կեցան եւ դարերով արիւն քրտինք թափել հարկ եղաւ կործանել ու վիշրել այդ ահաւոր չէնքը եւ նրա ձեռնէն պրծացնել մարդկային հոգեկան եւ մտաւոր լուսաւորութիւնը [1]։

[1] Տէս Կիզո, պատմութիւն Քաղաքակրթութեան Եւրոպա։ Ե. Զ. դասերը, Կռունկ Հայոց աշխարհի Բ. տարուայ Է. և Ժ. թուերումը։

Հաւատի եմ, որ ուշիմ ընթերցողը ճանաչեց այս տեղ պապականութեան բուն պատկերը. եւ ինչ հարկաւոր էր այս պատկերն այս տեղ — նրա համար, որ Ռուսականութիւնն էլ այսօր չատ չըտարբերիլ այս կերպարանքէն, որու վրայ պիտի խօսինք։

Ռուսականութիւնը, որ է դուսար Բիւզանդիոնականութեան հագուած եւ զուգուած է պապականութեան զգեստներով, միայն իր ձեւերը իբր թէ ժամանակաւոր հանգամանքների յարմարցուցած է։ Ցարը, որ Ռուսերէն կայսր էլ, պապ էլ կը նշանակէ, մի ձեռին սուր, մի ձեռին խաչ ունի բռնած, իսկ սրատումն Ռուսական միակերպութիւն կրօնի, լեզուի եւ ազգայնութեան, այսինքն Արեւելեան Եկեղեցւոյն Պապ լինել (փրաւասլանիա) ուղղափառութիւնը տարածելով, Արեւելեան Քրիստոնեայքը Ռուսաց կամ Ցունաց կղերի ձեռին տակ բերել, նոյն կղերին գլուխն էլ ինքը լինել, որ կը նշանակէ պարզապէս երկիրների եւ աշխարհների տէր լինել յանուն կրօնի. Ի հարկին արիւն թափելով, մարդիկ սպանելով, ազգեր վճայնելով, իսկ առ հասարակ, նրանց հոգին, նրանց սիրտը, նրանց միտքը փըչացնելով եւ նրանց հազար տեսակ յայտնի կամ ծածուկ, ուղղակի կամ անուղղակի արդելք ու խափան դնելով, որ իրանց դպրութիւնն ու պամութիւնը չառաջանին, իրանց եկեղեցին ու օրէնքը չճանաչեն, իրանց խելքն ու միտքը չբացուին, մի խօսքով ազգային, հոգեկան եւ մտաւոր լուսաւորութիւն չտեսնեն։

Այսօր, ուշիմ ընթերցող, Հայոց ժողովրդի հոգին այս երկու սրին մէջ տեղն է գտնուում, Պապականութեան եւ Ռուսականութեան։ Ի՞նչպէս է ձգել իր հոգին այս երկու սրերի մէջ տեղ՝ մեր սկզբումն նկարագրած վիճակումն գտնուելով ինքն իրան թշնամուցն կիրքն է յանձնել — Այս գրուածքն որ կարդաս, կիմանաս ով ընթերցող այս սխուր վիճակին ճշմարտութիւնը։

Արդ՝ մեր այս յիշատակարանին առաջին ու գլխաւոր նպատակն է խմաց անել Հայոց ժողովրդին իր գտնուած վիճակին վրատանը նկատմամբ Ռուսականութեան, քարոզելով իրան, որ ինքն ու իր եկեղեցին մի հոգի եւ մի մարմին են եւ ոչ թէ իրարմէ բաժանուած առանձին կարգեր մինը միւսին վրայ տիրապետող. ինչպէս կամենում են համոզել մեզ՝ մի քանի անհարազատ սեւագլուխներ իրանց անձի օգտի համար։ Երկրորդ եւ յորդորել, որ վեր կենան եկեղեցականք եւ աշխարհականք մի սիրտ մի հոգի լինելով, պաշտպանեն իրանց նախնեացմէն մնացած անմահ եւ անգին գանձը, այն է Հայաստանեայց Եկեղեցին, որն որ՝ ոչ բարձր ու վերին Ասիոյ ահարկու բռնաւորների սրերը, ոչ Պապերու հարիւրաւոր տարիներով արած հնարովի ջանքերը եւ ոչ Ռուսիոյ մէկ

դարէ հետէ գործացած նենգահնար որոգայթները կարող են եղել ջնջել։

Ա՛րդ ոգեւորիր, Հայոց Ժողովուրդ։ վեր կաց եւ կենդանացու քո հոգեկան եւ բարոյական զօրութիւնը՝, որ Տէր Աստուած ինքն է տուել քեզ եւ քո նախնիքն իրանց արեան գնով այսքան դարեր պահպանել են։ Պատսպարիր քո անձն իբրեւ մի վահանի տակ քո Աստուածային իշխանութեանը ներքեւ, վասն զի առանց դրան չիք քեզ համար հոգեկան, մտաւոր եւ ազգային կեանք։

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԻԳԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐՍԷՍ Ե·Ի ՄԱՀԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԱՏԹԷՈՍ Ա·ՆՈՅՆ ՄԱՀԸ

1857—1866

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ներսէս Ե·ի մահը· — Սուրբ Աթոռոյն տեղապահ, Արագածունի Ղուկաս արքեպիսկոպոսի եւ Էջմիածնի Միաբանութեան խորհուրդն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասին· — Ջալալեանց Սարգիս Եպիսկոպոսի ջանքը Կաթողիկոս լինելու եւ Թիֆլիզումն արած գործերը· — Փարիզու Հայկական դպրոցի տեսուչ, Այվազեան Գաբրիէլ վարդապետը Կայսերական հրովարտակով Առաջնորդ կը կարգուի Բեսարաբիոյ Հայոց· — Գաբրիէլ վարդապետը Ռուսիոյ Հայոց կողմէն ինչ զգացմունքով կ'ընդունուի։ — Շուշուայ առաջնորդ, Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսի արարմունքն ու իր մի գործը· — Օրթաղիւղի քարոզիչ Մատթէոս Արքեպիսկոպոսի եւ Պրուսայու առաջնորդ Գէորգ Եպիսկոպոսի յարաբերութիւնքը Ռուսաց տէրութեան հետ, առաջնոյն պատրիարքութեան ժամանակ, երկրորդին Պրուսայու առաջնորդութեան ժամանակ· — Պօլսոյ մի քանի Հայոց դաղանի խորհուրդը Կաթողիկոս ընտրելու համար· — Թիֆլիզու յայտնի ժողովը պատգամաւոր ընտրելու համար Կաթողիկոսի ընտրութեան· — Թէ ինչպէս եւ ինչ է պատճառ, որ Յակոբոս, Յովհաննէս, Պօղոս, Մատթէոս եւ Գէորգ Արքեպիսկոպոսներէն Մատթէոսը կ'ընտրուի ամենայն Հայոց Կաթողիկոս։

1857 թուին, փետրուար ամսուն, առաւօտեան ըուսաբաց ին Թիֆլիզու Հայոց Մայր եկեղեցւոյ մեծ զանգակի տխուր ձայնը տարածուում է բոլոր քաղաքի մէջ։ Այս յանկարծ ու տխուր զանգակահարութեան վրայ անհանգստութիւնը եւ սարսափը տիրում է բոլոր Հայոց ժողովրդի սրտին մէջ։ Նշանաւոր հայոցմէ եւ բժիշկներէն ոմանք շուտով շտապում ու դնում են Սուրբ Յակոբայ վանքի Մայր եկեղեցին և նրանց

յեանէն խուռն բազմութիւն ժողովրդի։ Սրանք մնում են Կաթողիկոսական վեհարանը և տեսնում իրանց բազմարդիւն և ալեւոր Հայրապետը կաթողիկոսն Ներսէս, դրասեղանի կըշռին ընկած մահացած, դրիչը դեռ թաց և Ռուսաց տէրութեան ներքին գործոց պաշտօնէին ուղղուած մի թուղթ սեղանի վրայ կէսը գրուած և յանկարծական մահով անվերջ մնացած (1)։ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսը մի կողմ կանգնած և սարկաւագները միւս կողմ հեծեծումեն։ Հայ բժիշկները կամենում են արիւն թողուլ թերեւս կենդանութեան յուսով. բայց Սարգիս եպիսկոպոսը չէ յօժարում, ասելով՝ որ այսպիսի ծեր հասակում ի՞նչ արիւն և ի՞նչ դարման. հարց ու փորձ են անում հանգուցեալ Հայրապետի կերածին ու խմածին վրայ և իմանում են, որ երեկոյեան բոլորովին առողջ է եղել և ոչինչ չէ կերել, բայց միայն կէս նուռ վրան շաքար յանած և դիշերուան մէջ ինքն իրան ճրագ վառելով սկսել է գրել այն թուղթը, որ կիսատ մնացած էր սեղանի վրայ։ Հայոց ժողովուրդն ամեն թաղերէն հաւաքուելով լքցում է վանքի պարսպատի մէջ և իր պաշտպան և պահապան հայրապետի վաղահաս մահուն բօթով արտասուք է թափում։ Կընքում են կաթողիկոսական գործքերի պահարանները ցերութեան փոխարքայի հրամանով, պատրաստւում է դագաղ հանգուցելոյն համար. լուսանկարով հանւում է պատկերը դիակը դնում է եկեղեցումը և զմռսուելով պահպանում է մինչև Էջմիածնի սինոդի անօրէնութիւնը և պատգամաւորի

(1) Այս թուղթը, որ մի պերճախօս կտակ կարելի է համարել Կաթողիկոսական իրաւունքների համար պաշտպանութիւն և նկարագիր Հայաստանեայց Եկեղեցւոյ նոյն ժամանակուայ Վարչութեանը, մենք կարդացել ենք մեր մի քանի բարեկամների մօտ Թիֆլիզում, տեսել ենք նոյն իսկ Ներսիսի ձեռագիրը. բայց ցաւում ենք, որ այժմ չունինք այն մեր ձեռին 'ի լոյս ածելու համար։ Ուստի մի քաղցր պարտք՝ենք համարում մեզ, խնդրել այս առթով մեր Ռուսիաբնակ ազգայնոցմէ որ ուղարկեն մեզ, ինչպէս այս թուղթը նոյնպէս և երջանկայիշատակ Ներսիսի միւս թղթակցութիւնը Ռուսաց կայսեր հետ, նոյն կայսեր պաշտօնէից հետ եւ եկեղեցական վարչութեան հետ ևայլն ևայլն. շատ մարդկանց մօտ տեսել ենք այս թղթակցութեանցմէ և կոնդակներէն իբրեւ քաղցր մնացորդք դուրս գրուած ու պահպանուած, թող ուղարկեն մեզ մեր եղբարքը, մենք պատրաստ ենք լոյս տալ նրանք 'ի յիշատակ ազգասէր հանգուցեալ Հայրապետին։

Մանուսյան Խմբագրին։

դալուստը։ Մօտ տասնուհինգ օր մնում է Կաթողիկոսի դիակը եկեղեցումը և քաղաքի բոլոր բնակիչները, ոչ թէ միայն Հայք, այլ և Վրացիք, Ռուսք, Ծերք և տղայք, արք և կանայք, դիշեր ու ցորեկ խուռն բազմութեամբ դիմում են Մայր Եկեղեցին հանդուցելոյ երկրաւոր մնացորդը տեսնելու և նրա սրբոյ աջոյն հրաժարական համբոյր տալու։ Այս միջոցին, քանի որ հանդուցելոյ մարմինը եկեղեցումն է գտնուում, ցերութեան կողմէն միշտ պահապաններ են լինում կանգնած թէ վանքի պարիսպներումը և թէ Եկեղեցւոյ դրանը և նոյնպէս Եկեղեցւոյ մէջ քահանայք, որոնք դիշեր և ցորեկ սաղմոսում են անընդհատ։

Բայց դեռ Էջմիածնի պատգամաւորը չեկած Կաթողիկոսի մահէն մի, թէ երկու օրէն յետոյ Սարգիս եպիսկոպոսի ձեռքով և փոխարքայ Բարիատինսկու բանաւոր հրամանով վերհարանի և Կաթողիկոսական պահարանների կնիքները բացվում են և զանազան թղթակցութիւնք նոյն եպիսկոպոսի ձեռքով փոխարքային են յանձնուում։ Երբոր Էջմիածնի պատգամաւոր Մակար եպիսկոպոսը Թիֆլիզ է մտնում, ուրիշ ոչ ինչ չէ տեսնում, բայց միայն հանդուցելոյն դիակը, կարեւոր թղթերու կորուստը և կարելի է որ և դրամց յափշտակութիւն։ Վասն զի չէ գտնում այն թուղթն Արարատեան նահանգի ազատութեան համար, որ Ռուսաց ցերութիւնը շնորհել էր Ներսէս Կաթողիկոսին և որն որ մինչեւ 'ի մահ ծոցումը պահած է ունեցել։ Զեն գտնուում և այն թղթակցութիւնքը, որոնք զանազան լեզուներով գրուած են լինում Ներսէսի մօտ և որոնք յայտնի են լինում շատին[1]. չեն գտնուում

[1] Սարգիս Ջալալեանցը դեռ չյանձնած փոխարքային այս թղթերը, կամենալով իմանալ դրանց մէջ եղած պարունակութիւնքը, իր մտերիմ արբանեակների մէկի ձեռքով Ներսիսեան դպրոցն է ղրկում կարդալ տալու և յայտնելու իրան, թէ ի՞նչ նիւթերի վրայ են գրուած. բայց շուտով նրանք յետ է պահանջում և յանձնում փոխարքայի՝ այդ թղթերը պահանջող զինուորականին։ Այս իրողութեան ականատես է լինում մի սրտացաւ հայ, որոյ հանդիպում են վերհարանի դրանը խուվախ քաշելով ծնկները ծեծելիս. հարցում են նրան պատճառը և նա արտասուքն աչքերում պատասխան է տալի, որ Կաթողիկոսի բոլոր առանձին թղթակցութիւնքը Սարգիս եպիսկոպոսը փոխարքային ղրկեց. յետոյ շատ տեսողներ են լինում այդ թղթերը Ցերութեան բարձր դիւանները։

Ծան. Խմբագրին։

նըվում մի քանի այլեւայլ թղթեր Հայաստանեայց Եկեղեցւոյ կարեւոր արտօնութեանց մասին գրուած։ Այսպէս Էջմիածնի պատգամաւորը մնում է շուարած և երբոր կամենում պահանջ մունք անել Սարգսէն թէ ինչո՞ւ կնքուած չեն մնացած կաթողիկոսական կահ կարասիքն. փոխարքայն յայտնում է, որ իր հրամանովն է բաց արել Սարգիս եպիսկոպոսը կնիքները։ Լռում է Էջմիածնի պատգամաւորը, բայց Հայոց ժողովրդին մէջ կասկածանք է զարթնում ընդդէմ Սարգսի թէ այս իրողութեան վրայ և թէ Կաթողիկոսի յանկարծական մահուան Այս կասկածանքը տեւում է մինչեւ այսօր, թէ ղ՞ըդ է թէ սուտ, մենք մեզմէն հաստատելու կամ ոչնչացնելու նպատակ չունինք։ Միայն այսքան կ'ասենք, որ Ներսէս Կաթողիկոսը իր կենդանութեան ժամանակ մեծ հաւատ է ընծայած լինում Սարգիս եպիսկոպոսին. քննիչ է կարգում նրան զանազան գործերի վրայ, գոհունակութեան կոնդակներ է տալիս նրան շատ անգամ և մեծ պատուանշանների արժանացնում, և երբոր Ռուսայ Ցերութիւնը չէ կամենում, որ Ներսէսն ինքը ներկայ գտնուի Ալէքսանդր կայսեր թագադրութեանը, նրա ծերութիւնը պատճառ բերելով, Կաթողիկոսը Սարգիս եպիսկոպոսին է ուղարկում իր կողմէն Մոսկուա իբրեւ իր նպատակներին հաւատարիմ։ Յետ է դառնում Սարգիս և Կաթողիկոսի թղթակցութիւնքը փոխարքայի և պաշտօնէից հետ շարունակւում են։ Այս թղթակցութեան գլխաւոր նիւթն է լինում ազատութիւն վարչութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ։ Ներսէս Կաթողիկոսն իր վախճանելէն մի կամ երկու օր առաջ ազդարարութիւն է ստանում փոխարքայէն, որ էլ ինքը չաշխատի անձնովին Կաթողիկոսական կնճռալի գործառնութեանց համար թէ գրով և թէ գործով, այլ Սարգիս եպիսկոպոսին յանձնէ, վասն զի ինքը շատ դոհ է Սարգսէն։ Ծերունի Հայրապետը մի դաղտնի դարան է նըշմարում այս ազդարարութեան մէջ և Սարգիս եպիսկոպոսին իր մօտ կանչելով ասում է նրան։ «Միտդ բե՛ր թէ ի՞նչ ես գրել Պետերբուրգից Ցերութեան վրայ, քո հոգին այս տեղն ունիմ (ցոյց տալով ձեռնով ծոցումն եղած թուղթը)» և 'ի հարկէ չէ նշանակում Սարգիս եպիսկոպոսին, ինչպէս փոխարքայն է կամենում։ Սարգիսն էլ իր կողմէն սկսում է խօսիլ

այս տեղ և այն տեղ՝ թէ Կաթողիկոսը ծերացել է և իր յամառութեամբ վտանգ պէտք է բերէ մեր ազգի դլխին։ Երանելի Կաթողիկոսը տեսնում է, որ ինքն է միայն հաւատարիմ իր նպատակին խորհում է և սկսում գրել իր նշանաւոր թուղթն առանց դիտենալու 'ի հարկէ, որ յանկարծական մահը յաջողակելու էր իրա ձեռնէն գրիչը։

Մակար եպիսկոպոսի դալէն յետոյ, շուտով կարդադրութիւն է լինում հանդուցեալ Կաթողիկոսի յուղարկաւորութեան համար։ Այն հայրապետը, որ իր կենդանութեան ժամանակ յայտնի էր թէ իր ազգին և թէ օտար ազդերին յուղարկաւորւում է Էջմիածին այնպէս մեծ հանդէսով, որոյ նմանը երբէք տեսնուած չէ լինում։ Վանքի Մայր Եկեղեցիէն սկսած մինչեւ քաղաքի արուարձանը, որ ասել է թիֆլիզու մի ծայրէն միւս ծայրը ճանապարհի և տանիքների վրայ լիքն են լինում խուռն բազմութեամբ, թողունք ասել եկեղեցականաց բոլոր դասն և փոխարքայի ու իր աստիճանաւորաց բոլոր խումբը, որոնք շրջապատած են լինում դագաղին։ Այսպէս մեծ հանդէսով յուղարկւում է Հայաստանեայց հայրապետն իր հանգստեան տեղը — Էջմիածին, որոյ իրաւունքների ազատութեան և պաշտպանութեան համար գրիչը ձեռին կնքում է իր կեանքը և արժանանում կրել իր շիրմի վրայ այս արժանի տապանագիրը։

ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՆԵՐՍԷՍ Ե· ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Բայց այս մի ակներեւ ճշմարտութիւն է, որ ազգերի համար մեծ նշանակութիւն ունի ինչպէս մեծ մարդկանց կեանքը, նոյնպէս և մահը։ Ներսէս Կաթողիկոսը լինելով մեծ մարդ Հայոց ազգի համար, մեծ նշանակութիւն ունէր իր կենդանութեան ժամանակ մեր Ազգի և Եկեղեցւոյ մէջ, 'ի հարկէ և մեծ ազդեցութիւն պէտք էր ունենար և իր մահովը։ Նրա կենացը վրայ խօսիլ մեր նպատակէն դուրս է այս յիշատակարանի մէջ, այլ միայն նրա վախճանելուց յետոյ պատահած անցքերի և դէպքերի վրայ ենք խօսելու։ Այն հայրապետն որ մին մինակ մաքառումէր Ազգի և Եկեղեցւոյ իրաւունքների համար, որ մին մինակ տքնում էր եկե-

ղեցական վարչութիւնը բարեկարգելու, եկեղեցականաց վիճակը բարւոքելու և ազգի մէջ բարոյական և մտաւորական լոյս տարածելու և իր դէմ վեր կացած թէ ներքին և թէ արտաքին դաւադրութեանց դէմ դնելու իր տոկուն և անկուն հայրենասիրութեամբ։ Այն Հայրապետը յանկարծ մահանում է իր մահովը և մի ուժգին ցնցում է պատճառում իր ազգի մէջ։ Այս ահագին ցնցումով խլրտուում շարժում է ազգը, բայց խլրտուում են և վեր են կենում և Հայոց ազգայնութեան թշնամիքը, որոնք Ներսիսի կենդանութեամբ կարծես թէ կաշկանդուած կապուած էին։ Մինչդեռ ազգի արտասուքը չցամաքած իր Հայրապետի մահուն վրայ՝ մտածում է իր ապագայի համար, Եկեղեցական բարձրաստիճան անձանցմէ ոմանք արդէն Կաթողիկոսական դահը բարձրանալու համար զանազան յայտնի և դաղտնի միջոցների են դիմում.

Ղուկաս Արքեպիսկոպոսն Արագածունի, սուրբ աթոռոյն տեղապահը դիտենալով արդէն մի քանի բարձրաստիճան եկեղեցականաց դաղտնի դործ դրած ապօրինաւոր միջոցները Կաթողիկոսական Դահը բաղմելու և մանաւանդ Ջալալեանց Սարդիս եպիսկոպոսին, Էջմիածնի առաջնաւոր եպիսկոպոսներին և վարդապետներին խորհուրդ անելու է կանչում և այդ խորհրդին մէջ յայտնում է իր միտքը կաթողիկոս ընտրելու մասին, ասում է, «Թէ այսքան ժամանակէ հետէ այսինքն Կաթողիկոսական դահը Ռուսաց Ցերութեան տակ ընկնելէն՝ և նրա ազդեցութեամբ վարուելէն հետէ, ամեն եկեղեցական յարաբերութիւնք Էջմիածնի և Օսմանեան Ցերութեան Հայոց հետ դադարած են. մանաւանդ քանի որ այն ժամանակէն հետէ Կաթողիկոսները մեր կողմէն ընտրուելով՝ կարծես Հայաստանեայց եկեղեցին երկուսի բաժանուած լինի, Ուստի այս չարեաց մի դարման անելու համար, ես միտք եմ դրել, այս անդամ անպատճառ Կաթողիկոս Օսմանցւոց երկրի Հայոց Արքեպիսկոպոսներէն ընտրուի. ես արդէն մտքումս նշանակել եմ թէ ո՞վ արժանի է ամենայն Հայոց Կաթողիկոսական դահի Օսմանցւոց երկրում դտնուող արքեպիսկոպոսներէն, բայց եթէ իմ մտքումս որոշած անձն յանձնառու չլինի այս բարձր պաշտօնին, թող մի վարդա-

պետ լինի Կաթողիկոս, միայն թէ Օսմանցւոյ երկրէն լինի»[1]։ Ղուկաս արքեպիսկոպոսի այս պատուական խորհուրդը, որ էր Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչութեան միութեան մասին, մեծ սիրով ընդունում են միաբանք. բայց իրանց դիտաւորութիւնն էլ են յայտնում թէ իրանն է կարգը և ինքն է արժանի Կաթողիկոսութեան բարձր պաշտօնը ընդունելու վոխարէն իր քառամամեայ աշխատաւորութեան Սուրբ Էջմիածնին։ Ղուկաս արքեպիսկոպոսն իր միտքը չվոխում միաբան եպիսկոպոսներին և վարդապետներին դէպ իրան ունեցած երախտագիտութեան զգացմունքն իմանալով[2]. և առաջարկում նրանց մի թուղթ գրել Կոստանդնուպօլսոյ Պատրիարք Յակոբ արքեպիսկոպոսին, որու մէջ յայտնելով իրանց խորհուրդը խնդրում են Պօլսոյ Հայոց Պատրիարքէն, հոգեւոր և քաղաքական գերագոյն ժողովներէն, որ Կաթողիկոսութեան բարձր պաշտօնի արժանաւոր Եկեղեցականաց մի ցուցակ յուղարկեն իրանց։ Այս թուղթն Էջմիածնի միաբանք առանց Տէրութեան իմաց անելու են ղրկում Պօլիս. բայց Սարգիս Ջալալեանը լսում է թէ չէ, տեսնելով այդ ձեռնարկութեան մէջ՝ իր Կաթողիկոս լինելու արած գաղտնի և յայտնի ջանքերի դէմ մի անյաղթելի պատրաստութիւն, իսկոյն դիմում է Տէրութեան և մատնում Էջմիածնի միաբաններին իբրև օրինազանց գաղտնի թղթակցութիւն անելով Տէրութեան սահմանէն դուրս. Տէրութիւնը չկամենում Ղուկաս եպիսկո-

[1] Այս խօսքերը մեզ պատմած է ինքը հանգուցեալ Ղուկաս արքեպիսկոպոս Էջմիածին իր սենեկումը, 1859 Յուլիս ամսուն։

[2] Ղուկաս արքեպիսկոպոսն իր հաստատամտութեան համար նշանաւոր էր եղած Հայոց ժողովրդին մէջ, որ ասում էր նրա մասին թէ, «Ղուկաս եպիսկոպոսը շատ լաւ մարդ է, բայց մի քիչ իրատի (ինատ) և կոպիտ է»։ Իսկ Ներսէս Կաթողիկոսը նրան կանչում էր «Հայր Ղուկաս» քաղցրանունով։ Կը պատմեն թէ վերջին Արեւելեան պատերազմի ժամանակ, երբ Օսմանցւոց բանակը մօտեցել է Էջմիածնի մօտերը, մի մարդ է ղրկել Ղուկաս եպիսկոպոսը Երեւանու ամրոցի պահապան զօրականին, ասելով թէ՝ շուտով դարտրկէ ամրոցը և ընդունի վանքի կամ կարասիքն, և թէ այն ամրոցը Հայոց եկեղեցւոյն մայր աթոռը պաշտպանելու է պարտաւոր ամեն բանէ յառաջ, և այն պատճառով են Հայք յանձնել այն Ռուսաց զօրութեան. եթէ ոչ, ինքը կարող է Հայոցմէ ձիաւորներ և ոտնաւորներ հաւաքել և այն ամրոցով Էջմիածինն էլ պաշտպանել թշնամեաց դէմ։

Ծան. Խմբագրին։

պոսին վախեցնելով խրատնեցնել, այլ նրա դիտաւորութեան մէջ իր շատունցմէ պատրաստած խորհրդին արդիւնաւորուելու յոյսն և այս դէպքէն իր շահուելու առիթը դիտելով. մին կողմէն նպաստաւոր է լինում Էջմիածնի Միաբանութեան խորհրդին. Ղուկաս արքեպիսկոպոսին նոյն միջոցին ամենէն բարձր շքանշանով. (եթէ չեմ սխալւում Սուրբ Աննայի պատուանշանով) աչքը կապում է, որպէս զի քննեցնելով նրան ինքն իր մեծ խորհուրդն արդիւնաւորելու հետ լինի, առանց ձայն ձպտուն հանելու և ոչ ոքի ամենափոքը տեղի տալու մի բան նշմարել, միւս կողմէն հայոց ազգային որ և է յառաջադիմութեան, աղատական միջոցները բուն հայոց ձեռքով կործանելու է աշխատում, նրանց Ռուսական ուղղութիւն տալու համար և Ներսէս կաթողիկոսի տասնուչորս տարուայ բոլոր աշխատութիւնքը յօդուտ Եկեղեցւոյ և Ազգի ոչնչացնում ինչպէս, որ մի փոքը յետոյ պիտի տեսնենք այս դրուածքի ընթացքումը։

Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսը, որ այս միջոցին Էջմիածին էր գնացել, իր անձն իբրև արդարացնելու Ղուկաս արքեպիսկոպոսին և Միաբանութեան առջեւ, յետ է դառնում Թիֆլիզ հոգեւոր կառավարութեան պաշտօն վարելու որն որ արդէն Տէրութիւնը սահմանել էր իրան համար, այս տեղ երեւում է Սարգիս եպիսկոպոսը միջամուխ և մասնակից Տէրութեան խորհրդին մէջ խիստ յայտնի կերպով. նա սկսում է իր յարաբերութիւնքը Տէրութեան և նրա բարձր պաշտօնաւորների հետ խիստ յաճախ և յայտնի։ Դաւիթ Սուրէնեան անուն Ղրիմեցի հայազգին, որ երկար ժամանակէ հետէ Տէրութեան ծածուկ գործերի կատարողն էր լինում և մեծ յաջողակութեան տէր մարդ՝ ամեն տեսակ լրտեսութեան և բանբերութեան մէջ, Սարգսին խորհրդատու և նրա բռնելու ընթացքին ուղղութիւն է տալի Տէրութեան կամքին համաձայն ու ինքն էլ նրա թելադրութեամբ և Տէրութեան կամքով Պոլիս է դալի երկու պաշտօնով։ Առաջինն այս տեղ դալիս աւոր և հարկաւոր անձանց մտքերը պատրաստելու 'ի նպաստ Սարգսին և Տէրութեան խորհրդին։ Երկրորդ Էջմիածնի Միաբանութենէն Յակոբ Պատրիարքին և հոգեւոր եւ մարմնաւոր դերագոյն ժողովներին յուղարկուած թղթերն

ձեռք բերելու։ Այս երկու պաշտօնը Դաւիթ շատ հեշտութեամբ և մեծ ճշտութեամբ կատարում է և գնում Թիֆլիզ իր՝ թէ Պոլիս կատարած գործողութեան հաշիւը եւ թէ Պատրիարքարանէն առած թղթերը Տէրութեան է տալի. և սրանով նշանակութիւն ունենալով՝ առաջին կարգի տանողն ու բերողն է լինում Տէրութեան, Թիֆլիզու և ուրիշ տեղերի Հայոց արարմունքի և ասմունքի մասին [1]։

Բայց ամենէն աւելի Սարգիս եպիսկոպոսի ջանքերն են լինում յայտնի ժողովրդին վասն զի նա այնպիսի միջոցներ է ձեռն առնում, որ փոխանակ ժողովրդին հաճոյ լինելու աւելի իրան դէմ է դրդռում նրան, մանաւանդ, որ Ներսիսի վախճանելէն յետոյ արդէն ժողովուրդն մի ուրիշ կերպով է նայում նրա վրայ։ Ժողովրդին այս դրդռումն ու կասկածանքը Սարգսի վրայ, բացի Կաթողիկոսի մահուան հանգամանքներէն լինում է և Ներսիսեան Ռուսմնարանի պատճառով, որովհետեւ Ռուսմնարանները մեծ նշանակութիւն ունին Հայոց մէջ և համարձակ կարելի է ասել, որ վիճակը առաջնորդների արժանաւորութիւնը կամ անարժաւորութիւնը նրանցով է կշռւում։ Սարգիս եպիսկոպոսը մի ութ ամսի չափ Կաթողիկոսի մեռնելուց յետոյ խնամք է ցոյց տալի Ռուսմնարանին վրայ քանի որ առաջնորդ չէ նշանակուած լինում, բայց երբ իրաւունք է ստանում առաջնորդի պաշտօն կատարելու, սկսում ինքնակամօրէն ներդործել առանց ժողովրդի հաճութեան, բացարձակ յարձակւում է յառաջադէմների դէմ. Ներսէս Կաթողիկոսի ժամա-

[1] Դաւիթ Սուրենեանը լինում է Ղրիմեցի. իր պատանեկութեան ժամանակ Էջմիածնի վանքն է գնում կրօնաւոր լինելու, բայց յետոյ փոխում է իր վարքն ու բարքը և թողնում փախչում է վանքէն և գալիս փոխարքայ պարոն Բօղէնի մօտ պաշտօնի է մտնում։ Բնական ճարտար խօսող և աշխոյժ դէմքով մարդ լինելով Դաւիթ, օրեց օր յառաջ է գնում ու լինում մեծ տանող բերող Տէրութեան իր արբանեակներովը։ Կ'ասեն թէ 1858ին Թիֆլիզում Կաթողիկոսի ընարութեան համար պատգամաւոր ընտրելիս, ինքը երեսուն քառասուն ընտիր Հայ երիտասարդների անունների մի ցուցակ է հաղորդել Տէրութեան, երբեւ ապստամբ և խռովարար։ Այս ուխտադրուժ և ազգի անհարազատ զաւակը երբ չարաչար մահով մեռաւ Թիֆլիզ, Սարգիս եպիսկոպոսը նրա դիակը վանքի Մայր եկեղեցւոյ բակումը թաղեց ժողովրդեան կարծիքն արհամարհելով, Տէրութեան հրամանը կատարելու համար։

Ման. Խմբագրին։

նակ աւանդուած ուսմունքները համարում է բողոքական նոյնպէս և Ներսիսի յարգ ու պատիւ տուած ուսուցիչներին հետեւող բողոքականութեան։ Փորձէ փորձում մի նոր փոփոխութիւն առնել Ուսումնարանի մէջ, արձակում է տեսչին, ուսուցիչներին և կարգում է նոր տեսուչ և նոր ուսուցիչներ ու վերակացուներ։ Բայց այս փորձը շատ թանդ է նստում իր վրայ։ Անբաւականութիւնն ինչպէս ժողովրդին մէջ, նոյնպէս և ուսումնարանի աշակերտների մէջ քանի դնում մեծանում է այս փոփոխութեան համար, աշակերտք բողոքում են նոր տեսչի մասին, մի երեկոյեան իրիկնաճաշէն յետոյ խուռն բազմութեամբ դիմում են առաջնորդարան և նոր տեսչի փոփոխութեան համար խոստմունք առնելով Սարգիս եպիսկոպոսէն յետ են դառնում ուսումնարան, բայց ի՞նչ են տեսնում, նոր տեսչի պաշտպան հոգաբարձուք արդէն ղինուորներ են բերել տուել և շրջապատել ուսումնարանը, դռները փակելով աշակերտների դէմ, մի մեծ աղմուկ է բարձրանում, աշակերտներէ չափահասները բանտ են ուղարկւում և մնացածներին ծեծ են ուտացնում. միւս օրն առաւօտեան այս ամօթալի արարմունքի լուրը տարածւում է քաղաքի մէջ և քաղաքացիք մեծ բազմութեամբ դիմում են առաջնորդին նախատական խօսքերով և աշակերտներին բանտէն հանել են տալի։ Այս օրէն Սարգիս եպիսկոպոսը կորցնելով բոլորովին ժողովրդի համակրութիւնը իր վրայէն, կորցնում է և Կաթողիկոս լինելու յոյսը։ Շատ հաւածանք, շատ զրկանք է յարուցանում զանազան անձանց վրայ, թէ մինչեւ Մատթէոս Կաթողիկոսի ընտրուելն և թէ նրա ընտրուելէն յետոյ, բայց ոչինչ չէ շահում, այլ Թիֆլիզի առաջնորդութենէն էլ զրկւում է, որոյ մասին յետոյ կը խօսինք [1]։

Մեր ընթերցողներին այս ուսումնարանական նշանաւոր դէպքը ծանօթացնելու համար, որ Ռուսիոյ բոլոր Հայոց ժողովրդին մէջ մեծ արձագանք է տուել, դնում ենք այս տեղ

[1]. Տես Կռունկ ամսագրի Բ. տարուայ Գ. թիւում «Ներսիսեան հոգեւոր դպրոց Հայոց Թիֆլիզումն» վերնագրով յօդուածը, գրուած Էնֆիաճեանց Պ. Համբարձումէն։

Ման. Խմբագրին։

նրա աչքին յառաջը երկու դրուածք։ Այս երկու դրուածների մէնն է Պ. Պետրոս Շանշեանցի ծրագիրը դաստիարակութեան, որոյ սկզբունքների վրայ շարունակուած է Ներսէս Կաթողիկոսի կենդանութեան ժամանակ 1851—1857. Ներսիսեան ուսումնարանի ուսմունքն ու դիտութիւնքը։ Իսկ երկրորդն է նմանապէս Պ. Պետրոս Շանշեանցի գրած նամակն առ Կաթողիկոս, 'ի պատասխանի Սարգիս եպիսկոպոսի մի նամակին՝ որն որ ուղղուած է եղել նմանապէս Մատթէոս Կաթողիկոսին, զրպարտելով թէ Շանշեանց Պ. Պետրոսին և թէ Թիֆլիզու ժողովրդին ուսումնարանական դէպքի մէջ՝ իր անձն արդարացնելու նպատակով՝ որուն պատճէնը ինչպէս կերևի նոյն դրուածքումը Շանշեանց Պ. Պետրոսի ձեռին է հասել Էջմիածնէն Բէտրբուրգ եղած ժամանակ։

Եղանակ այժմեան դասատուութեան յամենայն Ուսումնարանս Հայոց ունի զբաղում թերութիւնս 'ի դաստիարակութեան։ Զէ նա յատկացեալ ոչ ըստ չափու կարեւորութեան դիտութեան, ոչ ըստ օգտի եւ ոչ ըստ չափու ընդունակութեան մանկանց, որոց կրթութիւնք յոյժ հարկաւորք են իբրեւ զդրաւական ապառնի յուսոյ ծնողաց եւ Հայրենեաց։

Իրաւամբ ասաց մի ոմն 'ի Փիլիսոփայից թէ՝ Նեղկայն յաջողեալ է ապառնեաւ, [1] վասն որոյ եւ դաստիարակութիւն մանկանց յոյժ վսեմ է ըստ ամենայն հետեւանաց իւրոց։ Ի մանկութեան զարգանան եւ կազդուրին միտք, զգայմունք, հաստատութիւնք եւ ապաւորութիւնք։ Ի մանկական տիոց կարողութիւնք հոգւոյ մշակեալք արդասաւոր կացուցանեն զկենացն համայն ապագայ։

Եղանակ այժմեան դասատուութեան չունի զէական մասունս. տայ զմեծ առաւելութիւն փոքրու արժանաւորութեան եւ զփոքր արժանաւորութիւն այնմ՝ որ զառաջինն պարտի ունել զտեղի։ Ի զուր յօրինակ տան զարդիւնս վաստակոց ոմանց 'ի դաստիարակաց, որք ունին զքանի մի գոլանի աչակերաս, քանզի բացառութիւնք են նոքա եւ 'ի վերայ բացառութեանն ոչ հիմնի երբէք բարւոք դաստիարակութիւն։ Ուստի առանց ինչ պարտաւորեալ լինելոյ այլոց, որք արարին զոր կարացին, քննողական ընտրութեամբ ասեմ զիմ կարծիս — դաստիարակութիւն եւ կրթութիւն պարտին

[1] Լէյբնից։

գոլ առաջին վսեմ պէտք վասն մարդոյ, վասն կառավարութեան եւ վասն ազգի։ Իսկ ընդ հակառակն 'ի տիրել մոլորութեան առաւել քան զառաւել մեկնի մարդն 'ի սպառ 'ի ճշմարիտն լուսոյ եւ անկրթութիւն յաւիտեան ծածկէ զգործս Աստուծոյ եւ զընութիւն անթափանձելի խաւարաւ։ Հիմն կրթութեան մարդոյ պարտին լինիլ կարեւոր եւ էական գիտութիւնք, որք հարկաւորին յամենայն վիճակի եւ յամենայն ժամանակի։ Էական գիտութիւնք պարունակեն յինքեանս զայն ամենայն, որ ինչ միանգամ կարեւոր է մարդոյ գիտել անշուշտ եւ 'ի գործ դնել, զի մարդասցի պահպանել զիւրն արժանաւորութիւն եւ ոչ լինիլ ապաբաղդ։ Այսոքիկ գիտութիւնք են յետագայք։ — Նախ՝ Կրօնն, որով հարկ է սկսանել շարունակել եւ աւարտել զկրթութիւն մարդոյ. վասն զի մարդն է յԱստուծոյ, Աստուծով եւ վասն Աստուծոյ։ Երկրորդ՝ Բարոյագիտութիւն, որ տայ մարդոյ ճանաչել զանձն եւ զայլս։ Բարոյագիտութիւնն ուսուցանէ մեզ զպարտաւորութիւն մեր առ Աստուած, առ մարդ, առ Հայրենիս, առ Եկեղեցին եւ առ ժողովուրդն եւ ահա այսոքիկ պարտաւորութիւնք են խարիսխք ընկերական եւ հասարակական կենաց։ Երրորդ՝ Բնաբանութիւն, որով իմանամք զկազմ աշխարհի, Բնագիտութիւն, որ ըստ գեղեցիկ ասից Առաքելոյն Պօղոսի յետ Աստուածաշնչի երկրորդ լիմն գիրք, յորում ակներեւ տեսանին մեծութիւն, ամենակարողութիւն եւ նախախնամութիւն Աստուծոյ՝ զի անհերեւոյթք Աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ Աստուածութիւն նորա։ Ընդ բնագիտութեան հարկ է անշուշտ ուսանիլ եւ զկազմութիւն մարդոյ, այն է իմանալ զայն ամենայն, զորմէ կախի առողջութիւն մարդոյ, որ ամուր եւ ամբիծ պահպանելով զմարմին՝ պահպանէ եւ զհոգին առողջ եւ զուարթ, որպէս ասաց ոմն 'ի նախնի իմաստասիրաց — Առողջ հոգի յառողջ մարմնի։ Մարդ կոչեալ է յաշխարհ աղնուացուցանել եւ կատարելագործել զհոգի իւր, կատարել զպարտաւորութիւնսն եւ որոնել զկեանսն, որոյ անանցն եւ խաղաղ յոյս աջով Բարձրելոյն տպաւորեալ 'ի մարդիկ քաղցրացուցանէ զընկերականութիւն մարդկան եւ պարարէ զսիրտն սիրով անմահութեան։ Վասն այսորիկ՝ առաջին պատուիրանն, զոր աւանդեաց մեզ Տէրն է — սիրել զԱստուած եւ ծառայել նմա յամենայն զօրութենէ հոգւոյ գործելով ընդ Նախախնամութեամբ նորա։ Իսկ երկրորդ պատուիրան Աստուծոյ եւ ամենայն հասարակութեան է լինիլ շահաբեր մարդկութեան ամենայն ձրիւք, զորս եդ Աստուած 'ի մարդումն եւ այսու կատարելութեամբ պաշտել զԱստուած, սիրել զընկերն եւ աշխատիլ վասն ժամանակաւոր եւ յաւիտենական երջանկութեան։ Ուրեմն հիմն եւ

առարկայ կրթութեան են երեքին սոքա — Աստուած, Մարդ եւ Բնութիւն։ Ճանաչումն Աստուծոյ է հիմն ճանաչման մարդոյ, իսկ ճանաչումն մարդոյ է հիմն ճանաչման բնութեան։ Գիտութիւնք այսոցիկ երից առարկայից առաջնորդեն զմարդն 'ի ճանապարհ երջանկութեան. ուստի եւ մատակարարութիւնք սոցին պարտին լինել հիմն ուսման 'ի Ներսիսեան հոգեւոր Դպրոցի Հայոց Տփխիսայ այսու յետագայ եղանակաւ։

Նախ՝ Կրօն. Կրօնն ունի զառանձին պատմութիւն, որ բաժանի յերկուս մասունս, յորոց մին է պատմութիւն Հրէից, որ սկսանի 'ի ստեղծմանէ աշխարհի. իսկ միւսն պատմութիւն եկեղեցական, որ ոչ առնու զվախճան նախ քան զկատարած աշխարհի։ Առաջինն, այն է պատմութիւն ազգին Հրէից, պարունակէ յինքեան զօրէնս Աստուծոյ, զարարչագործութիւն եւ զմարգարէութիւնսն, որք պատրաստէին զաշխարհ վասն գալստեան Քրիստոսի։ Իսկ երկրորդն այն է եկեղեցական պատմութիւն ցուցանէ զյաւիտենական զանփոփոխելի օրէնս, պարզեւեալս մեզ 'ի Փրկչէն, զորս եւ տարածեցին Առաքեալք նորա քարոզութեամբ, զկնի որոց եւ քահանայութիւնն պահպանէ։ Ազբիւր պատմութեան կրօնի է Աստուածաշունչն, այն է Հին եւ Նոր Կտակարանն, եւ մասամբ վճիռք երից սիեղերեկան ժողովոց, աւանդութիւնք Հարց Սրբոց, կանոնագրութիւնք եւ ծէսք եւ այլն։ Զէ պարտ յիշել 'ի պատմութեան կրօնի զպատմութիւն անքրիստոնեայ ազգաց, քանզի կրօնք նոցա չեն պատմութիւն Աստուծոյ, այլ մարդոյ։ Որովհետեւ Սուրբ Գիրք յայտնի ցուցանեն մեզ զարարչագործութիւն Աստուծոյ եւ զճշմարտութիւնսն, որք պարտին լինել հիմն Հաւատոյս մերոյ եւ պարտաւորութեան, զոր պատուիրեաց Աստուած. ուստի գիտութիւնք Սուրբ Գրոց բաժանին այսպէս. —

Ա. Պատմութիւն Արարչագործութեան, այն է Սրբազան Պատմութիւն։

Բ. Քրիստոնէականութիւն, որ պատմէ զճշմարտութիւնսն որք են հիմն Հաւատոյ։

Գ. Բարոյականութիւն, այն է պարտաւորութիւն մարդկան առ Աստուած, առ մարդ եւ առ այլս։

Յայնմ տեղւոջ, ուր եղերի Սրբազան Պատմութիւն, այսինքն ցՀամբարձումն Քրիստոսի եւ ցԻջումն Հոգւոյն սրբոյ սկսանի։

Դ. Պատմութիւն Եկեղեցւոյ։

Ե. Պատմութիւն Եկեղեցական կարգաց, ծոնից եւ ծիսից։

Զ. Քահանայական Աստուածաբանութիւն, այն է պարտաւորութիւն քահանայի, որպէս քարոզչի Աւետարանի, եւ արուեստ քարոզութեան։

Երկրորդ՝ Բարոյաբէրոնիէն. Յայս առարկայ ամենեքին այն՝ ամենայն գիտութիւնք, որք ուսուցանեն մարդոյ ճանաչել զանձն եւ զայլս։ Առ 'ի ճանաչել մարդոյ զինքն որպէս զմարդ բանական հարկաւոր է.

Է. Դասատուութիւն Մարդաբանութեան (Անդրոպոլոգիա) թէ զիարդ զարգանան եւ կատարելագործին զօրութիւնք հոգւոյ։

Մարդ առ 'ի ճանաչել զինքն իբրեւ զանդամ ազգի կամ չառաւիղ նորուն պարտի իմանալ.

Ը. Զպատմութիւն համարիւն ազգի իւրոյ։

Թ. Զօտարազգի պատմութիւն, որպէս սերտ կապակից ազգային պատմութեան։

Իսկ ընդ պատմութեան չաղկապեալ է նաեւ գիտութիւն լեզուի։

Ժ. Վասն պատմութեան Հայոց հարկաւոր է լեղու Հայերէն։

ԺԱ. Վասն պատմութեան Ռուսաց՝ լեղու Ռուսերէն։

ԺԲ. Վասն պատմութեան Եւրոպացւոց եւ օտարազգեաց՝ լեզու Գազղիարէն։

ԺԳ. Բարեգիտութիւն (Ֆիզիոլոգիա), որ խօսի զառողջ կազմութենէ մարդոյ, զպահպանութենէ, զվնասուց առողջութեան, եւ զայլոց հաբեկաւոր գիւտոց, զծաղկապատուաստութենէ երեխայից, 'ի պահպանութիւն առողջութեան իւրոյ եւ առ հասարակ ժողովրդականաց։

Երրորդ՝ Բնոգիոնիէն. Առ 'ի ճանաչել զբնութիւն հարկաւոր է.

ԺԴ. Բնական Պատմութիւն, յորում պարունակի եւ մասնաւոր աշխարհագրութիւն։

ԺԵ. Բնական գիտութիւն, որով եւ ծանօթութիւն հարբատութեան եւ չահաւէտութեան թէ 'ի բուսականաց մասին եւ թէ 'ի լեռնային հանքագործութեանց։

ԺԶ. Թուաբանութիւն, որ բնաւ ոչ պատշաճի եւ ոչ միւսմ 'ի վերոյիշեալ գիտութեանց, սակայն կանոնաւք իւրովք թեթեւացուցանէ զհաշուական համարս։

Բայց որովհետեւ յայսմ դասատարական ձեւակերպութեան ոչ յիշեցի զնախապատրաստական գիտութիւնսն, առ այն հարկաւոր համարիմ խօսիլ զինչ ինչ զնոցունց՝ թէ ուր եւ զիարդ պարտ է պատրաստել զցանկացողս մտանել 'ի Հոգեւոր Դպրոցն Հայոց։ Ուստի յոյժ օգտաւէտ համարիմ միաւորել զմանաւոր եկեղեցական վարժարանս ընդ հոգեւոր Դպրոցի Հայոց իբրեւ զնախակրթական դասարանս։

Մասնաւոր Եկեղեցական Վարժարան։

Յայսոսիկ Վարժարանս ընդունին մանկունք 'ի վեցամեայ հասակէ սկսեալ եւ մնան անդանօր մինչեւ ցտասնամեայ հասակ իւրեանց։ Առարկայք կրթութեանց նոցա պարտին ընդարձակել զմիտս եւ զզգացմունս, որք նախընթաց են մտածութեան։ Ուստի հրահանգութիւն դիտութեանց յառաջին երկուս ամս պարտի ընդարձակել հետեւեալ եղանակաւ — ընթերցանութեամբ, վայելչագրութեամբ, գծագրութեամբ թուանշանից եւ չորիւք նախագրամբք թուաբանութեան։ Իսկ 'ի յետին յերկուս ամս կատարելագործին վերոգրեալ առարկայք եւ հայեցեալ 'ի չափ ընդարձակութեան մտաց մանկանց աւանդի նոցա համառօտ բարոյական քրիստոնէականութիւն, եւ պատրաստի գտանին աշխարհագրական քարտէսք, որովք ցուցանէ ուսուցիչն զհարկաւոր տեղիս հայրենի երկրին, ըստ տեղիս մեծամեծ անցից երեւելի անձանց եւ պատմելով զայնոցիկ զարթուցանէ 'ի մանկունս զուսումնասիրութիւն ազգային պատմութեան։

Կարեւոր է անհրաժեշտ, զի մանկունք ընդ դասուց բարոյական քրիստոնէականութեան տեսցեն զառաքինութիւնս դաստիարակաց 'ի գործ եղեալս վերաբերութեամբ առ նոսա։ Վասն որոյ հարկ է 'ի սպառ մերժել 'ի պատժոց զնին չարաչար խստութիւնսն, որք այլակերպէին զպատկեր ուսուցչի, եւ փոխանակել զայն պատիժ 'ի հեզ կառավարութիւն մտաց։ Մանկունք սիրեն առհասարակ, զի այլք խորհեսցին ընդ նոսա եւ այս քանայ զնոցայն աշխոյժ լինել մեծ։ Ապա ուրեմն դիւրին է յոյժ ուղղել զերեխայական թերութիւնսն եւ զանկարգութիւնս հանճարաւոր եւ զգալի եղանակաւ եւ պատիժք պարտին լինիլ ոչ ներդործութիւնք ֆիզիքականք, այլ բարոյականք։ Այսու եղանակաւ հասեալ մանկանց 'ի տասնամեայ չափ հասակի իւրեանց (առանց որոյ չէ հնար թոյլ տալ նոցա լսել զհրահանգս Հայոց Հոգեւոր Դպրոցի) եւ կարացեալ մաքուր գրել, ուղիղ կարդալ, դիտելով ընդ նմին զչորեսին նախագրոնս թուաբանութեան, զլուսաւոր եւ զկենդանի գիտութիւն հաւատոյ իւրեանց եւ զքանի մի ականաւոր տեղեաց եւ զկողմանց եւ զպատմութիւն Ազգին, յետ հարցաքննութեան, կարեն մտանել 'ի Ներսիսեան Հոգեւոր Դպրոցն Հայոց 'ի շարունակել զուսումն իւրեանց

ՊԵՏՐՈՍ ՇԱՆՇԵԱՆՑ

Զերդ Վեհափառութիւն ·

Ես հաստատ հաւատում եմ, որ ճշմարտութիւնն աւելի զօրեղ է ստութենէ ։ Ահա երեք տարի է, որ հեռու հայրենիքից, հանգիստ մնում եմ խորին լռութեան մէջ, թոյլ տալով, որ անցնեն Հայոց Ուսումնարանի վերայ բարձրացած կրքերի մրրիկները ։ Եւ այժմ ևս չէի ընդհատել այս իմ լռութիւնը, եթէ ձեռս չհասնէր Սարգիս արքեպիսկոպոսի նամակի պատճէնը, որ ուղարկած էր Զերդ Վեհափառութեանը 'ի 4 էն Յուլիսի 1861 ամի, ընդ համար 153 · որոյ մէջ Նազարեանցի գրեանց արգելման պատճառն Էջմիածնի Սինոդից, գրում է Ս· Եպիսկոպոսն այս հետեւեալ խօսքերով ։ « Շանչեանցի տեսչութեան ժամանակը, նա ինքը տեսուչը, դաս էր տալի կրօնադիտութիւն եւ Աստուածաբանութիւն ։ Ես հաւատալով, որ այս առարկայի դասատուութիւնը վնասակար է 'ի ձեռն Շանչեանցի, եւ աշակերտները մոլորվել են եւ մոլորվում են, իսկոյն չտալեցի դադարեցնել նորա դասատուութիւնները, որոց պատճառաւ առաջարկեցի նրան միայն տեսուչ լինել · իսկ այս առարկայի դասատուութիւնը ես ինձ վերայ առայ ։ Իմ այսպիսի բարենպատակ առաջարկութիւնը, համաձայն չգտնելով իրա ցանկութեանը՝ եւ նպատակին, չկամեցաւ տեսուչ մնալ եւ թողեց ուսումնարանը ։ Այն ժամանակ սկսան յարձակել ինձ վերայ զանազան անստորագիր նամակներով նորա խորհրդակիցները զանազան տեղերից, ինչպէս եւ Զեզ վերայ, նեղացնելով Զերդ Վեհափառութիւնը ։ Սորանից դուք կարող էք եզրակացնել, որ ես չդադարեցայ հոգալուց եւ վերջացնելուց այս օտար հոգւով վարդապետութիւնը, եւ որ ես հաղիւ հաղ կարողացայ ցրել Շանչեանցի աշակերտացը, որոց նա դաստիարակել էր մոլորութեան հոգւով ։ Սրանից ահա ծագեցան այսչափ անհամաձայնութիւնները, ապա թէ ոչ ուրիշ պատճառ չկար բացի Շանչեանցից » ։

Այս նամակի մէջ, բոլորովին առանց պատճառի, Ս· Եպիսկոպոսն յիշում է իմ անունը, անուանելով իմ դասերը եւ կրօնադիտութիւնը հերետիկոսութիւն, եւ հասարակութեան դատողութիւնն իրան դէմ՝ անուանում է Շանչիական կուսակցութիւն, եւ այս բանս ամենի վերջումը յաւելացնելով՝ ուղիղ չէ պատմում իմ ուսումնարանը թողնելու պատճառը ։ Այս նամակը զրպարտում է իմ դուրս գալը ուսումնարանից, հասարակաց կարծիքը, որ ծագել էր նորին բարձր Սրբազնութեան դէմ, Ներսիսի յանկարծական մահուանից յետոյ, եւ իմ կրօնադիտութեան դասերը · ուստի ճշմարտութիւնը պարզ է դնում ինձ վերայ եւ հրամայում ձայն բառնալ հասարակաց դա-

տասանի առաջ, վասն զի այս նամակը չատ սաստիկ է տարածուել Մոսկվայի մէջ, որից պէտք է եզրակացնել, որ Տփխիսումը եւ ուրիշ Կովկասեան Հայերի մէջ վաղուց արդէն դարձել է մի հասարակաց խօսք։

Ես չեմ կամենում խօսել, Նորին բարձր Սրբազնութեան եւ իմ գործերի մասին Հայոց Ուսումնարանի լուսաւորութեան համար, այս գործի դատաստանը ոչ ինձ է տուած եւ ոչ նրան, վասն զի մենք երկուսս եւս ենթարկուած ենք դատաստանի, եւ ապա հասարակաց դատողութեանը։ Ահա ես ճշմարիտ փաստերով կը պատմեմ իմ հրաժարման պատճառն ուսումնարանից, որ Սրբազան Սարգիսն կամեցել է աղաւաղել։

Ինչպէս Սարգիս Արքեպիսկոպոսին, նոյնպէս եւ բոլոր Ուսումնարանի հետ յարակցութիւն ունեցող անձանց յայտնի է, որ ես Ներսէս Կաթողիկոսի մահից յետոյ, տեսնելով Ուսումնարանի եւ Եկեղեցւոյ դէմ վեր կացած մրրիկը, Ուսումնարանը թողնելու ցանկութիւնս ցոյց տուի. վասն զի Ներսէս Կաթողիկոսի մահուամբ, որոյ կամքով ես իրաւունք էի ստացած ուսումնական մասը կառավարել, վերջացաւ եւ իմ իրաւունքս։ Երբ կամենում էի ես ուսումնարանից հեռանալ Հոգաբարձուքը ուղարկեցին ինձ մօտ, ըստ տնօրէնութեան Ն. բարձր Սրբազնութեան, պատուելի աւագ ուսուցիչ Կարինեանցի ձեռքով իրանց օրագրի պատճէնը, որ է այս հետեւեալը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երբ Ն. Սրբազնութիւնը Սարգիս արքեպիսկոպոսն եւ Ասպետն Ս. Պետերբուրգից վերադարձաւ, Ն. Վեհափառութիւնն, Ներսէս Կաթողիկոսն ամենայն Հայոց առաջարկեց Հոգաբարձուաց նոր Կարգադրութիւն կազմել եւ աշակերտաց հասկացողութեան համաձայն նորանոր ուսմունքներ եւ դասեր աւելացնել։

Ն. Բարձր Սրբազնութիւնն ըստ առաջարկութեան Ն. Վեհափառութեան, խորհուրդ կազմեց Հոգաբարձուաց, Ուսումնարանի Տեսուչ Պետրոս Շանշեանցի եւ աւագ ուսուցիչ Յակոբ Կարինեանցի եւ Միքայել Պատկանեանցի հետ եւ համաձայն ուսումնարանի ներկայ դրութեան կարգաւորեց այսպէս։ Նախ, որ Ուսումնարանի մէջ այս տարուանից ուսանելի առարկայքը լինին այս հետեւեալները։

1. Ընթերցանութիւն եւ գրութիւն Հայոց եւ Ռուսաց լեզուի:

2. Քրիստոնեական ուսմունք ըստ դասաւանութեան Հայոց Եկեղեցւոյ:

3. Հայոց լեզու:

4. Ռուսաց լեզու:

5. Գաղղիացւոց լեզու:

6. Մատեմատիքա:

7. Աշխարհագրութիւն:

8. Ընդհանուր պատմութիւն:

9. Եկեղեցական պատմութիւն:

10. Եկեղեցական երգեցողութիւն ըստ ծիսից Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Երկրորդ համաձայն ընդհանուր կանոնաց, ուսումնական մասի վերահասութիւնն, այսինքն բաժանումն վերոյիշեալ առարկայից դասատանց մէջ, ընտրութիւն դասական ձեռնարկութեանց, Տեսչութիւն ուսման ուղիղ ընթացման եւ աշակերտաց բարոյականութեան, ընդունելութիւն եւ արձակումն երբեւեկ աշակերտաց յանձնւում է ուսումնարանի տեսչին: Իսկ եթէ հարկաւոր լինի նոր կանոն հաստատել ուսուցչաց արձակման եւ ընդունելութեան համար, ուսանելի առարկայից յաւելացնելու կամ պակասեցնելու համար եւ կամ նոր դասատան համար այն ժամանակ ըստ նայեցողութեան Հոգաբարձուաց կազմել առանձին խորհուրդ ուր հրաւիրել Տեսչին, աւագ վարժապետաց, կամ թէ *որ եւ իցէ մի ոմն*, որին հոգաբարձուք կուզեն, եւ այսպիսի դեպքերումը վարուիլ ըստ հաստատեալ կանոնաց Ն. Վեհափառութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց: Երրորդ վարժապետաց ռոճկի մատակարարութիւնը լինի այսպէս: Նախակրթարանումը եւ առաջին դասարանը երեք ժամի համար 50 կոպէկ. Երկրորդ դասատանը երկու ժամի համար 70 կոպէկ. Երրորդ եւ միւս դասատաններումը երկու ժամի համար 1 ռուբլի, 30 կոպէկ. Չորրորդ, շաբաթը երկու անգամ դաս տալ աշակերտաց Եկեղեցական երգեցողութիւն, Սաղմոս, Շարական եւ ուրիշ ամենահարկաւոր Եկեղեցական առարկայք: Այս վերջին առարկայի դասատուութիւնը յանձնել մի հոգեւոր անձի:

28 Դեկտեմբեր 1856 ամի Ն. բարձր Սրբազնութիւնը ռուսումնարանի Հոգաբարձուաց ներկայացրին այս կարգադրութիւնը Ն. Վեհափառութեան նկատողութեան եւ հաստատութեան համար: Ն. Վեհափառութիւնը, Կաթողիկոսն ամենայն Հայոց, կարդալով բարեհաճեցաւ տալ իրան կատարեալ յօժարութիւնը այսպէս, որովհետեւ մեր ռուսումնարանը Հոգեւոր է եւ Ազգային. վասնորոյ եւ առարկայից դասատուութիւնը պէտք է լինի այսպէս, որ բաց 'ի Եկեղեցական երգեցողութիւնից, այս դաս տալու առարկայից կէսը լինի Հայոց լեզուաւ, միւս կէսը, այսինքն $^2/_3$ մասը Ռուսաց եւ $^1/_3$ Գաղղիացւոց լեզուաւ եւ հրամայեց 'ի կատար ածել այս վերոյիշեալները եւ Յունվարի 2 ից 1857 ամի, սկսվեցան հարցաքննութիւններ ռուսումնարանի մէջ եւ այնուհետեւ փոխադրութիւնը դասատունից դասատուն: *Կարգաւորեցին.* այս օրագրութեան պատճէնը յանձնել Ռուսումնարանի Տեսուչ Շանշեանցին եւ խնդրել նրանից տնօրինել եւ կատարել այս բոլոր վերոյիշեալ կարգադրութիւնները եւ ապա բաժանումն առարկայից եւ ռուսուցչաց հաստատութիւնը մեզ հաղորդել:

Ի 16 Յունվարի 1857 ամի
Թիֆլիզ:

Հոգաբարձուք՝ Ա. ԹԱՑԻՐԵԱՆՑ
Դ. ԽԵՐՕՏԻՆԵԱՆՑ
Ե. ՄԱՆՏԻՆԵԱՆՑ

Երկու փաստ այս թղթի մէջ լինէ շատ զարմացրին. նախ, որ Ռուսումնարանի խորհրդի մէջ էլ-էլ՝ որ է՝ նոր է՝ անդամն անդամ խորհրդակցութեան համար: Երկրորդ, որ առարկայից դասատուութիւնը, որք միշտ եղել էին Հայոց լեզուաւ, այժմ բաժանվեցան երկու մասն. մէկ մասն այս առարկաների նշանակվեցաւ դաս տալ Հայոց լեզուաւ. մէկ երկրորդ մասիցն երկու երրորդ մասն Ռուսաց լեզուաւ. եւ մէկ երրորդ մասը Գաղղիացւոց լեզուաւ, եւ այս բոլորը յանձնուեցաւ լինէ ընդդէմ խղճմտանաց, որպէս թէ Ներսէս Կաթողիկոսի հրամանն է, որոյ մշտական ցանկութիւնը, ինչպէս բոլորեցունց յայտնի է, եղել է այն, որ բոլոր առարկայից դասատուութիւնը լինի Հայոց լեզուաւ: Միւս օրը ես խնդրեցի պատուելի Կարինեանցից յետ տալ այն պատճէնը Հոգաբարձուաց եւ ասել նրանց եւ Ն. բարձր Սրբազնութեանը, որ առաջին դասատուութեան ձեւափոխելը նախատինք է հանդուցեալ Ներսէս Կա-

Թողիկոսի յիշատակին։ Երրորդ օրը պատուելի Կարինեանցը բերեց միւս պատճէն Հոգաբարձուաց օրագրութեան, նման առաջնոյն, բայց սրանից հանած էին վերոյիշեալ երկու յօդուածը, այսինքն, Ի անյայտ անձին խորհրդի մէջ լինելը, եւ Ռուսաց լեզուաւ առարկայից դասատուութիւնը։ Ահա այն օրագրի պատճէնը։

ՁԵԿՈՒՑՈՒՄՆ

Երբ Ն. բարձր Սրբազնութիւնը Սարգիս Արքեպիսկոպոսն եւ Ասպետն Ս. Պետերբուրգից վերադարձաւ, Ն. Վեհափառութիւնն, Ներսէս Կաթողիկոսն ամենայն Հայոց, առաջարկեց հոգաբարձուաց ըստ տնօրէնութեան Ն. բարձր Սրբազնութեան՝ նոր կարգադրութիւնը կազմել եւ աշակերտաց հասկացողութեան համաձայն նորանոր ուսմունքներ եւ դասեր աւելացնել։ Ն. բարձր Սրբազնութիւնը ըստ առաջարկութեան Ն. Վեհափառութեան, խորհուրդ կազմեց Հոգաբարձուաց. Ուսումնարանի Տեսուչ Պետրոս Շանշեանցի, աւագ ուսուցիչ Յակոբ Կարինեանցի եւ Միքայէլ Պատկանեանցի հետ, որոյ մէջ, համաձայն ուսումնարանի ներկայ դրութեան կարգաւորեցին այսպէս։ Նախ որ Ուսումնարանի մէջ այս տարուանից ուսանելի առարկայքը լինին այս հետեւեալները։

1. Ընթերցանութիւն եւ գրութիւն Հայոց եւ Ռուսաց լեզուաւ։
2. Քրիստոնեական ուսմունք ըստ դաւանութեան Հայոց Եկեղեցւոյ։
3. Հայոց լեզու։
4. Ռուսաց լեզու։
5. Գաղղիացւոց լեզու։
6. Մատեմատիկայ։
7. Աշխարհագրութիւն։
8. Ընդհանուր պատմութիւն։
9. Եկեղեցական պատմութիւն։
10. Եկեղեցական երգեցողութիւն ըստ ծիսից Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Երկրորդ, համաձայն ընդհանուր կանոնաց ուսումնական մասի վերնասութիւնը. այսինքն բաժանումն վերոյիշեալ առարկայից դասատանց մէջ, ընտրութիւնը դասական ձեռնարկութեանց, տես-

ջուրիւնը ռուսման ուղիղ ընթացման եւ աշակերտաց բարոյականութեան, ընդունելութիւն եւ արձակումն երբեւեկ աշակերտաց յանձնուում է Ռուսումնարանի տեսչին: Իսկ եթէ հարկաւոր լինի նոր կանոն հաստատել, ուսուցչաց արձակման եւ ընդունելութեան համար ուսանելի առարկայից աւելացնելու կամ պակասեցնելու համար եւ կամ նոր դասատուն բանալու համար, ըստ նայեցողութեան Հազարարմուաց կազմել առանձին խորհուրդ, ուր հրաւիրել Տեսչին աւագ վարժապետաց . . . . եւ այսպիսի դեպքերումը վարուիլ ըստ հաստատեալ կանոնաց Ն. Վեհափառութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց: Երրորդ վարժապետաց ռոճկի մատակարարութիւնը լինի այսպէս: Նախակրթարանումը եւ առաջին դասատանը 5 ժամի համար 50 կոպէկ. Երկրորդ դասատանը 2 ժամի համար 70 կոպէկ. Երրորդ եւ միւս դասատաններումը 2 ժամի համար 1 ռուբլի 50 կոպէկ. Չորրորդ, շաբաթը երկու անգամ դասատալ աշակերտաց Եկեղեցական երգեցողութիւն, Սաղմոս, Շարական, եւ ուրիշ ամենահարկաւոր Եկեղեցական առարկայք, այս վերջին առարկայի դասատուութիւնը յանձնել մեկ հոգեւոր անձի:

28 Դեկտեմբեր 1856 ամի Ն. բարձր Սրբազնութիւնը ռուսումնարանի Հոգաբարձուաց հետ ներկայացրեց այս կարգադրութիւնը Ն. Վեհափառութեանը նկատողութեան եւ հաստատութեան համար: Ն. Վեհափառութիւնը Կաթողիկոսն ամենայն Հայոց, կարդալով, բարեհաճեցաւ տալ իրան կատարեալ յօժարութիւնը այնպէս . . . . եւ հրամայեց 'ի կատար ածել այս վերոյիշեալները եւ Յունվարի 2սից 1857 ամի սկսուեցան հարցաքննութիւններ Ռուսումնարանի մէջ եւ այնուհետեւ փոխադրութիւնը դասատանից դասատուն: *Կարդաւորեցին*: Այս օրագրութեան պատճէնը յանձնել ռուսումնարանի Տեսուչ Շանշեանցին եւ խնդրել նրանից տնօրինել եւ կատարել այս բոլոր վերոյիշեալ կարգադրութիւնները եւ ապա բաժանումն առարկայից եւ ուսուցչաց հաստատութիւնը մեզ հաղորդել:

Ի 16 Յունվարի 1857 ամի

Թիֆլիզ:

Հոգաբարձք՝
ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՑԻՐԵԱՆՑ
ԴԱՒԻԹ ԽԵՐՕԴԻՆԵԱՆՑ
ԵԱԳՕՐ ՄԱՆԴԻՆԵԱՆՑ

Այս վերջին պատճէնի մէջ Հոգաբարձութիւնը եւ Նորին Սրբազնութիւնը առաջարկել էին ինձ, որպէս վերջին կամք Կաթուղիկոսի, լինիլ Տեսուչ եւ ըստ առաջնոյն կառավարել ուսումնական մասը։ Տեսնելով որ իմ մնալը, թէեւ ժամանակաւոր, բայց օգտակար կարող է լինիլ Ուսումնարանին, ես խոնարհեցայ Հոգաբարձութիւնից եւ Նորին բարձր Սրբազնութիւնից ինձ յանձնած Կաթուղիկոսի վերջին կամքին, եւ սկսայ շարունակել ուսման ընթացքը 1857 ամի Փետրուարից՝ մինչեւ 7 Հոկտեմբեր նոյն տարուայ։ Երբոր Նորին բարձր Սրբազնութիւնը թեմական առաջնորդութիւն ընդունեց, ես լսեցի, որ հարեւանցի պատմում է որ մտադրութիւն ունի ուսումնարանումը նոր կարգադրութիւն առնել։ Բայց որովհետեւ ուսումնարանի առաջին կարգադրութիւնն այս բոլոր դէպքերումը մնացել էր անխախտ, վասն որոյ ես համաձայն իմ ուղղութեան, այս հարեւանցի լուրերին չտուեցի ոչինչ նշանակութիւն, վասն զի ուղղակի եւ անձամբ անձին նոր Առաջնորդն չէր հաղորդում ինձ։ Նորին բարձր Սրբազնութիւնը, կարծես, տեսնելով, որ ոչինչ նշանակութիւն չեմ տալի նրա հարեւանցի ասածներին Ուսումնարանի փոփոխութեանց մասին, Հոկտեմբեր 7 ին խորհրդակցութեան կոչեց իր մօտ յայտարարութեամբ Էջմիածնայ Սինոդի Պրոկուրոր պատուելի Միրաքեանցին, ինձ, Հոգաբարձուացն եւ աւագ վարժապետաց։ Այս խորհրդի մէջ Ուսումնարանի նախասահմանեալ կարգաց փոփոխութեանց համար, ես նրան յայտնեցի, որ իմ կարծիքով, պէտք է հետեւիլ Ուսումնարանի մէջ եղած կանոններին, որ տուել էին ինձ հոգաբարձութեան օրագրութեան պատճէնով, որպէս վերջին կամք հանգուցեալ Կաթուղիկոսի՝ մինչեւ նոր Կաթողիկոսի ընտրութիւնը։ Նա կարծես թէ, մոռացել էր, ինչ որ ասել էր ինձ այս բանի համար։ Զէ, Նորին բարձր Սրբազնութիւնը չէ կարող մոռանալ, ինչ որ ինձ պատասխանեց Պրոկուրորի, Հոգաբարձուաց եւ աւագ վարժապետաց ներկայութեանը, այնպիսի խօսքերը չեն մոռացուիլ, որպէս մէկ քար ընկած են նորա հոգւոյ վերայ։ Նա ինձ ասաց. «այն կոբֆարբոնիները, որ նա Հոգաբարձուաց հետ, օրագրութեան պատճէնի մէջ տուել է ինձ, որպէս վերջին կամք հանգուցեալ Կաթուղիկոսի, ոչ թէ նրա կամքն է, այլ սոսա»։ Զհաւատալով իմ ականջներիս նրան հարցրի, Սարգիս եպիսկոպոս, միթէ այն թուղթը, որ տուիք ինձ Հոգաբարձուաց հետ, որպէս վերջին կամք Կաթուղիկոսի, սուտ էր, Այո, պատասխանեց նա սաստիկ դունատիսուելով. «Այո, Նա ոչ ինչ Կաթուղիկոսի կամքն էր, այլ սոսա»։ Ցեռոց նա յանդիմանութեամբ դարձաւ դէպի Հոգաբարձուքը. «Ահա ինչ կը նշանակէ առանց հե-

ռատեսութեան բան բռնել »։ Ի հարկէ, նա նրանցից պատասխան չստացաւ, ինչպէս պատից։ Բայց թէ եպիսկոպոսի խօսքերը յանդիմանեցին արդեօք Հոգաբարձուներին թէ Հոգաբարձուաց լռութիւնը եպիսկոպոսին, այս բանի քննութիւնը ինձ չէ վերաբերում։ Սրանից յետոյ առաջարկեցի ես Նորին բարձր Սրբազնութեան՝ առնել ուսումնարանի մէջ, ինչ որ իրա կամքը կտայ, ինչպիսի կարգադրութիւն էլ կամենայ թող մտցնէ եւ մնաս բարի ասելով, դուրս եկայ նրա մօտիցը։ Իմ դուրս գալուց յետոյ, միւս օրը, Պրօկուրօրն ինձ ասաց, որ Նորին բարձր Սրբազնութեան սիրտը շատ նեղացաւ ձեր դուրս գալուց յետոյ։ Ի հարկէ պէտք է երկաթէ մարդ լինէր, որ չկոտրուէր այս խօսքերը ասելուց յետոյ։ Հանգուցեալ Կոնդակոսի կամքը սուտ էր։

Այսպիսի ծանր խօսքերից յետոյ, ինձ համար մէկ միջոց էր մնում միայն, այսինքն թողնել ուսումնարանը, որ տեղ իմ երկար մնալը ոչ թէ օգտակար կը լինէր, այլ վնասակար, վասն զի կը ծածկէր Սարգիս եպիսկոպոսի արած փոփոխութիւնները։

Միւս օրը պատուելի աւագ վարժապետ Պատկանեանցին յանձնեցի յայտնել Նորին Սրբազնութեանը, որ ես մեր երեկեան խորհրդի մէջ արած խօսակցութիւնից յետոյ, թողնում եմ Ուսումնարանը։ Մեր խօսակցութեան միւս օրը ես փոխուեցայ իմ վարձած տունը, եւ երեք ամսից յետոյ ցաւելով թողեցի իմ հայրենիքը, որ աւելի արձակ իրաւունք տամ Նորին բարձր Սրբազնութեանը գործ դնել իր նոր դաղափարները, Հայոց մանուկների լուսաւորութեան համար եւ հասարակութեանը կարողութիւն տալ, ճանաչել իր հոգեւոր եւ բարոյական օգուտների բարեկամներին եւ թշնամիներին։

Նախ քան իմ Թիֆլիզից դուրս գնալը ես գրեցի Էջմիածնայ Սինօդին այս հետեւեալ յայտարարութիւնը։

Ի ՍԻՆՕԴՆ ՀԱՅՈՑ ԷՋՄԻԱԾՆԱՅ

Ի Նախկին Տէրէն Տփխոյ Հայոց Հոգեւոր Ուսումնարանէ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տփխիսու Հայոց Հոգեւոր Ուսումնարանի հոգաբարձուքը 1851ին ինձ նամակով յայտնեցին որ Ն. Վեհափառութիւն, Կաթողիկոսն ամենայն Հայոց Ներսէս, հրամայել էր իրանց, հրաւիրել ինձ Պետերբուրգից եւ յանձնել Տեսչութիւնը, տալով ինձ լիովին իշխա-

նութիւն ռուսումնարանի ռուսումնական մասին մէջ, եւ այս պատճառաւ իսկ հրաւիրեցին ինձ գալ Տփխիս եւ կատարել Տեսչի պաշտօն: 1853 եւ 1854 թուի ռուսումնական հարցաքննութեանց մէջ Ն. Վեհափառութիւնը ներկայ գտնուեցաւ եւ ցոյց տուաւ իր լիովին բաւականութիւնը:

Սրանից յետոյ Ն. Վեհափառութիւնը կամեցաւ աւելացնել դաս տալու առարկաները, բայց նրա կամքը մնաց անկատար մինչեւ իրան մահը: Ն. Վեհափառութեան մահուանից յետոյ, ես կամեցայ թողնել Տեսչութեան պաշտօնը, բայց Հոգաբարձուքը ուղարկեցին ինձ իրանց օրագրութեան պատճէնը Փետրվար ամսին 1857 ամի, որոյ մէջ նշանակել էին դաս տալու առարկաները եւ տեսչի իրաւունքը, եւ յիշած էր, որ սորա մէջն է կայանում Կաթողիկոսի վերջին կամքը, որն որ Ն. Վեհափառութիւնը անձամբ յայտնեց ինձ 'ի ներկայութեան Ն. բարձր Սրբազնութեան Սարգիս Արքեպիսկոպոսի: Տեսնելով որ այս վերջին կարգադրութիւնը համաձայն է վերոյիշեալ Հոգաբարձուաց ժամանակի հետ եւ օգտաւէտ ռուսումնարանի համար, կրկին սկսեցի շարունակել իմ աշխատանքները, եւ նոյն իսկ օրից կատարում էի Տեսչի պաշտօն, մինչեւ Հոկտեմբեր 7ն նոյն տարուայ: Սարգիս Եպիսկոպոսը կազմեց իր մօտ խորհուրդ, հրաւիրեց Հոգաբարձուաց, աւագ ուսուցչաց, Էջմիածնայ Պրակուրոր պատուելի Յովհաննէս Եսայեանն Միրաքեանցին, եւ ինձ, եւ յայտնեց, որ ներկայ ժամանակումս ռուսումնարանի տերը ինքն է, վասնորոյ ցանկանում է մտցնել նրա մէջ նոր կարգ: Ն. բարձր Սրբազնութեան առաջարկութեանը ես պատասխանեցի ասելով, ինչ որ վերաբերում է ռուսումնական մասին, դրա համար արդէն կանոն կայ սահմանած, որն որ ինչպէս յայտնի է Ն. բարձր Սրբազնութեանը, նոյնպէս եւ Հոգաբարձուաց բայց նա չհամաձայնեցաւ եւ սկսեց կարդալ իրա գրած նոր կարգադրութիւնը: Որովհետեւ ինձ յայտնի էր հոգին եւ ուղղութիւնն նոր կարգադրութեան, ես այլ ևս օգտաւէտ չհամարելով իմ տեսչութիւնն ռուսումնարանին, միւս օրը աւագ ուսուցիչ Միքայել Պատկանեանցի միջնորդութեամբը յայտնեցի նրան, որ ես թողնում եմ Ռուսումնարանը:

Որովհետեւ վախճանած է Կաթողիկոսն, որի հետ ես ունեի հաղորդակցութիւն ռուսումնական մասին վերաբերուած գործերի համար, վասնորոյ պատիւ ունիմ այս ամենը 'ի գիտութիւն Սինոդիդ հասուցանել, եւ սրա հետ ուղարկելով մի պատճէն, որք տուած են ինձ Հոգաբարձութենից, խնդրում եմ ստանալուց յետոյ վերադարձնել ինձ 'ի Տփխիս իմ բնակած տեղը:

1857 ամի. 'ի Տփխիս:

Պ. ՇԱՆՇԵԱՆՑ

Նամակի պատճէնը:

Ողորմած Տէր.

Պետրոս Սամուէլեան.

Սրանից մի քանի ամիս առաջ մենք պատիւ ունեցանք գրել առ Աղաֆօն Դաւթեանն, նրա Պետերբուրգ եղած ժամանակը, որ նա աշխատութիւն յանձն առներ առաջարկել Ձեզ այս տեղ Հայոց Հոգեւոր Դպրոցի Տեսչութիւնը: Այժմ Աղաֆօն Դաւթեանն հաղորդեց մեզ Ձեր համաձայնութիւնը, որի համար եւ մենք պատիւ ունեցանք իսկոյն առաջարկել Կաթողիկոսի բարեհաճութեանը: Ն. Վեհափառութեանը հաճելի եղաւ յայտնել իր համաձայնութիւնը լի գովասանութիւններով առ Ձեզ:

Բաջ հանաչելով Ձեզ, մենք հաւաստի ենք, որ դուք չէք դադարիլ աշխատել այս դպրոցը ծաղկեցնելու. Դպրոցը, որ ցայժմ պահում է մեկ քաղցր յիշատակ, այն յառաջադիմութեանց համար որ դուք մեծ յաջողութեամբ ցոյց տուիք կարճ միջոցում Ձեր այս տեղ գտնուած ժամանակը, Դուք շատ լաւ գիտէք, որ ռուսումնախնդիր պատանիքը, ամենայն կերպով պատրաստ են արժանի լինել Ձեր անխոնջ հոգացողութեանը: Դովելի ջանասիրութիւն, մեծ ընդունակութիւն, եւ կատարելագործվելու ցանկութիւն. այս ամեն կատարելութիւնները գտնւում են այս եռանդուն պատանեաց մէջ, պակաս է միայն մի արժանաւոր դաստիարակ, որ կարողանար այն պատանեկաց ջանասիրութիւնը եւ յառաջադիմութիւնը իր իսկական նպատակին հասցնել:

Մեր հոգաբարձուացս կողմանէ Դուք կը գտնէք ամենաջերմե-

ռանդօրէն գործակցութիւն, մենք երբէք մտադիր չենք արգելք լինել Ձեզ, եւ Ձեզ կառաջարկուի լիակատար արտօնութիւն գործելոյ ըստ ուսումնական մասին, ինչպէս դուք բարեհաճիք: Մենք չենք կասկածում այս ազատութիւնը տալ Ձեզ, լինելով վստահ Ձեր բարի նպատակի վերայ:

Ձեր այստեղ գալու ճանապարհի ծախուց համար ըստ չափու կարողութեան մենք գումարենք նշանակում 500 մանեթ, իսկ ռոճիկը կը մնայ նոյնը, այսինքն՝ 500 մանեթ, բաց 'ի սրանից, դուք կունենաք օրինաւոր սենեակ իրեն վառելիքովը:

Պատիւ ունիմ մնալ մտերիմ յարգանօք եւ խորին անձնանուիրութեամբ Ձեր խոնարհ ծառայք.

18 Նոյեմբեր 1851 ամի

Տփխիս:

ԴԱՒԻԹ ԹԱՄԱՄՇՈՎ.
ԴԱՒԻԹ ԽԷՐՕԹԻՆՈՎ.
ԵԱԳՕՐ ՄԱՆԴԻՆՈՎ.

Նորին բարձր Սրբազնութիւնը կարող է տեսնել, որ ես չեմ յիշել այն խօսքերը, որ նա ինձ ասաց խորհրդի մէջ 7 Հոկտեմբերի: Այժմ եւս չէի գրելու, եթէ որ նրա նամակը ուղիղ պատմել էր իմ հրաժարումն Ուսումնարանից, եւ չստիպէր ինձ պատասխանել: Ահա այս է ճշմարիտ պատճառ իմ հրաժարման Ուսումնարանից եւ ոչ թէ Ս. Եպիսկոպոսի առաջարկութիւնը, որպէս թէ նա ինքն է կամեցել կրօնագիտութիւնն ուսուցանել, եւ ես այս բանին չհամաձայնելով, թողել եմ Ուսումնարանը: Ն. բարձր Սրբազնութիւնը սխալվել է, կարելի է նա այս բանս ուրիշին է ասել, բայց ինձ բան չէ ասած: Ն. բարձր Սրբազնութիւնը ձեռքը սրտին դրած՝ չէ կարող Շանշեանի կոնտրակտը անուանել հասարակութեան ընդդիմութիւնն իր դէմ, որ բարձրացաւ Ներսէս Կաթողիկոսի յանկարծահաս մահուամբ: Իրաւունք չունի Ս. Եպիսկոպոսն հասարակութեան ընդդիմութիւնը եւ աբտունջը այսպէս մեկնել, ասելով «Ուրիշ պատճառ չկար, բացի Շանշեանցից»:

Վերցնենք օրինակի համար, նոյն իսկ նրա վարմունքը Թիֆլիզու հասարակութեան հետ, որն որ ներկայացաւ նրան ինչպէս մէկ թեմական վիճակաւորի, խնդրելով նրանից՝ հաչիւ պահանջել Ուսումնարանի Հոգաբարձութենէն: Ի՞նչպէս վարուեցաւ նա այս գործի մէջ: Նա փոխանակ վարուելու ինչպէս հովիւ բոլոր ժողովրդեան, ինչպէս մէկ ճշմարտասէր անձն, ըստ պահանջման հա-

սարակութեան, սկսեց վարուիլ իբրեւ մի կուսակցութեան անդամ։ Նա պէտք էր համաձայն օրինաց եւ կամաց հասարակութեան, պահանջէր, ժողովրդից ընտրած մարդկանց հետ, հոգաբարձուներից կատարեալ հաշիւ, նրանց կառավարութեան համեմատ, եւ ոչ թէ զանազան պատճառներով պաշտպանէր նրանց իշխանութիւնը, որն որ, բոլոր աշխարհքի օրէնքով պէտք էր վերջանար մահուամբ իրանց յանձնող Ներսէս Կաթողիկոսի։ Հոգաբարձուները իրանց կողմից պարտական էին հաշիւ տալ նրան, եւ հասարակութենից ընտրեալ մարդկերանց, իրանց կառավարութեան համար, եւ ինչպէս պատուաւոր քաղաքացիք, վերցնել իրանցից այն կոչումը եւ յանձնել ժողովրդեան միւս անդամներին, եւ այս կերպով ազգային անվարձ ծառայութեան ծանրութիւնը չէր ընկնիլ միայն մի քանիսի վերայ, այլ բոլորեցունց։ Եւ այսպէս իւր հոգաբարձուաց հետ ունեցած սաստիկ կողմնապահութեամբը, ոչ հասարակութեան ձայնին ուշ դարձրեց եւ ոչ օրինաց։ Ն. Սրբազնութիւնը ամենատեսակ խորամանկութեամբ աշխատեց յարատեւելու հոգաբարձուաց իշխանութիւնը, ընդդէմ Էջմիածնայ Սինոդի շարունակ հրամաններին, որ պահանջում էր, առնել նրանցից կատարեալ հաշիւ կառավարութեան եւ հրաժարեցնել հոգաբարձութենէ։ Ի՞նչպէս չհասկացաւ, որ հասարակութիւնը չէր կարող չը նեղանալ նրա կողմնասէր վարմունքից, եւ ցոյց տալ իրան անբաւականութիւնը, որն որ 'ի զուր անուանում է Շանչիական կուսակցութիւն։

Քաւ լիցի մեկնել նրա այս արարմունքը չահասիրութեամբ. ոչ, այսպիսի միտքը չատ հեռի է թէ լինձանից, թէ նորանից. ոչ, Ն. Սրբազնութիւնը կարօտանում էր հասարակաց կարծիքին, որն որ, վեր կացաւ նրա դէմ Ներսիսի յանկարծական մահուանից յետոյ, զարհուրելի տեսլեամբ։ Նա կամենում էր հոգաբարձուաց միջոցաւ դրաւել հասարակութեան սիրտը, բայց սաստիկ սխալվեցաւ. նորա կողմնասիրութիւնը առ հոգաբարձուս, իրան առաւել ցածացրին հասարակաց կարծեաց մէջ։ Շատ կարելի է, որ իմ Ուսումնարանից դուրս դալս էլ ազդեցութիւն ունեցաւ հասարակաց կարծեաց վերայ, որ յարուցած էր նրա դէմ. բայց միայն դրա մէջ չէր պատճառը, այդ պատճառը չատ հեռի տեղ պէտք է որոնած, խորը տէտք է թափանցած Ներսէս Կաթողիկոսի կենաց վերջին օրերի փոփոխութեան մէջ առ Սարգիս եպիսկոպոսը։

Այժմ ներեցէք հարցնելու Նորին բարձր Սրբազնութեանը, թէ այդ ո՞ւմ անունով է թեթեւամտաբար անուանում իմ կրօնագիտութեան դասերը հերետիկոսութիւն։ Աւետարանի անուամբ արդեօք, նա չի կարող դտնել նորա մէջ եւ ոչ մի խօսք, որ չքարո-

զէ մեր Փրկչին Աստուածային յաւիտենականութիւնը, եւ սրբութիւնը։ Հայոց Եկեղեցւոյ անուամբ արդեօք, ինչով է կարծում ինքն իրան աւելի հարազատ քան ինձ եւ ուրիշներին։ Ի՞նչպէս հոգեւոր անձն արդեօք։ Նա պէտք է յիշէ այն Լատինացւոց խմաստալից առածը, թէ «վէճարը վարդապետ չէ չինում»։ Իմ դասախօսութիւններս յայտնի էին ոչ թէ միայն աշակերտները, այլ եւ ուրիշ աշխարհական եւ հոգեւորական այցելու անձինք. իմ դասախօսութիւններս յայտնի էին եւ Ներսէս Կաթուղիկոսին, որ երկու անգամ ներկայ գտնուեցաւ հրապարակական հարցաքննութեանց եւ ծանօթացաւ նրանց բովանդակութեանցը։ Այս դասախօսութեանց հոգւով դաստիարակուած էին այն աշակերտները, որոնք իւրեանց քարոզներով ուրախացնում էին Ներսէս Կաթուղիկոսին եւ Ազգին։ Այս աշակերտաց կենաց եւ յառաջադիմութեան համար էր, որ Ներսէս Կաթուղիկոսը բարձրացրեց չամպանեայ գինւոյ լի բաժակը եւ օրհնեց նրանց 'ի ներկայութեան Հոգաբարձուաց, աւագ ուսուցչաց եւ օտար անձանց ասելով. «Ազգի համար չատ մեծ մարդիկ կը լինին»։ Միւս անգամին երբ լսեց այս աշակերտաց քարոզները, ասաց Վեհապետեան Գէորգ Եպիսկոպոսին։ «Ջուրը թափուենք, Գէորգ Եպիսկոպոս, ինչ են ասում այս փոքրիկ տղերքը»։ «Ա՛խ, Գեւորգ, ասաց նա նոյնպէս ինձ, աշակերտաց քարոզը վերջանալից յետոյ. Եթէ երեսուն տարի առաջ սկսել էինք այս բանս, որչափ յառաջ գնացած պէտք է լինէր մեր Ազգը»։ Ահա այս աշակերտաց եւ սրանց նմանների համար է, որ Սարգիս Արքեպիսկոպոսը ասում է իր նամակի մէջ, «Հաղիւ հաղ կարողացայ ցրել նրանց»։

Քրիստոնէական ճշմարտութիւնն էր միշտ հիմն այն դաստիարակութեան, որ ես մտցրի ուսումնարանի մէջ։ Դաստիարակութեան դրօշն է մարդոյն հասցնել իր կոչմանը, եւ կատարելագործել նրա կեանքը։ Սրա համար էլ եւ իմ բոլոր ուշադրութիւնս դարձրած էր դէպի աշակերտաց հոգեւոր բարոյական կողմը, միտք բերելով այն առածը թէ, «Առողջ դատողութիւնը՝ առողջ մարմնոյ մէջ»։ Այս բարձր նպատակին հասնելու համար ես ընտրեցի այն ճանապարհը, որն որ միայն տանում է դէպի մեր Փրկիչը։ Այս այն սիրոյ ճանապարհն էր, որ հաւասարում էր ինձ նրանց հետ, եւ ես, որպէս ընկեր, որպէս նրանց մեծ եղբայր, գնում էի նրանց հետ դէպի լոյսը, դէպի ճշմարտութիւնը եւ յաւիտենական կեանքը, ունելով միշտ իմ աչքիս առաջը այն խաչը, որոյ վերայ մեր Փրկիչը մօտ 19 դարէ գիրկը բացած, կանչում է աշխարհիս որդւոցը գրկելու, ինչպէս Աստուածային որդւոցը։ Այս

աչակերտաց համար է, որոնք կրթուած էին մեր Փրկչի ուսման հոգւոյ զօրութեամբ, որ Սարդիս Եպիսկոպոսն ասում է. «Մոլորեալ եւ խմորեալ են եւ որոնց հաղիւ հաղ կարողացայ ցրել»։

Հայոց Եկեղեցին, որպէս Քրիստոսի Եկեղեցի, աղատ է եւ Սուրբ, ու պահվում է եւ պահպանվում այդ խղճի աղատութեամբ եւ իր որդւոց կենաց սրբութեամբ։ Եթէ մէկը, որ եւ իցէ կողմից, կարողանայ սպառնալ մեր Եկեղեցւոյն վտանգ, այս այն մարդկանց կողմից կարող է լինել, որոնք կամենում են նրան իրանց կարճմտութեանը մատնակից առնել։ Եթէ կարողանայ սպառնալ մեր Եկեղեցւոյն վտանգ, այս այն մարդկանց կողմիցն է, որոնք փառքերի պատճառաւ մոռանում են նրա աղատ հոգին, նրանք ոչ տեսնում են, ոչ լսում Պօղոս առաքելոյ փրկարար խօսքերը. «Գիրն սպանանէ եւ հոգին կեցուցանէ»։

Իրաւ, որ մեր Եկեղեցւոյն սպառնում է վտանգ այսպիսի մարդկանցից, որոնք լուսոյ, ճշմարտութեան եւ գիտութեան ամեն մէկ ճառագայթները թափանցելիս ժողովրդեան կեանքի մէջ, վեր են կենում նրա դէմ, եւ առանց խղճմտանաց, մեր եկեղեցւոյ անուամբ հալածում են լոյսը, համարելով իրանց կարճամտութիւնը հաւասար յաւիտենական ճշմարտութեան, որ հաստատուած է Աստուածային յայտնութեան վերայ։ Չէ, Հայոց Եկեղեցին, այս մեր ազգի հոգեւոր հայրենիքը պահվել է եւ պահպանվել ազգովին, հոգեւորականք եւ աշխարհականք կանգնել են մէկը մէկի մօտ, ուսուցել են իրանց փոքրիկ եղբարցը, եւ մեռել են Եկեղեցւոյ յաւիտենական ճշմարտութեան համար։ Վարդանները եւ Ղեւոնդները մէկ տեղ են մխիթարել եւ քաջալերել ժողովրդեանը Աստուածային բանիւ, եւ պատմել նրա յաւիտենական եւ սուրբ փառքը։ Թողնենք անցեալները, նայեցէք, լսեցէք, ինչ աղաղակ է վեր կացել ամենայն կողմից, Եւրոպիոյ եւ Ասիոյ քաղաքներից, գիւղերից եւ խրճիթներից։ Տարածուեցաւ սարսափելի ձայն այս մօտիկ ժամանակներս, որ մեր Եկեղեցւոյ անկախութիւնը վտանգի մէջ է։ Այս աղաղակը ցոյց է տալի, որ մեր ժողովրդեան մէջ կայ մի բարձր բան, փողոցի չահից թանկագին, նրա չահասէր նպատակիցը բարձր, նրա կեանքից վեր, այս նրա համոզմունքն է, նրա Եկեղեցին։ Ի՞նչպէս դեղեցիկ է ժողովրդեան այս արթնանալը, ինչպէս մեծ է այս տեսարանը, որ բոլոր ժողովուրդը թրթռում է մի պարզ կրօնական հարցման համար։ Ի՞նչքան բաղդաւոր է այն ժողովուրդը, որոյ համար այսքան թանկ է կրօնական համոզմունքը, որ ըստ բանի Փրկչին, չէ ապրում միայն հացով։ Ժողովրդեան այս հոգեղութիւնը ցոյց է տալի, որ Հայաստանումը ամենայն փորձ, ամենայն

ցոյց 'ի վնաս Եկեղեցւոյն սատանիկ կը յանդիմանուի մեր բոլոր Ազգէն։ Մինչդեռ օրագիրները կանչում են զգուշացնելով, լսիր, վտանգ է գալի Եկեղեցւոյ անկախութեան համար, կարծես թէ մեր հոգեւորականութիւնը ուխտ է դրել լուռ մնալու. սուս է կենում։ Բայց եթէ հաւատանք Փարիզի եւ Տաճկաստանի լրագիրներին, մեր հոգեւորականութիւնը, ոչ առանց երեւելի բացառութեան, օգնում է Եկեղեցւոյ թշնամեաց, այս կրօնական յեղափոխութեանց մէջ։ Թող լուէ Ն. բարձր Սրբազնութիւնը այս սեպհական իրաւունքը, այս արտօնութիւնը պաշտպանելու համար։ Եկեղեցին ժողովրդինն է, ազգն է պաշտպանել միշտ Եկեղեցին, թէ անցեալում եւ թէ ներկայումս, եւ միշտ պատրաստ է նա պահպանել իր բանիւ եւ կեանքով նորա սրբութիւնը եւ ազատութիւնը։ Եկեղեցւոյ պաշտպան կարծեցեալները լաւ կ'անէին, եթէ ընտելացընէին իրանց աչքերը լուսոյ հետ, եւ չլինէին ամենայն ժամանակ արգելք մեր ազգի լուսաւորութեանը՝ իրանց կարծեցեալ հարազատութեամբ։ Թողնենք այս հնչին հարցմունքը, թէ ով պէտք է պաշտպանէ Եկեղեցին, ով պէտք է լուսաւորէ ժողովուրդը, այս իմ կարծիքով բոլոր հասարակութեան գործն է, եւ ոչ թէ մէկ որ եւ իցէ, հոգեւորական կամ աշխարհական դասի։ Միայն գիտութեան եւ ճշմարտութեան լոյսը, գիտութիւն եւ ճշմարտութիւն տարածելու իրաւունք տուողը նրանք են, որոնք ունին այն լոյսը, որք միայն կանչուած են լուսաւորելու եւ իրանց չորս կողմը տարածելու ճշմարտութեան եւ գիտութեան բարութիւնը։ Այս պատճառաւ էլ վէճերը, որ բացվել են մեր օրագիրների մէջ, թէ ումն է պատկանում ժողովուրդը լուսաւորելու իրաւունքը, հոգեւորականներին, թէ աշխարհականին, այս, կարծեմ, օտար վէճ է, եւ ոչ Հայկական։ Այս վէճը մեր վէճ չէ, նա ծնած է Արեւմուտքումը պատմական անցքերի դրութեամբ, որն որ բաժանեց հոգեւորական օգուտը աշխարհական օգտից։ Այսպիսի հոգեւորականաց եւ հասարակաց շահերի միմեանց հակառակութիւնը, 'ի պատիւ մեր ազգի, երբէք չէ պատահած մեր պատմութեան մէջ։

Շատ դեղեցիկ կ'անէ Սարգիս Արքեպիսկոպոսը, եթէ թողնի այս անարժան ճանապարհը, բամբասանքը, անարգելման եւ անէծքը, այդ մեր Եկեղեցւոյ հոգին չէ, հապա ուրիշ հեռու Եկեղեցւոյ, որն որ բաժանեց իր շահը ազգի շահից եւ թշնամացաւ նորա հետ։ Այս անարգելմանները եւ անէծքները մեր ժողովրդի ձայնի պատասխանը չեն, որ խնդրում է գիտութեան եւ ճշմարտութեան լոյս. մեր Փրկչի ձայնի պատասխանը չեն, որ խնդրում է սիրել իւր թշնամեացը, օրհնել անիծողներին, բարի առնել ատելեաց, եւ ա-

զօթք անել նեղանողների եւ հալածողների համար, լինել կատարեալ որպէս կատարեալ է Հայրն մեր երկնաւոր։

Հոգեւորականութիւնը պէտք է լցուի մեր Փրկչի հոգւով, ապրի նորա կեանքով, տարածէ նորա սիրոյ խօսքը։ Ահա՛ ճշմարիտ ճանապարհը, որով գնացել է եւ պէտք է գնայ հոգեւորականութիւնը, որ կարողանայ հաստատել մեր Փրկչի հետ աշխարհումս Աստուածային թագաւորութիւնը։

Եւ այսպէս՝, կ'ասեմ իմ դատաւորիս, Պօղոս առաքելոյ խօսքերը. «Այլ ինձ եւ այս անարգանք են, եթէ 'ի ձէնջ դատեցայց կամ բնաւ իսկ 'ի մարդկանէ, նա եւ զանձն իմ ոչ քննեմ։ Զի ոչինչ գիտեմ անձին իմոյ, այլ ոչ եթէ այսու արդարանամ, զի որ քննէ զիս՝ Տէր է, որ լուսաւոր առնիցէ զդաղտնիս խաւարի, եւ յայտնիցէ զխորհուրդս սրտից, եւ ապա իւրաքանչիւրոյ գոհութիւն եղիցի յԱստուծոյ»։

Ձերում վեհափառ հայրութեան,

Խոնարհ որդի

ՊԵՏՐՈՍ ՍԱՄՈՒԷԼ ՇԱՆՇԵԱՆՑ

24 Հոկտեմ. 1864 ամի
Ս. Պետերբուրգ։

Այս երկու դրուածքը, կարծիք չեն թողուլ մեր մի փոքր յառաջ ասածի հաստատութեանը, այսինքն Զալալեանց Սարգիս եպիսկոպոսին առաջին և գլխաւոր գործի լինելը Տէրութեան ձեռին, Ներսիսի մահուց յետոյ քանդելու, ինչ որ նա՝ ազգային հոգեւոր Դատխարակութեան համար արել էր։ Թիֆլիզու Ներսիսեան ուսումնարանի այս կերպարանափոխութիւնը Սարգսի ձեռքով՝ մեծ ապացոյց է այս իրողութեան։

Հէնց այս ժամանակէն էլ կ'սկսի Ռուսիոյ Հայոց մանաւանդ նոր սերնդին ազգային հոգին ու զգացմունքը յանկարծ զարթնելն ու գործել կամենալը, և միեւնոյն ժամանակ իր մէջ արգելքների և խափանարարների պատահիլը։ Այս երկու զօրութիւնքը, մինը՝ հոգեկան կամ բարոյական, միւ-

սը նիւթական կամ իշխողական իրար պիտի պատահին Ռուսիոյ այն քաղաքներուն մէջ՝ ուր Հայք մի ժողովուրդ են կազմել իրանց եկեղեցիովն ու դպրոցովը, և իրար պատահելով յառաջ պիտի դան այն երեւելի գործքերն ու անցքերը՝ որոնք մեր հաստատած իրողութեան գոյութիւնը պիտի հաստատեն։

«Արդ՝ մեր նպատակն էլ այդ մեծ իրողութիւնը հաստատող դէպքերը, անցքերը և գործերը ճշդութեամբ խմբագրել է այս յիշատակարանիս մէջ, ինչպէս պիտի տեսնեն մեր ընթերցողք մեր Հանդիսին մէջ»։

ԽՄԲԱԳՐՈՂ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ–ՏՆՕՐԷՆ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ